ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԱՄՍԱԳԻՐ

ԹԻՒ Գ. ՏԱՐԻ ԻԱ. ՄԱՐՏ 31

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ. ԷՋՄԻԱԾԻՆ, Մաղաքիա Եպիսկ. Օրմանեան 133
ՔՐԻՍՏՈՆԵԱՆ *իւր Հանգստանալու ժամերում*, (Թարգ.) Գրիգոր Եպս. Աղափիրեան 141
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ 151
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ, . . . 155
ՇԱՏԻՆՈՒ ՎԱՆՔ, Քաջբերունի. . . 161
ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ Գրիգոր Եպիսկոպոսի Զաքարեանց, ... 175
ԱԶԳԱՅԻՆ. Լուրեր 190
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ 193
ԾԱՆՈՒՑՈՒՄՆ, ... 195
ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՎԱՂՍԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

ՌՅԼԷ—1888

Ա Զ Դ

Տպարանական ժողովը խնդրում է բոլոր գործակալներից շուտով հասցնել "Արարատի" բաժանորդաց ցուցակները, ըստ կարգադրութեան Էջմիածնի Կոնսիստորիայից:

Ի հակառակ դէպս իրանք գործակալները կենթարկուին խիստ պատասխանատուութեան իրանց զանցառութեան համար:

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Անցեալ փետրուար համարի «Տօմարական հաշիւ» յօդուածի մէջ պէտք է սրբագրել հետեւեալ տպագրական սխալները.

Եր.	92.	տող 3	ներքեւից,	ՍԽԱԼ՝	11ը,	ՈՒՂԻՂ՝	21ը
»	»	» 14	»	»	Ղ	»	Դ
»	93	» 1	»	»	8	»	28
»	»	» 2	»	»	3	»	5
»	»	» 11	»	»	ԺԶ	»	ԺԸ
»	94	» 2	վերեւից	»	ԺԶ	»	ԺԶ ԵւԺԷ
»	»	» 3	»	»	ԺԷ	»	ԺԸ
»	»	» 16	ներքեւից	»	որ	»	թէ որ
»	95	» 17	»	»	է	»	Է

ԱՐԱՐԱՏ

ԹԻՒ Գ — ՇՐՋԱՆ ԻԱ. 1888 ՏԱՐԻ ԻԱ. ՄԱՐՏ 31

ԿՐՕՆԱԿԱՆ

ԷՋՄԻԱԾԻՆ.

Գ.

Փոփոխ յարաբերութիւններ ամրապնդելու միջոցները համրած ատեննիս յիշեցինք կանոնները, ժողովները, Թեմերը, ծուխերը, հոգաբարձութիւնները, ծէսերը և նուիրակները, և կարող էինք ուրիշ կէտեր ևս յիշել. սակայն շատ բան յիշելով նպատակի չեմք հասնիր, մինչ քիչ բան գործելով և՛ գոնէ նպատակին կը մօտենամք։ Աշխատիմք ուրեմն խօսքերնիս ամփոփել և մասնաւոր կէտերու վրայ խօսիլ, որ գործադրութեան ճանապարհ բացած լինիմք։ Որովհետև նախընթաց յօ-

դուածով յայտարարեցինք, թէ գործի համար աշխատելը ձեռքին կըպատկանի և ոչ թէ գլխուն, անոր համար կը յուսամք թէ ոչ ոք կարող է զմեզ մեղադրել եթէ կարևոր նիւթերու վերայ խօսելու կը համարձակիմք։

Այս անգամ՝ կանոններու վրայ պիտի խօսիմք։

Կանոն բառը իւր յունական ծագմամբը հանդերձ՝ մեր մէջ կատարելապէս ընիկութեան իրաւունք ստացած բառ է, և իւր բազմատեսակ նշանակութիւններէն առաւել սովորականը եկեղեցական օրէնք ցուցնելն է, ինչպէս և այդ օրէնքներուն հաւաքածոյին ալ կանոնագիրք անուն կու տամք։ Աւետարանի օրէնքները սովորաբար կանոն չեմք կոչեր, այլ աւելի սովորաբար Քրիստոսի հաստատած Եկեղեցւոյն իշխանութենէն բղխած օրէնքներն են, որք կանոն անունով կիմացուին։ Առաքելոց, հայրապետաց, ժողովոց և սուրբ հարց հաստատած և հրամայած կարգադրութիւնները այդ տեսակէն են և թէպէտ ասոնց մէջ ևս զանազանութիւններ կան, սակայն մեր նպատակը գիտնական զննութիւններով և բաժանումներով զբաղիլ չէ։

Եկեղեցական կանոնաց վրայ երկու հիմնական և հաստատուն սկզբունքներ կան, զորս Ուղղափառ Եկեղեցին կընդունի։ Մէկն է հնաւանդ կանոնաց հաւատարիմ պահպանութիւնը, միւսն է ժամանակի պահանջից համեմատ ներողամտութիւնը։ Առաջին սկզբունքը Եկեղեցւոյ բնութենէն է։ Եկեղեցին Քրիստոսական հաստատութիւն է, ամեն հաստատութիւն հիմնադրական կամայ ենթարկեալ է, և ինչպէս Քրիստոս հիմնեց Եկեղեցին, ինչ որ Քրիստոս սորվեցուց առաքելոց, և ինչ որ առաքեալք ուսուցին Եկեղեցւոյ, այն է օրինականը, այն պիտի պահուի հաւատարմութեամբ։ Երկրորդ սկզբունքն ևս Եկեղեցւոյ բնութենէն օտար չէ. Եկեղեցին իբրև մայր գտրովագութ հաստատուեցաւ մարդիկները խնամելու և նոցա տեսակ պէտքերը հոգալու համար, և ուր հարկն ստիպէ՝ նաև նոցա տկարութեանց և կարօտութեանց յարմար դատուած դարմանները պատրաստելու համար։

Այդ երկու սկզբունքներն ևս Եկեղեցւոյ մէջ գործադրուած են. և ինչպէս միշտ, նոյնպէս և այդ առթի մէջ, ուղղութիւն և ճշմարտութիւն ծայրայեղութենէ խորշիլ և արդարակշիռ նժարին մէջ մնալն է։ Այս տեղ հնար էր մեզ ցուցնել, թէ ինչ

կերպով Ուղղափառ Եկեղեցին յարգեց միշտ այդ երկու սկզբունքները և թէ ինչ կերպով այս կամ այն եկեղեցին մէկ կամ միւս սկզբունքէ շեղելով ճշմարտագիծ ուղղութենէն սխալեցան, մանաւանդ երբ ժամանակի պահանջից սկզբունքին հետեւելով՝ հնաւանդութեան սկզբունքը մոռացան։

Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցին, նկատելով որ ժամանակի պահանջից սկզբունքը աւելի և աւելի ընդունակ է մարդկային տկարութեանց դուռ բանալու, և իսկական պահանջ կարծել տալու այն՝ որ լոկ զգայական կամ երևութական պահանջ է, որչափ կարող եղաւ հնաւանդութեան սկզբունքը պինդ բռնեց. և այդ պատճառով, եթէ առ հասարակ քրիստոնեայ եկեղեցիներու կանոնները քննենք, Հայաստանեայց Եկեղեցւոյ կանոններն են, որ ամենէն աւելի հնաւանդ գրութեան, առաքելական հաստատութեան և նախնական պարզութեան կերպարանը կը կրեն։ Եթէ մեր Եկեղեցին չունեցաւ ոչեռոական ճոխութիւն կամ կայսերական փայլողութիւն, սակայն ունեցաւ և ունի առաքելական պայծառութիւն։ Այդ պայծառութիւնը կը ցուցնեն՝ ոչ միայն Հայաստանեայց Եկեղեցւոյ ուղղափառ դաւանութիւնները, այլ և նորա ուղղավայել կանոնները։

Մեր մէջ խօսելով, հարկ է յիշատակենք, թէ ստէպ լսուած է Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ պաշտօնէից և ժողովրդոյ բերնէն. թէ որչափ ալ լաւ լինի հնաւանդութեան սկզբունքին պինդ կենալ, սակայն քիչ ալ ժամանակի պահանջից սկզբունքին կողմը նայելու է. և ասով կուզեն խմացնել թէ Հայաստանեայց Եկեղեցին այդ տեսակէտին հետևողը չէ։ Եթէ այդ կարծիքը պարզ խօսք լինէր թերևս վրան խօսելն ալ աւելորդ լինէր. սակայն դժբաղդաբար երբեմն երբեմն և զանազան տեղեր այդ կարծիքէն բղխած կերպ կերպ դատապարտութիւններ կը տեսնենք, որք ոչ Ս. Եկեղեցւոյն զաւակաց ախորժելի կարող են լինիլ, և ոչ օտարաց շինութիւն պատճառել։ Անհաւասիկ Եկեղեցական կանոններու կողմանէ միութեան յարաբերութիւնները ամրապնդելու հարկը։

Այդ կէտին վրայ մեր կարծիքը այն է, թէ իրաւացի չէ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ կանոններուն նկատմամբ ասել թէ պահանջից սկզբունքէն բոլորովին օտար լինին, և հնաւան-

դութեան սկզբունքի պահպանութեամբ՝ ժամանակի համար անյարմար գտնուին։ Մեր կարծիքը պաշտպանելու համար պէտք էր, որ պահանջից սկզբունքի պաշտպաններուն յառաջ բերած դժուարութիւնները մի առ մի յիշէինք, իւրաքանչիւրին իմաստն ու արժէքը ճշդէինք, և յետոյ լուծումը տայինք. սակայն այդ ճանապարհը մեզ շատ երկար կը տանի, մինչ մենք համառօտ յօդուածներ կը գրեմք,—առ այժմ—և ոչ ընդարձակ ուսումնասիրութիւններ։

Բայց գոնէ համառօտ խորհրդածութիւն մը ընեմք։ Պահանջից սկզբունքին հետևող եկեղեցին, գլխաւորապէս Լատինական եկեղեցին է։ Սա կարծելով ժամանակին պահանջը յարգել և նորութեանց սաստիկ տենդէ բռնուած, դաւանութիւն է որ կը շատցնէ, կանոն է որ կը դիզէ, և վերջին դարերում կատարուած յաւելուածներուն ներքև՝ հնաւանդ և առաքելաւանդ դրութիւնը թաղուած ու կորած է։

Ի՞նչ օգուտ ունեցաւ այդ սկզբունքէն, բայց եթէ այն դժբաղդ հետևանքը, որ այսօր իւր ժողովուրդները անլուծանելի հակառակութեանց ներքև ճնշուած են։ Եթէ իրենց եկեղեցւոյն լսեն՝ պետութեանը պիտի հակառակին, և եթէ պետութեան լսեն՝ իրենց եկեղեցւոյն պիտի հակառակին։ Նոյն պատճառով, Լատինական եկեղեցւոյ ներքև եղող պետութիւնները՝ եկեղեցիէն բաժնուելու դժպհի հարկին ներքև գտնուեցան, և որպէս զի իրենց եկեղեցւոյն անտանելի պայմաններէն ազատին՝ անեկեղեցի ժողովուրդ և անկրօն պետութիւն ընդունելու հասան։ Այդ է այժմեան Հռովմէադաւան ազգերու աննախանձելի դրութիւնը։ Իսկ այդ դրութիւնն պատրաստողը, իրենց եկեղեցւոյն հետևած՝ պահանջից սկզբունքն է։ Բայց մենք ոչ թէ սկզբունքը կը մեղադրեմք, այլ զեղծմունքը։ Զկայ սկզբունք մը, որչափ և նուիրական և սուրբ, որ լաւ չգործածուած ատեն անտեղութեանց դուռ չբանայ։ Մենք այդ գիտեմք։ Միայն կուզէինք օրինակով մը իմացնել, թէ պահանջից սկզբունքին հետևողութիւնը, շատ զգուշութեամբ գործածուելու բան է, և թէ աւելի մեծ դժուարութիւններ կը ծագեն պահանջից սկզբունքին ընդարձակութենէն՝ քան հնաւանդութեան սկզբունքին խստութենէն։

Նա յիրաւի. Եկեղեցւոյ հնաւանդ կանոնները այն տեսակ պար-

զուրթիւն և դիւրութիւն կը պարունակեն իրենց մէջ, որ մարդ պարտաւորուած է խոստովանիլ, աստուածային գործոյն՝ մարդկային գործոյն վրայ ունեցած առաւելութիւնները։ Եկեղեցւոյ հնագոյն կանոնները նուազ ընդհարումներ ունեցած են, և եկեղեցիներէն անոնք՝ որ հնաւանդութեան սկզբունքին հաւատարմագոյն են, այժմ ալ նուազագոյն պետական և քաղաքական և ընտանեկան ընդհարումներ կը ներկայեն, քան թէ հնաւանդութեան սկզբունքը անարգելով՝ կարծեցեալ պահանջից սկզբունքին հետևող եկեղեցիները։

Այդ խնդրոյն վերաբերմամբ ուրիշ կարծիք մը ալ ունիմք. և զայն ևս ամենայն համարձակութեամբ պիտի յայտնեմք։ Եթէ մեր Ս. Եկեղեցւոյն կանոններուն կողմանէ երբեմն ինչ ինչ դժուարութեանց կը հանդիպիմք, անոնք իսկապէս մեր բուն կանոններուն հետևանքը չեն։ Մենք դժբաղդութիւն ունեցանք ժամանակ ժամանակ ազգին մէջ ընդարձակուած տեսնել օտար եկեղեցիներու ուսումն ու գործադրութիւնը, որք զարգացման և յառաջադիմութեան անուան ներքև ազդեցութիւն գործեցին մեր վրայ։ Հայերէն լեզուով բայց ոչ հայերէն հոգւով գիրքեր,—որոց մէջ օտար դաւանութեանց և օտար կանոնագիմատները երբեմն գաղտնի և երբեմն խարդախ կերպով ծածկուած էին,—գոլեստիւ հոչակուեցան, անվատանգ կարծուեցան, ընդունելութեան արժանացան։ Անոնց ազդեցութեամբն է որ մեր մէջ ալ ինչ ինչ դժուարութիւններ երևան եկան, և Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ զաւակներուն վրայ ծանրացան. բայց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ոչ ուղղափառ վարդապետութիւնները գործ ունէին անոնց մէջ և ոչ առաքելաշաւիղ կանոնները։

Գէտք է ևս յիշել, ի պարծանս և ի ջատագովութիւն մեր Եկեղեցւոյն, թէ այդպիսի օտարամուտ բաներ երբէք հայրապետական և ժողովական վաւերացումներ չունեցան, այլ մնային մի միայն մասնաւոր պաշտօնէից մասնաւոր իշխանութեան սահմանին մէջ պարունակուած պատահարներ։ Իսկ մասնաւոր պաշտօնեաները անով կարգարանային, որ իրենց գործը՝ պահանջից սկզբունքին համաձայնութեամբ կատարուած բացառութիւններ և մասնակի փոփոխութիւններ ընել կը կարծէին։ Սակայն ասով դժբաղդ հետևանքը չէր դադարեր։

Եկեղեցւոյն զանազան մասերուն մէջ տարբեր գործադրու-ներ սկսան նկատուիլ։ և իսկապէս այդ տարբերութիւններ եղան, որք իրարու հետ բաղդատուած և համեմատուած ատեն դժուարութիւններ ստեղծեցին։

Եկեղեցական կանոններուն վերաբերմամբ ըսածնիս համա-ռօտելով, մեր կարծիքին համեմատ հետևեալ կէտերը իր հատատուն տուղութիւններ կարող ենք նկատել։

Եկեղեցւոյ կանոններուն մէջ հնաւանդութիւն և պահանջք, հիմնական սկզբունքներ են։

Պահանջից սկզբունքի ընդարձակութիւնը աւելի վնասաբեր է, քան հնաւանդութեան սկզբունքի խստութիւնը։

Հնաւանդ կանոնները աւելի պահանջից հետ համաձայնու-թիւն կը պարունակեն, քան թէ օտար եկեղեցեաց՝ կարծեցեալ պահանջից սկզբունքով կատարած փոփոխութիւնները։

Մեր եկեղեցւոյն մէջ առանց պաշտօնական վաւերացման ընդունելի եղած և ի շնորհս պահանջից կատարուած փոփո-խութիւններն աւելի դժուարութիւններ կը յարուցանեն, քան հնաւանդ կանոնաց պահպանութիւնները։

Այդ դժուարութեանց առաւել մեծերը՝ տարբեր կերպերով և զանազան տեղերում՝ կատարուած՝ մասնաւոր և ժամանա-կաւոր փոփոխութիւններն են։

Ահա անկեղծութեամբ և համարձակութեամբ բացատրուած՝ մեր լաւն ալ, մեր վատն ալ։ Իսկ վատէն հեռանալու և լաւին դաւնալու գործոյն մէջ երկու պարտք ունիմք. մէկը հիմնա-ւոր, մէկը անցաւոր։

Հիմնաւոր պարտքը այն է, որ Հայաստանեայց Եկեղեցւոյ հնաւանդ կանոնները լրջօրէն ուսումնասիրեմք, անոնց փոփո-խութիւնները հետազօտեմք, մոռցուածները քննեմք, և անոնց մէջէն բուն մեր սեփականը քաղեմք, և կարգաւորեալ շարա-յարութեան վերածեմք, և կատարեալ կանոնագիրք մը կազ-մեմք, ոչ կանոնաց ժամանակագրական կարգով, այլ նիւթերու կարգով յօրինուած։ Մեր կանոնագիրքը կայ։ և է վաւերական հաւաքածոյն Եմիսատասէր Ս. Յովհան Օձնեցի հայրապետին ու-թերորդ դարուն սկիզբը գրուած, մինչ Լատինաց կանոնագիրքը, որ է սուտանուն Իսիդորոսի Մերկատորի անվաւեր հաւաքա-ծոյն, իններորդ դարէն հնագոյն չկարծուիր։ Օձնեցւոյն հաւա-

քածոյն յաւելուածներ ալ ունեցած է, և գործածական ալ եղած է։ Սակայն ցարդ հրատարակուած և տարածուած չէ, զի հրատարակութիւնն ալ առանց օրինաւոր հաստատութեանց հնար չէր կատարել. կանոնագիրքը լոկ նախնեաց մատենագրութիւն մը չէ, այլ իրաւանց և գործոց ուղեցոյցն է։ Նոյն կանոններուն վրայ մի ակնարկն խսկ մեզի ցոյց կուտայ, թէ հնաւանդ կանոնաց մէջ պահանջից համաձայն շատ կարգադրութիւններ կան զորս մենք այժմ չենք գործադրեր, զի օտարամուտ թելադրութիւններ և օտար եկեղեցեաց կանոններու պատահական հետևողութիւններ մեր վրայ ազդեցութիւն գործած են. և մենք անոնց հետևելով ի զուր դժուարութիւններ կստեղծենք և դիւրութիւններէ կը զրկուինք։ Այդ աշխատանքը անոր համար ալ անհրաժեշտ է, որպէս զի — Հայաստանեայց Եկեղեցին սեպհական կանոնագիրք չունի — խօսքը, որ բոլորովին սուտ է ու յայտնի զրպարտութիւն է, մէջ տեղէն վերնայ, և պաշտօնեայք և ժողովուրդք ձեռուընին որոշ և յստակ օրինագիրք մը ունենան։

Սակայն այդ գործը համառօտ աշխատանք չէ, և անմիջապէս սկսել և աւարտել հնար չէ, այդ պատճառաւ հիմնաւոր պարտքէն զատ՝ անցաւոր պարտք մըն ալ ունենալնիս յիշեցինք։ Այդ անցաւոր պարտքին անունով այն կիմանանք, որ առաջնորդներ և եպիսկոպոսներ և պատրիարքներ, չափ մը դնեն կամաւոր բացառութեանց, արտօնութեանց, անօրինութեանց, փոփոխութեանց, և ուրիշ ամէն տեսակ ժամանակաւոր և մասնաւոր կարգադրութեանց, որք կարծես թէ ամէն վիճակի և ամէն թեմի համար մի մի տարբեր կանոնագիրք կը ձևացնեն։ Այդ տարբերութիւնք, ոչ միայն մեզ տգեղ և անհաման դրութեան մէջ կը դնեն, այլ և հետզհետէ նորութեանց գայթակղութիւններ կստեղծեն. միոյն գործածը միւսին օրինակ կը լինի, և միոյն ունեցածը միւսին տանջանք կը դառնայ. զի երբ մէկ տեղ բան մը կը ներուի, միւս տեղ չներուիլը նեղութիւն կը պատճառէ, և ի զուր խնդիրներու և շփոթութիւններու առիթ կը լինի։

Որպէս զի այդ անկոպար ազատութիւնը յիշեալ անկարգութեանց տեղի չտայ, ամէն հովիւք և պաշտօնեայք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, որ աստիճանէ որ ըլլին, միակ տեղէ մը պէտք է ընդունին իրենց հրահանգը և միակ ձևով մը պէտք

վարեն իրենց գործունէութիւնը. և միակ տեղն ալ Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցւոյ Հայրապետութիւնն է, կամ որ նոյն է, Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռոյն Գահակալն է։

Մինչև ցարդ շատ թոյլ է այդ հրահանգաց համակերպութեան ձևը։ Մեր երկրորդական աթոռները բոլորովին աղատ գործունէութիւն կը վարեն, և կարծեցեալ պահանջից սկզբունքին կամայական ընդարձակութիւններ կընծայեն, և որ աւելի վտանգաւորն է, այդ կամայական ընդարձակութիւններն ալ իրարու չեն նմանիր, և ժողովուրդք իրաւունք կունենան գանգատելու թէ այս ինչ բան այս ինչ տեղ կը կատարուի և այն ինչ տեղ չկատարուիր, կամ թէ այս ինչ տեղ չկատարուիր նոյն կերպով՝ որով այն ինչ տեղ կը կատարուի։

Խօսքերնիս անորոշ չթողլու համար պէտք է յայտարարեմք և՛ս, որ երկու պարտքերէն զորս յիշեցինք՝ և որոց մէկը հիմնաւոր և միւսը անցաւոր անուանեցինք, մէկը միւսին չեմք ենթարկեր, այլ երկուքն ալ հաւասար կերպով անհրաժեշտ կը համարիմք. մանաւանդ որ կը կարծեմք թէ հիմնաւոր պարտքը կատարելէն վերջացնելէն յետոյ ալ անցաւորը միշտ կը մնայ ու պիտի մնայ։ Վասն զի որչափ ալ հիմնական կանոնագիրքը պատրաստուած և հրատարակուած լինի, տակաւին անցաւոր հրահանգներու պէտքը չսպառիր երբէք։ Ուրեմն կաթողիկոսական կոնդակներ, ազգին ընդհանրութեան համար հրահանգներ, հիմնական կանոնաց մեկնութիւններ, պէտք է շարունակաբար Ս. Էջմիածնէ ելնեն, և ամեն աստիճանէ, այսինքն թէ երկրորդական թէ երրորդական և թէ չորրորդական կարգէ եկեղեցական հովուաց համար հաւասարապէս, իրաւանց և պարտուց՝ սկզբանց և գործոց՝ ընդհանուր և մասնաւոր պարագայից մերձաւոր կանոն և ապահով ուղեցոյց լինին։

ՄԱՂԱԿԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ԻԻՐ ՀԱՆԳՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԵՐՈՒՄ.

ԺՈՂՈՎԵՂ Գ, 1։

Ամեն բանի ժամանակը կայ՝ ու երկնքի տակն եղող ամեն գործի ժամը։

Իմ ունեցած ազատ ժամերս ամենարժանաւոր կերպով գործ դնելու վերայ արդէն շատ անգամ մտածել եմ։ Աշխատութիւնիս ազատ այս բոպէներն, որոնց մէջ մեր հոգին ու մարմինը պիտի կազդուրուի ու նորոգուի, նոր ոյժ, նոր արիութիւն, նոր եռանդ ստանալով, նշանակութիւն ու կշիռ ունին այն մարդու համար, որ կեանքի այս շատ թանկագին պարգևն՝ իբրև մի լաւ մնաս՝ պիտի շահեցնի, ու չէր ուզենալ, որ մի բոպէն անգամ անմտաբար անց կացրած լինէր։ Այդ բոպէներն՝ իմ կեանքի՝ իմ գոյութեան մի մեծ մասն են. այդ բոպէների համար էլ՝ թէ ինչպէս եմ գործ ածել՝ արդեօք լաւ ու խելօք կերպով՝ մի օր հաշիւ ու համար պիտի տամ՝ իբրև մի մասի համար, որ ինձ տրուած է եղել շահեցնելու համար։

Ի՛նչպէս շատ անգամ սխալ ու ծուռ կերպով է հասկանում մարդս իւր կեանքն, ինչպէս քիչ է ըմբռնում արժէքն այն կարճ բոպէների, որ իւր այս անցաւոր աշխարհումն կեանք ունենալու համար պարգևած են իրան։ Շատ անգամ ժամանակը նորա համար մի ծանր բեռն է, որ կուզէր իւր վրայից ցած ձգել։ Նա իւր սրտիցն տխ է քաշում օրերի երկար լինելուն համար, իւր օրերի, որ շուտ կամ ուշ անցկացնելուց և վերջերին հասնելուց յետոյ, տեսնում է, որ լուսաբացին տեսած մի երազի նման մտքից դուրս եկան, անց կացան, գնացին։ Այն ժամանակ զո՛ւր է շատ ցաւում իւր անարդիւն կերպով կորցրած շաբաթների վերայ ու ափսոսում իւր անօգուտ կերպով անց կացրած տարիները։ Զո՛ւր է ցանկանում նա այն ժամանակն, որ իւր կեանքը նորոգել կարողանար, որ աւելի խելօք կերպով վայելէր։ Իզո՛ւր է զգում նա այն սարսափելի ճշմարտութիւնը թէ՝ իւր մեղաւոր լինելովը կորցրած ամեն մի բոպէն՝ իւր իսկ կեանքից արած մի յափշտակութիւն էր։

Խօսում են մարդիկ ժամանակն ինչպէս անց կացնելու վերայ. այլ և այլ միջոցներ ու հնարքներ են գտնում ժամանակն անցկացնելու համար, որ Աստուծոյ մեզ շնորհած թանկագին պարգևն է։ Ա՛յ անմիտներ, նեղութիւն մի քաշէք մտածելու թէ՝ ժամանակն ինչպէս անց կացնէք. ճշմարիտն եմ ասում ձեզ, որ նա՞ ձեզ անց կկացնի։

Ժամերն անց են կենում, գնում՝ մեզանից խլուելու և շտապով փախչելու, անհետանալու կերպով։ Ո՞ւր են այն տարիքդ, որ ապրեցիր. ի՞նչ մնաց քեզ կամ ի՞նչ պահեցիր քեզ համար կեանքիդ արդէն անց կացած տարիներից։ Շատ ժամանակուայ և արդէն հնացած մի թոյլ յիշողութիւն։ Ո՞ւր են այն ծաղիկները, որ դու քո ծաղիկ հասակիդ միջոցում քաղում էիր, ո՞ւր են, ի՞նչ եղան։ Վաղուց արդէն թառամել են։ Ո՞ւր են քեզ մօտիկ ընկերներդ ու բարեկամներդ, որոնց հետ մի ժամանակ սրտով սաստիկ կապուած էիր։ Ժամանակի հոսանքը խլեց քեզանից, առաւ, տարաւ, որին՝ օտարութիւն, որին՝ գերեզման։ Իսկ երգերն, որ ուրախ ուրախ ասում էին ու դու էլ մասնակցում էիր։ Օդը ցնդեցան։ Այսպէս էլ ի՞նչ եղան քանի ու քանի յատակագծերդ, որ կազմում էիր քո ապագայիդ համար։ Ո՛րը գլուխ եկաւ, որը մտքիցդ հանեցիր։ Վերջապէս քո ունեցած յոյսերիցդ, քո արած հոգսերիցդ, քո քաշած աշխատութիւնից, արած ջանքիցդ ու հետևողութիւնից, թափած արտասուքիցդ, ունեցած բաղձանքիցդ ի՞նչ դուրս եկաւ ու ի՞նչ մնաց մնքումդ։ Ոչինչ, միայն երազի նման բաներ, որ միտքդ են գալիս։ Ամեն բան ձեռքիցդ գնաց՝ ու քեզ համար մնացական ոչ մի բան չմնաց, ոչ հայրդ, ոչ մայրդ, ոչ եղբայրներդ ու քոյրերդ, ոչ զաւակներ, ոչ տունդ, ոչ ունդ, ոչ գեղեցկութիւնդ. ամենայն բան վերջապէս ժամանակի սրընթաց հոսանքը քշեց, տարաւ իւր հետ, ու դու ամեն ունեցածիցդ զրկուած ու բոլորովին մենակ մնացած՝ որբի նման, յաւիտենականութեան ափի մօտ ես քեզ կանգնած տեսնում։—Վերջին ժամն այժմ քո վրադ էլ է հասնում, ու քո կեանքդ էլ քեզանից խլում—և՝ ոչ մի բան քեզ չի մնում, բացի իսկ քեզանից, քո իսկական կեանքից, քո իսկական գոյութիւնից, քո՝ ամեն բանից մերկացած հոգիդ կանգնում է Աստուծոյ առաջ՝ իւր վճիռը լսելու համար։

Ամեն մի ժամը փախչում է, իսկ րոպէն՝ կայծակի արագութիւնից էլ աւելի շուտ ու սուր է թռչում։ Այն րոպէն, որ այժմ զգում ես թէ կայ, էլ քոնը չէ, իսկ ետևից եկող րոպէն տեսնում ես, որ դարձեալ թռաւ արդէն ու անց կացաւ,

Ժամանակն անց կացնելու վերայ մի՛ մտածիր. Նա՛ քեզ անց կկացնի։ Նա քեզ հանեց, տարաւ ու անց կացրեց դուրս քո երեխայութեան տարիների դրախտից, որոյ մէջ անհոգ անհոգ ամեն կողմ թռչկոտում էիր. դուրս հանեց քեզ քո սրտիդ սիրեկանների գրկից, ծնողացդ ծոցից, վերջապէս դուրս հանեց քեզ կեանքիցդ։

Նորանով կճանաչուի իմաստուն մարդն, որ Աստուծոյ մեզ տուած պարգևին, ուզում եմ ասել, ժամանակին գին դնելը գիտէ։ Եւ որովհետև վերջ ի վերջոյ իրան ոչինչ չէ մնում բացի իւր հոգուց, պէտք է փոյթ ունենայ իւր հոգին ազնուացնելու և նորա կատարելութիւնները շատացնելու։ Ինչու որ բացի հոգուց՝ ոչ մի բան չէ կարող ազատել տարիների ամեն բան կլանող, ոչնչացնող յարձակումից. միայն իւր հոգին, ոչ թէ ուրիշ բան՝ իբրև աւար՝ կտանի իւր հետ այս աշխարհից այն կեանքն։ Գործից հանգստանալու ժամն էլ քրիստոնեան զուր չպիտի անց կացնի։ Մարդս իւր վսեմ նպատակի համար, որոյ ետևից պիտի ընկնի հասնելու, չափից դուրս քիչ ժամանակ ունի. հէնց այս պատճառով ոչ մի րոպէ չունի աւելորդ բանի նման դէն ձգելու կամ կորցնելու։

Մեր թեթևամտութեամբը՝ սովորաբար քիչ գին ենք դնում այսպէս անուանած երկրորդական մի ժամերին, որ հանգստանալու, կամ զուարճանալու համար ենք ունենում։ Այդ ժամերն՝ աւելցրած կամ ետ ձգած մի բանի պէս ենք համարում մեզ համար այն մտքով, որ մեր ուզեցածին պէս գործ ածել կարողանանք։ Մենք անտարբեր ենք գտնւում մեզ համար զուարճութիւններ ընտրելու մէջն՝ ու այն մեր ունեցած ժամանակն արդէն լաւ ենք համարում, երբոր զուարճալի կերպով կարող ենք անցկացնել բոլոր այդ միջոցն։ Շատ անգամ մոռանում ենք, որ հէնց այդ զուարճութեանց ժամերում ամենից աւելի ուշադիր պիտի լինինք մեզ վերայ, ինչու որ հոգևոր խաղաղութիւնն առաջին անգամ հէնց այն ժամանակն կարող է խռովուիլ, խանգարուիլ և այլ և այլ ներքին ու արտաքին կերպով

մեր քաշելու բաների հիմն դառնալ։

Ամեն բան ունի ի՞նչ ժամանակն և ամեն գործ երկնքի տակն ի՞նչ ժամն, ասում է մեզ քարոզիչն Սողոմոն իմաստունն։ Կարծիք չկայ, որ գործերից աղատ ու հանգստութեան րոպէներն անհրաժեշտ են մեզ համար։ Դորանց էլ պէտք է նուիրենք մեր ժամանակի մի մասն։ Այդ րոպէներն ամենակարևոր են մեր մտաւոր կարողութեան համար, որ միշտ ընդունակ լինի աւելի բարձր գործունէութեան, և անդուլ աշխատութեան մէջ չթուլանայ. ամենակարևոր են մեր ամենօրեայ և մշտական աշխատութեան համար, մեր մարմնոյ ուժերը զօրացնելու համար, մեր առողջութիւնն ու կեանքը պահպանելու համար։

Զուր տեղը չէ, որ աստուածային բարութիւնը շրջապատել է մեզ անհամար վայելքներով, որ հրաւիրում են մեզ վայելելու. ի զուր տեղը չէ, որ մեր սրտի մէջը տիրել է իղձ ու յօժարութիւն ուրախութիւն վայելելու համար։ Աստուած՝ մեր յաւիտենական ու բարի Հայրը կամենում է իւր զաւակաց ուրախութիւններն։ Իւր ամենայն արարածների զուարթութիւնն ու կայտառութիւնը յորդորում է մեզ ուրախ կերպով վայելել կեանքն, ու իւր խօսքն էլ այդ բանին է մեզ հրաւիրում թէ՝ ուրախ եղէք Տիրոջմով ամեն ժամանակ (Փիլ. Դ, 4։)

Բայց ամենայն տեսակ զուարճութիւններն, որ մենք ունենալ ենք ցանկանում ու մեզ համար գտնում և որ վայելել թոյլ է տալի մեզ Աստուած մեր հանգամանաց մէջ, մեզ համար պիտի լինին դէպի դիջոնեք դեր «երբոբ ը-ոբնայնելը» ու մեր առողջութիւնը զօրացնելու. ոչ թէ մեր կեանքի միակ նպատակը պիտի դառնան։ Պիտի վայելենք զուարճութիւններ ոչ միայն ուժից չընկնելու համար, այլ և կազդուրուելու, որ նորոգուած ուժով ջան դնենք Աստուծոյ արքայութեանն արժանանալու։ Նա միայն է ամենից շատ ապրած լինում, ով որ ամենից աւելի բարի գործ է արած լինում. ինչպէս որ Աստուած ամեն ժամանակ գործում է մեր երջանկութեան համար։ Ցիսուսի այն աշակերտն է ամենից փոքր ապրած լինում, որ հոգ չունենալով մարդոց բաղդաւորութեան համար, միայն ղգայական հեշտասիրութեան մէջ է վատնում իւր կեանքը, միայն վայելչութիւններ քաշած լինում, ինչպէս որ անբան կենդանին էլ վայելում է իւր կեանքն առանց հասկանալու կամ գիտենալու

թէ՝ աւելի բարձր նպատակներ կան։

Ուրեմն հանգստանալու ժամերը մեզ պէտք է նպատակայարմար ա-ռընչուելու մեզ լինին օգտակար պարապմանց ժամերի հետ։ Քրիստոս, որ իւր կեանց մէջ լի էր սուրբ գործերով, այն ժամանակ էր միայն հանգստանում, երբոր ուժից ընկնում էր։ Նա մրրիկների միջոցում էլ ննջում էր։ Այսպէս և նորան ամեն մի հետևողն այն ժամանակ միայն հանգստանալու վերայ պիտի մտածի, երբոր Աստուածանից իրան յանձնած վիճակի պարտականութիւնները բարեխիղճ կերպով կատարել է։

Բայց թէ ինչպէս է այս ու այն մարդն իւր հոգւոյ և մարմնոյ առողջութեան այս միջոցների վերայ իւր գոյութեան ուղիղ կոչման նպատակը մոռանում, և թէ ինչպէս հեշտ ու զօրաւոր կերպով է վառւում իւր մէջ բաղձանքը զբօսանքների ետևից ընկնելու, դորա օրինակներն ամեն օր տեսնում ենք։ Տեսնում ենք մարդիկ, որ ոչ թէ աշխատութիւնն իրանց համար զուարճութիւն են համարում, այլ զուարճութիւններն իրանց բան ու գործն, իրանց կեանքի գլխաւոր նպատակը շինում։ Նորանց ոչ մի աշխատութիւն այնչափ մեծ չէ երևում, որչափ որ այն աշխատութիւնն, որ գործ են դնում իւրեանց տեսակ տեսակ զուարճութիւնների մէջ փոփոխութիւններ անելու, ինչու որ զբօսանքների ամենօրեայ չափազանց վայելքը վերջապէս ձանձրութիւն է բերում իրանց։ Խելքը՝ միտքը զբօսանքների տալը՝ հոգւոյ իսկական մի հիւանդութիւն է՝ և մեր օրերի մոլութիւնն, որ ինչքան էլ մոլութիւն չհամարուի, բայց և այնպէս միշտ աւելի և աւելի տարածւում է ամեն կարգի մարդոց մէջ։ Այս զբօսասիրութիւնը կուլ է տալի մեր ամենագեղեցիկ և ամենաթանկագին ժամերն, որ խլում ենք ունեցած աստիճանի, կամ վիճակի պարտականութիւններից ու գործերից, և վերջապէս պատճառ է լինում կորցնելու մեր սոլորութիւնն օգտակար գործունէութեամբ պարապելու։ Մարդս, երբոր այդ դժբաղդ վիճակին է հասնում, իւր պարտականութիւններն ակամայ է կատարում և հարկից միայն ստիպուած. վերջապէս անընդունակ է դառնում որ և իցէ գործ կատարելու, որ ջանք ու տոկունութիւն են պահանջում. իւր ամենագեղեցիկ պարտականութիւնները կատարելուց ձեռք է վեր առնում. հոգւոյ քնքուշ ուրախութիւննե-

րի զգացումը կորցնում. իւր այս դրութեան մէջ հազիւ է նկատում իւր տան ընկնելն, իւր անտեսութեան խանգարուելըն, իւր բարեկամների իրանից սառչելն ու օտարանալն և իւր զուարճութեանցը զոհում է ոչ միայն իւր ունեցած չունեցածն՝ անխոհեմ ու շռայլ ծախքերով, այլ մինչև անգամ իւր պատիւն ևս։ Վայելչութիւններ է քաշում, բայց համ չէ գտնում, ու վայելչութիւնը վերջապէս անում է իւր համար ոչ թէ ուրախութիւն, այլ սովորութեան մի տանջող կարիք։

Ո՞վ չէ իմանում զբօսանքի համար հոգի տալու զարհուրելի կողմը։ Նայեցէք երիտասարդների վերայ, որոնք որ իրանց հայրերի կենցաղավարութիւնիցը բոլորովին շեղուել ու հեռացել են՝ աւերուելով, և իրանց օրերը վատնում են ոչ մի բան չանելու զբաղմունքի մէջ։ Դուք նոցա կգտնէք փողոցների մէջ հրապարակական զուարճութեանց ամեն տեղերումը. քիչ կըպատահի, որ տեսնէք մի գովելի գործի մէջ։ Աշխատութիւնը սիրելու, որպէս և գործ կատարելու սովորութիւնը կորցնելով, փչացնում են իրանց նախնեաց ունեցածն և անօգուտ մարդիկ են դառնում հայրենեաց համար, անօգուտ՝ մարդկային ընկերութեան համար՝ և իրանց տարիների աւելի գեղեցիկ մասը կորչում է անօգուտ և ունայն զբաղմունքի մէջ։

Նայեցէք տան այն հօր վերայ, որին որ զբօսանքի ետևից ընկնելը թունաւորել է։ Նա այլ ևս իւր գործերին, իւր կնոջն, իւր զաւակներին, մինչև անգամ ինքն իրան էլ չէ պատկանում՝ այլ ուրախութիւնով ու ծիծաղով ժամանակ անց կացնող ընկերութիւններին, որոնց մէջ ողորմելի կերպով չնչին և անպիտան բաներով իւր ժամանակն անց կացնելով, կարող է ամեն բան մոռանալ, ինչ որ սուրբ պարտականութիւնն իրանից պահանջում է։—Մտիկ տուէք զուարճութիւնների ետևից ընկնող տան մօրն—ախ, նա այդ ազնիւ անուանն այլ ևս արժանի չէ։ Ծառաների ու աղախինների վերայ է թողնում, նորանց յանձնում տան հոգսն, և իւր զաւակները մնացած են մէջ տեղն որբերի նման, որոնք որ հազարից մէկ բաղդ են ունենում տեսնել իրանց արհամարհանաց արժանի մօր երեսն, այն մօր, որ աւելի սիրում է փայլել խաղի սեղանի առաջ նստած միջոցին կամ պարելու մէջ կամ անգործ ժողովների մէջ։ Ընտանեկան բաղդաւորութիւնը նորա համար մի անծանօթ բան է

դարձել. իւր սեպհական տան մէջ ինքն իր համար անտանելի է. միայն օտարների մէջ նա ինքն իրան այնպէս է համարում, որ իւր տանն է, ուր որ կարող է ազատ լինել անտեսութեան և զաւակներ կրթելու ծանր բեռից: Ինչքիցն են քանի ու քանի անբաղդ ամուսնութիւններն: Ինչքիցն է երիտասարդների այսպէս կամ այնպէս փչանալն: Ինչքիցն է սորա ու նորա առողջութիւն կորցնելն: Ինչքիցն է այս ու այն տան գովելի և բարեկեցիկ դրութեան դէպի վատը փոխուիլը, խանգարուիլն ու ընկնելն:—Այս բոլորն այն խարազաններն են, որ մոլութիւնը ճօճում է իւր սեպհական, իւր իսկական գերիների վերայ. այս բոլորը դժբաղդներգործութիւններ են կատաղի կերպով զուարճութիւնների ետևից ընկնելուն:

Հանգստութեան ժամերում էլ ամենից առաջ քրիստոնեայ պիտի լինիմ ես: Մինչև այնչափ ես ազատ-ազատ-ազատեան որ պետք կը դարձնեմ ինձ հարար: Ասա՛ ինձ՝ թէ ինչ խօսակցութիւններ ես անում քո ազատ ժամերումդ, ու ես քեզ կասեմ՝ թէ ինչ գին ու արժէք ունիս դու: Քրիստոնեան արհամարհում է ամեն մի հանգստութիւն ու զուարճութիւն, որ կեանքի անմեղ ուրախութիւնների կարգումը չեն կարող համարուիլ:

Անմեղ պիտի լինին այդ ուրախութիւններն, այսինքն՝ ըստ ինքեան մեղաւորի չլինին: Զոր օրինակ. քրիստոնէի արժանաւորութեանն անպատկան է ուրախութիւններ վայելել ուրիշի բաղդաւորութեանը վնասելով: Միայն չարագործը կարող է ուրիշների արտասուաց մէջ մի հրճուանք գտնել՝ և ուրիշների դաւի մէջ զուարճութիւն: Վա՛յ նորան, որոյ սիրտն հանգստանում է և ուրախանում, երբ որ իւր եղբօր՝ իւր նման մարդու վնասուիլն է իմանում ու նորա անբաղդութեան մէջ իւր միխիթարութիւնը գտնում: Նոյնպէս մարդս իւր արժանաւորութիւնը կորցնում է, երբոր չարախնդաց կերպով բերնից դուրս է հանում այլ և այլ անվայել խօսքեր ուրիշների սխալանքի, պակասութիւնների, կամ նորանց գլխին եկած փորձանքների վերայ. այո՛, աւելի ևս անարժան է նա՛, որ ուրախութիւն է զգում ուրիշներին զրպարտելու մէջ, և որ՝ առանց կշռանալու՝ դատարկ դատարկ խօսելումն, արդէն քանի ու քանի տան հանգստութիւնը խանգարեց, քանի ու քանի բարեկամութեան կապը կտրեց: Դատարկ դատարկ խօսելն էլ մոլութիւն կարող

է դառնալ։ Մենք այնպիսի կանայք ենք ճանաչում՝ որոնք մի ժամանակ ամեն տեղ էլ պատիւ ունէին, և արժանացել էին ամենեցուն շատ ու շատ յարգանաց. բայց իրանց բանասանք ու բամբասանք անել սիրելովն՝ իրանց պատիւը շատ կորցրեցին։ Այսպիսի անձանց համար աւելի մեծ ու սիրելի վայելչութիւն չկայ՝ քան թէ գտնել իրանց խելքի մարդոց մի ընկերութիւն՝ ուր որ իրանց լեզուին ազատ ընթացք կարող են տալ։ Ո՞վ չի յիշիլ այստեղ սուրբ գրքի զգաստացնող այն խօսքը՝ թէ «լեզուն մի փոքր անդամ է՝ բայց մեծ բաներ է անում։ Ահա՛ մի փոքր կրակ՝ ինչպիսի անտառներ է կրակ ձգում։ Այսպէս լեզուն էլ մի կրակ է՝ անարդարութեամբ լի մի ամբողջ աշխարհք է։ Արատաւորում է մեր բոլոր մարմինն ու կրակ ձգում մեր բոլոր վարքին՝ երբոր դժոխքիցն է կրակուած»։ (Յակ. թուղթ Գ. 5՝ 6։)

Ինչպէս որ դատարկ դատարկ խօսել սիրելը կանանց մոլութիւնն է՝ այնպէս էլ թուղթ ու նման խաղեր խաղալ սիրելը՝ մարդոց մոլութիւնը կարող է դառնալ։ Անմեղ ու անվնաս է միայն այն խաղն՝ որ սրամտութեան ու բարակ խելքի վարժութիւն է միշտ. թղթախաղութիւնն ու գնդակախաղութիւնն՝ որ շարժում՝ գրգռում է մարդու շահասիրութիւնը կամ հպարտութիւնն ուրախութեան ձեռքումը՝ ուզում եմ ասել՝ զուարճութեան միջոցին՝ դառնում են շատ անգամ սպանիչ գործիքներ մարդու հանգստութեան համար։ Այն ժամանակ խաղն այլ ևս չէ լինում մտքի ու սրտի համար մի զբօսանքի միջոց՝ երբոր զուարճութիւն բերելու տեղը՝ մի կատաղի կիրք է դառնում։ Մենք ճանաչում ենք այնպիսի տան հայրեր՝ որոց բանն ու գործը՝ ջան ու ճիգը միայն այն բանի վերայ է՝ որ այս կատաղութեանը յագուրդ տան։ Այդ բանին խելքները տալով՝ ուրիշ ամեն բան մոռանում են՝ ընտանիք՝ իրանց ունեցած վիճակը՝ կոչումը՝ իւր պարտաւորութեանց հաւատարիմ մնալն ու խղճմտանք ասած բանդ։ Թուղթ՝ գնդակ՝ և ուրիշ բաներ խաղացողի գլխից դուրս է գալիս վերջապէս ու կորչում՝ ոչ միայն պատուոյ ու բաղդաւորութեան զգացմունքն՝ այլ և իւր սրտի մէջը սպանում է ամեն մի ազնիւ զգացմունք։

Անմեղ ու անվնաս է պարզ ու անպղտոր սրտով մասնակցելն այն ուրախութեանց՝ ուր որ ընկերական կատակները՝ մի բա-

ժակ գինի խմելու միջոցին, մարդուս սիրտն աւելի բաց են անում՝ ու իրան ոգեւորում, լեզու գնելով բերանը, սուր, խելօք՝ կամ զուարճալի կերպով խօսելու: Բայց դիւրասահ ու վտանգաւոր է զուարճութեան այն ճանապարհն, ուր որ, ուրախութիւն անելու միջոցին, համեստութեան սահմանից անց են կենում, որով զուարճութիւնը դառնում է ոչ թէ ուրախութիւն անել, այլ մի վայրենական սանձարձակութիւն:

Անմեղ «ա— ռնծիա» էն՝ էլ ուրիշ քանի ու քանի՝ լաւ ժամանակ անց կացնելու տեսակներն՝ իբրեւ միջոցներ. բայց մեղսային են դառնում, երբոր այդ զուարճութեանց մէջ չկայ այլ եւս իմաստուն զգաստութիւն եւ անփոփոխ խոհեմութիւն: — Ոչ թէ մտաքի ու սրտի խաղաղ րոպէին, ոչ՝ այլ այն միջոցին, երբոր աւելի գրգռուած զգացմունքները մարդուս սիրտը տակն ու վրայ անել կարող են, այն միջոցին քրիստոնեան աւելի եւ աւելի «քըէօ-պոնէայ» պիտի լինի. որովհետեւ այնտեղ է գալիս աւելի հարկաւոր ժամանակը մաքառելու սրտի մաքրութեան ու հոգւոյ հանգստութեան համար:

Ուրախ խօսակցութիւնները, կատակներն ու միտք բաց անող՝ բան սովորեցնող խօսքերն ընտանեաց նեղ շրջանի մէջ, պարզ ու անմեղ խաղեր անելը մեր զաւակաց ու բարեկամաց հետ՝ տրամադրում են մարդուս սիրտը մաքուր ուրախութիւնների ու բաց անում քնքուշ զգացմունք ունենալու համար: — Օգտակար գրքեր կարդալը բարձրացնում է մարդուս սիրտն ու հոգին ամենօրեայ ու սովորական կեանքից, աշխարհիս եւ մարդուս բնութեան վերայ նոր տեղեկութիւններով է հարստացնում: Այդպիսի գրքեր կարդալը հոգին ազնուացնում է, պատճառ որ՝ ինչքան մարդուս հասկացողութիւնն աւելի յստակ է լինում ու պարզ, այնչափ էլ աւելի արժանաւոր են լինում իւր գաղափարներն Աստուծոյ փառաւոր եւ ահաւոր մեծութեան վերայ: — Կամ եթէ ուզում ես դու մի ժամ հանգստանալ քո ծանր աշխատութիւններիցդ, դուրս գնա բնութեան տաճարն՝ որ բացուի սիրտդ Աստուծոյ արարածների վերայ մտիկ տալով: Բայց այդ միջոցին ու այդ տեղ մտիկ տալը մի պարզ ու անտարբեր կերպով քո չորս կողմն եղած առարկաները նայելը չէ, այլ եւ դոցա նպատակների, վախճանների ու հրաշալի կարգաւորութիւնների վերայ մտածելն է: Բոլորովին սէր եղող Ստեղ-

ծոցի ձեռքից դուրս եկած բնութիւնը մաքուր է, ինչպէս որ Աստուած ինքն սուրբ է։ Նորա արարածների վերայ մտիկ տալով, միշտ կրկին ու կրկին նորոգւումէ մարդուս հոգին ամենասուրբ բանի համար։ Ուր որ Աստուծոյ ամենակարողութիւնն այնպիսի հրաշալի կերպով խօսում է մարդուս սրտի հետ, օրուան հոգսերն ուցաւերը մեր գլխից դուրս են գալի ու կորչում։ Մենք կրկին զգում ենք, որ երկնաւոր Հօր զաւակներն ենք. մենք մեր ամենօրեայ կեանքի խառն ու շփոթ հանգամանքներից ու պատահմունքից աւելի բարձր ենք մեզ տեսնում, սովորում ենք մեր գլխին եկածներն առանց նախապաշարման քննել, և աստուածային սիրոյ զօրութիւնն, որ մեզ մեր կեանքի հանգամանաց հետ այնպիսի հաշտեցնող ու մեղմ կերպով՝ մեր սրտի ու հոգւոյ մէջն է թափանցում գարնան ծաղիկների ծովից, պտղաբեր երկրի գեղեցիկ տեսարաններից ու վազող ջրերի ախորժելի ձայնից ու փչած քաղցր քամիներից, մեր խոր վէրքերն անգամ բժշկում է։

Բայց բաւական է. այժմ արդէն ազդու կերպով համոզուած եմ, որ զուարճութեան և հանգստութեան ժամերն անգամ պիտի մեծ կշիռ ու նշանակութիւն ունենան։ Չեմ ուզում այս տեղ ինձ համար նկարագրել զուարճութիւնների ամեն տեսակներն. ու ինչպէս էլ կարող էի այդ անել, պատճառ որ աստուածային բարութիւնն՝ ամեն մի օր այդ՝ տեսակ տեսակ ու անթիւ բարիքն՝ զարմանալի կերպով առատօրէն և փոփոխակի իմ առաջս է հանում։

Ո՛վ ամենայն զուարճութեանց ակբիւր, ո՛վ ամենայն երջանկութեան յաւիտենական սկզբնապատճառ. Դու Քո ոչ մէկ արարածիդ էլ կարօտ ու զուրկ չես թողնում։ Ամեն մէկին համար պատրաստել ես իրան համեմատ վայելք և վայելչութիւն՝ Քո աթոռիդ առաջն եղող սերովբէիին սկսած մինչև խոտի ծղօտի վերայ կախուած որդին։ Ինչու՞ ես էլ, Քո զաւակդ, չպիտի կարողանայի ընդունել ամենազնիւ տեսակ վայելքներ ու վայելչութիւններ։ Պարզևիր ինձ Քո բարի հոգիդ, որ ես ամեն անազնիւ բան արհամարհեմ և ուրախութիւն վայելած ժամանակս էլ, Քո աստուածային արքայութեան արժանանալու ձգտի՜մ։

Թարգ. ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՓԻՐԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐՏԻ 30, 1888 Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ռուսաց Церковный Вѣст. շաբաթաթերթը գանգատուում է իւր մի յօդուածում № 5ի մէջ, որ 25 տարին անցաւ, յընթացս որոց շատ յօդուածներ գրուեցան և գրուում են եկեղեցական դասի (քահանայից և սարկաւագների եկեղեցական պաշտօնէից) ապահովութեան համար և դեռ ոչ մի եզրակացութեան չհասան, մինչդեռ օրից օր նորա նիւթական վիճակը վատթարանում է, որովհետև ժողովրդի կեանքի փոփոխութեան և ծանրանալուն հետ և եկեղեցական դասի արդիւնքը նուազում է, քանի որ այդ արդիւնքը գոյանում է մեծ մասամբ ժողովրդի կամաւոր տուրքից։ Իսկ ժողովուրդը, ծանրաբեռնած կենսական նոր պահանջներով, որոնք առնում են նրանից իրանց անհրաժեշտ հարկը, և միևնոյն ժամանակ կորցրած իւր նախկին ջերմեռանդութիւնը իրաւացի է համարում աւելի չվճարել իւր բարոյական պարտքն, որ ունի դէպ իւր եկեղեցին և սորա պաշտօնեայքն, որոնք ծառայելով հանդերձ նորա մտաւոր և բարոյական շահուց, չեն ստանում իրանց վարձը լիովին, իբրև մշակներ, որոնք արժանի են իրանց վարձուց։ Այստեղից ծագում է և եկեղեցական դասի նիւթական աննախանձելի վիճակը։ Այն հարուստ քաղաքացին կամ գիւղացին, որ սովոր է մինչև անգամ շռայլութեան առարկաների վերայ չինայելու ծախք, երբ գալիս է հերթը եկեղեցականին վարձատրելուն որևէ ծիսակատարութեան համար, աշխատում է այդ վարձը կրճատել, որքան հնարաւոր է։ Որքան առատաձեռն է կերուխումի համար, հարսանեաց, թաղման կամ այլ որևէ հանդէսի ժամանակ, այնքան էլ ժլատ է այդ պիսի դէպքում եկեղեցականին վարձատրելում։

Այս ծանր վիճակից եկեղեցական դասը հանելու և նորան նիւթապէս ապահովելու համար, որպէս զի նա, ազատ նիւթական հոգսերից իւր և իւր ընտանեաց ապրուստի համար, անձնատուր լինէր իւր հօտի բարոյական և մտաւոր վիճակի բարեկարգութեան, զանազան առաջարկութիւնք եղան, որոց գլ-

խաւորն էր ռոճիկ նշանակել եկեղեցական դասին։ Բայց կառավարութիւնն անհնարին գտաւ ծանրաբեռնել իւր ծախուց ցանկը մեծագումար բեռնով, որպիսին կպահանջուէր բոլոր ռուս եկեղեցական դասին ռոճիկ տալու համար։ Եւ յիրաւի, երբ կառավարութեան արդեանց և ծախուց վերայ խորին ուշադրութիւն դարձնենք, կտեսնենք, որ այնքան անհրաժեշտ պիտոյքներ ունի կատարելու, պետութեան պահպանութեան, ժողովրդի մտաւոր և տնտեսական վիճակի բարօրութեան համար, որ անկարող է հոգալու և եկեղեցական դասի նիւթական միջոցները, նրան յարքունուստ ռոճիկ տալով։ Նա մանաւանդ որ առանձին զգալի կարիք էլ չկայ կառավարութեան հոգալու այդ մասին, քանի որ եկեղեցին իւր պաշտօնեաներով իբրև առանձին հաստատութիւն ունեցել է իւր արդիւնքներն, որոնք թէ եկեղեցական կանոններով և թէ դարերի ընթացքում կազմուած սովորութիւններով սրբագործուած են։ Ուստի և շատերը համամիտ են աւելի այդ արդիւնքները կանոնաւորելով և ժողովրդի համար պարտաւորական անելով ապահովել եկեղեցական դասի նիւթական վիճակը։

Մեր ռուսաբնակ հայերիս մէջ էլ զարթեցաւ վերջին ժամանակներս եկեղեցական դասի նիւթական ապահովութեան խնդիրն, որովհետև մեր եկեղեցական դասն էլ նոյն խեղճ վիճակին ենթարկուեցաւ հայ ժողովրդեան կեանքի նոյն փոփոխութեանց առթիւ, որոնք առաջացրին նորա մէջ ձգտումն դէպի շռայլութիւն, անտարբերութիւն դէպի իւր պարտքերն առ եկեղեցական դասը։ Յայտնի բան է այս վիճակը հայ ազգի համար, իբրև մի հպատակ և աւելի զօրեղ տարրի ազդեցութեան ենթարկուած ժողովրդի համար բնական է, բայց մարդուս յատուկ է և բնական պատուհասների դէմ մաքառել. ուստի և այն բնական էր մեզ համար, որ մեր ժողովրդի հասկացող դասը և մեր հոգևոր ու մտաւոր պիտոյքների մասին ըստ պարտականութեան հոգացող եկեղեցական վարչութիւնն էլ մտածէին հայ եկեղեցական դասի նիւթական ապահովութեան մասին։ Այս մասին և մեր պարբերական թերթերում բաւական գրուեցան և զանազան կարծիքներ յայտնուեցան։ Յայտնի բան է այսպիսի դէպքում ամենից հեշտը ռոճիկ որոշելու առաջարկութիւնն է. բայց ամենից աւելի դժուար իրագործելին էլ այդ է,

քանի որ անհնարին է հարկ դնել դորա համար ժողովրդի վերայ։ Այդպիսի հարկն էլ պէտք է լինի կամաւոր, որ բնաւ զանազանելի չէ կամաւոր տուրքից։ Երբ տարեկան հարիւրաւոր միլիոններ արդիւնք ունեցող պետութիւնք, որոնք և իրաւունք և իշխանութիւն ունին ժողովրդոց վերայ հարկ դնելու և միջոց սրանց ժողովելու, անկարող են եկեղեցական դասին ռոճիկ նշանակել, այլ նոցա ապահովութիւնը թողնում են հասարակութեանց խղճի վերայ, ապա ուրեմն ո՞րտեղից կարող է հայ հասարակութիւնն ապահովել իւր եկեղեցական դասը ռոճկով, որոյ համար մեծամեծ գումարներ են հարկաւոր։ Միայն Թիֆլիզի 63 քահանայից, եթէ իւրաքանչիւրի համար անբաւ արար տարեկան 1000 ռուբլի անգամ ռոճիկ որոշուելու լինի, կարիւոր է 63,000 ռուբլի, որ 1,560,000 գումարի տոկոսիք է։ Ե՞րբ, ի՞նչպէս և ի՞նչ միջոցներով հնարաւոր է այդպիսի դրամագլուխ կազմել, միայն քահանայից անբաւարար կերպով ապահովելու համար, թող սարկաւագներին և եկեղեցական այլ ստորին աստիճանի պաշտօնեաներին։ Յայտնի է որ և մեր եկեղեցիք (շատ սակաւ բացառութեամբ) հազիւ կարողանում են պահպանուիլ իրանց արդիւնքով։ Ուստի և մնում է էլի համաձայն նոյն իսկ մեր եկեղեցական կանոններին եկեղեցական դասն ապահովել այդ կանոններով և դարաւոր սովորութեամբ որոշուած կամաւոր տուրքերով և այս հնարաւոր է, եթէ եկեղեցականաց թիւը նուազի և իւրաքանչիւր քահանայի տրուի այնքան ծուխ, որոյ կամաւոր և չափաւոր տուրքը կարող լինէր ապահովել նորա նիւթականն։ Այս նպատակի համար էր, որ ի Տէր հանգուցեալ Գէորգ երջանկայիշատակ Կաթողիկոսը շրջաբերական կոնդակ հանեց, որով առ նուազը 100 տան վերայ մի քահանայ պիտի լինէր։ Բայց դժբաղդաբար այս հրամանը ճշտութեամբ չկատարուեցաւ և այսօր տեսնում ենք 30—40 տունից բաղկացած գիւղեր, ուր երկու քահանայք կան, և մինչև անգամ 15 տուն ունեցող գիւղեր ունին առանձին քահանայ։ Պարզ է, որ այդպիսի ծուխ հովուող քահանայից նիւթական վիճակը շատ թշուառ պիտի լինի, մինչև անգամ գիւղացիութեան ամեն աշխատանքները քաշելով։ Միւս անկանոնութիւնն, որ շատ վնասում է քահանայից կանոնաւոր նիւթական վիճակին, է մանաւանդ քաղաքներում ծխի անհաւասա-

բութիւնն, որով միևնոյն եկեղեցւոյ միաբան քահանաներից մի քանիսը հովանաւորում են մի քանի հարիւր տնից բաղկացած ծուխ, մինչդեռ այլք կամ բնաւ ծուխ չունին և կամ շատ նուազ թուով ունին։ Այս անհաւասարութեան գաղափարն առիթ է տալիս միշտ անբաւականութեան և նոյն եկեղեցու միաբանից մէջ անմիաբանութեան, նախանձի, թշնամութեան հաստատուելուն, որ չար օրինակ է և նոցա հօտի համար։ Այս անհաւասարութեան գաղափարի հիման վերայ իւրաքանչիւր քահանայ չէ խղճահարւում իւր միաբանակից եղբայր քահանայից անգամ ծուխ փախցնել, իւր ծուխը աւելացնելու համար, որ անշուշտ չէ կարող բարեկամական և եղբայրական զգացմունք յարուցանել զրկուածի սրտի մէջ։ Այս դրութեան մէջ ճարպիկը, խորամանկը, մարդահաճն աւելի կարող է շահիլ, մինչդեռ համեստը, ամաչկոտը, անձնական պատիւը պահպանողը միշտ զրկուած պիտի լինի, ինչպէս և սովորաբար տեսնւում է։ Այս հանգամանքներն, ինչպէս և տակաւ առ տակաւ հայ եկեղեցական դասի նիւթական վիճակը կանոնաւորելու և ապահովելու ցանկութիւնն առիթ տուին ներկայ Վեհափառ Տ. Տ. Մակար Կաթողիկոսին և Հայրապետին ամենայն Հայոց շրջաբերական կոնդակ հանել, որ քաղաքների իւրաքանչիւր եկեղեցւոյ միաբան քահանայից ծուխերը հաւասարուեն թուով։ Պարտք կայ թէ տեղական հոգևոր իշխանութեանց և թէ նոյն իսկ ժողովրդոց աղդեցիկ դասերի վերայ ամենայն ճգամբ նպաստել հոգևոր Բարձրագոյն Իշխանութեան այս արդար և արդիւնաւոր կարգադրութեան իրագործման, որով թէ քահանայից մէջ, հաւասարութեան պատճառով միաբանութիւն և սէր կթագաւորէ ի բարի օրինակ ժողովրդականաց և թէ նոցա նիւթական ապահով վիճակը նոյն իսկ ժողովրդոց պատուաբեր կլինի և նրանց թոյլ չի տալ խղճահարուելու աղքատանման և թշուառ պաշտօնեայ տեսնելիս։ Ցուսալի է, որ թէ տեղական հոգևոր իշխանութեանց հաստատուն կամքով և թէ ժողովրդեան բարի ցանկութեամբ այս բարեմիտ կարգադրութիւնն առանց դժգոհութեան և վրդովման ի կատար կածուի ի միխիթարութիւն թէ եկեղեցական դասի և թէ ժողովրդական, համաձայն անդրդուելի կամաց Բարձրագոյն Հոգևոր Իշխանութեան։

Ցայտնի բան է այս կարգադրութիւնն առաջին քայլն է դէ-

պի եկեղեցականաց նիւթական ապահովութեան խնդրի լուծումն։ Մենք վերևը յիշեցինք, որ դորա համար հարկաւոր է չափաւորել և նոցա թիւը համեմատ ժողովրդոց թուին։ Հաւանական է, որ ծխոց հաւասարութեան վերոյիշեալ կարգադրութեան պիտի հետևի և իւրաքանչիւր եկեղեցւոյ եկեղեցականաց թուի որոշումն համեմատ նոյն եկեղեցւոյ ծխականաց թուին, հաշուելով գէթ 150—200 տուն ծուխ իւրաքանչիւր քահանայի համար։ Բայց այդ շտատի իրագործումն կարող է տեղի ունենալ միայն ժամանակի ընթացքում քահանայից թուի բնական ընթացքով նուազելովն։ Այս դէպքումն էլ թէ նոյն տեղական իշխանութիւնք և թէ ժողովրդականք անպայման հնազանդութեամբ պարտական են ոչակից լինիլ Բարձրագոյն Հոգևոր Իշխանութեան, իւրաքանչիւր արտաքոյ շտատի եղող հանգուցեալ քահանայի փոխարէն նորին չառաջարկելով ձեռնադրութեան համար։ Այս միջոցների ճիշդ գործադրութեամբ, տարակոյս չկայ, որ յընթացս գէթ տասնեակ տարիների կանոնաւորութիւն, հաւասարութիւն և նիւթական ապահովութիւն կտիրեն հայ եկեղեցական դասի վիճակի մէջ քաղաքներում։

Ը. ԷՋՄԻԱԾՆԻ ԳՐԱԴԵՐԱՆ

«Լուսաւորչի պատմոց» ձեռագիրը հեղինակութիւն է Սիմէոն վարդապետի Երևանցւոյ (ապա կաթողիկոս)։—Սա ունի երկու յիշատակարան։ Մինն Յովհաննէս բարեջան վարդապետին, որ աշակերտ է հեղինակին և որ արտագրել է 1770ին։ Իսկ երկրորդը Իսահակ Եպիսկոպոս Գեղամացուն է, որ այդ գիրքը ստացել է Ղուկաս կաթողիկոսից նուէր, իբրև իւր ուսուցչի հեղինակութիւն և իւր աշակերտակցի արտագրածը։

Առաջին յիշատակարանի քաղուածքն է.

«Գոնէ ի բազմաժամանակեայ աշխատութիւնս իմ խնայել աղաչեմ, որ ի ՌՃՂԲ թուականին մերոյ սկսեալ, ի չորս ամս բոլոր հազիւ կարացի աւարտել զսա և այն ևս մեծաւ տառապանօք և անգրելեաւ վշտակրութեամբ, յայսր և անդր տարագիր և աստանդական լինելով վասն դառնաշունչ բերմանց ամանակին, զորոց թէպէտ ի յառաջարանութեան մերում խոստացաք ճառել ի վերջ բանիցս. սակայն այժմ զրիչն իմ կայ առեալ մնաց խափան ի բազում ժամս, քանզի մնալով ի յափշութեան և

ի վարանս, ոչ գիտացի թէ զորն գրեցից և զորն թողից։ Քանզի վասն իմոց ծովացելոց մեղաց թէ ի մարմնական պետութիւնսն և թէ ի հոգևորական պետութիւնսն ի ժամանակս այս գոյր անպատմելի և անգրելի խռովութիւնք և մարտք։ Կարճառօտ այսքան իմասջիք, զի ի ներքանեաց ամացս ութն շահ փոխեցան մին զմիւսն սպանանելով և զտեղին յաջորդելով։ Մտածեա՛ թէ ո՞րքան իցէ լեալ վնասքն ի հեծելազօրաց սոցա և երկիրն ո՞րպէս իցէ ոտնակոխ լեալ հանգերձ գերեվարութեամբ, թո՛ղ զսրամաշ և սովամահ լեալսն. իսկ զփախստեայսն ո՞ թուեսցէ։ Գրեթէ երկիրն Պարսից և Այրարատեան ամայի եղև։ Իսկ ի հոգևորս ներկայիս, կաթողիղիկոսն, որ էր Ղազար ճահկեցին, ընդ միաբանից սրբոյն Աթոռոյն վէճունակ լեալ, նաև միաբանքն միաբանեալ ընդ Կ. Պոլսոյ պատրիարքին և այլոց առաջնորդաց ի յայնր վայր եղելոց, ընդ Ղազարու մարտեան բանիւ և թղթով յամս երկուս և թէ ո՞րքան վրդովմունք եղեն ի յազգս մեր և ո՞րքան անուանաբեկութիւն եղև վարդապետաց և վանականաց, ոչ է գրելի և թէ ո՞ւմ էր մեղն, Աստուած գիտէ։ Զայսքանս վասն այսորիկ գրեցի, զի գիտասջիք, թէ յորպիսում յամանակոջ և ո՞րպիսեաւ տաժանմամբ յաւարտ հասուցի, քանզի զայս ամենայն մոռացեալ (որ և ես իսկ կայի ի միջի) միայն հոգ և ջան իմ այս էր, զի զառ ի կատար հասուցից ի յօգուտ եղբարց իմոց։ Ուրեմն ի սիրազուն յեղբարցդ իմոց պարապողաց յընթերցասիրութիւնս, զի և դուք մի՛ ձանձրանայցէք յիշել յաղօթս ձեր (ի յօգտիլն ձեր ի սմանէ) զշարահիւսողս սորին զՍիմէօն վարդապետս (Երևանցի) նաև զհոգևոր ծնողն և զվարժապետն իմ՝ զՀամախեցի Յակոբ Նրբամիտ և գիտնական վարդապետն, որ ի նարդեանս իրրև զնոր իմն արեգակն փայլի գիտութեամբ և հանճարով ի սուրբ յերկնանման յԱթոռոջս ի մէջ վարդապետաց։ Նաև զմարմնաւոր ծնողն իմ՝ զԿարապետն և զԳայիանէն և զեղբայրսն իմ՝ զՄելքիսեթէկն, զՑարութիւնն և զՂազարն, զորս ի յիշելն ձեր, յիշեցեալք լինիջիք և դուք ի Քրիստոսէ Աստուծոյ։ . . . Արդ եղև զրաւ մատենիս որ կոչի Լուծմունք Արտաքնոց ի ՌՃՂԶ յամսեան օգոստոսի 10, ի դրան Սրբոյ Էջմիածնի, ի հայրապետութեան Տեառն Ղազարու ճահկեցւոյ կաթողիկոսին և ի պատրիարգութեան սրբոյ Երուսաղեմայ Տեառն Գրիգորի վարդապետին և Կ. Պոլսոյ Տեառն Յակոբայ Աստուածաբան վարդապետին. ողջ լերուք ի Տէր »։

ԵՐԿՐՈՐԴ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ.

Որպէս ի սկզբան անդ ի դրան գրոցս գրեցաք, զգեղեցիկ լուծմունքս արտաքնոց գրեաց վասն իւր՝ օրհնածին որդին արարողին լուծմանցս՝ գերերջանիկ և երանելի Հայրապետին Սիմէօնի՝ և աշակերտակիցն մեր՝ Յովհաննէս բարեջան վարդապետն։ Իսկ մինչ աւարտեաց զգրութիւն սորին, փոխեցաւ առ Քրիստոս յոյսն մեր ամենեցուն ի ՌՄԻԵ թուոջ մերում՝ և յամսեանն յուլիսի, և մնաց գիրքս այս առանց սրբագրութեան և կազմելոյ, մինչև ցվախճանումն հոգելոյս ծնողին մերոյ՝ նոյն երիցս երանելոյ

սրբազան Կաթողիկոսին Սիմէօնի։ Որոյ փոխումն առ Քրիստոս՝ եղև ի ՌՄԻԹ թուոջ մերում, և ի յուլիսի ԻԶ։ Իսկ ապա՝ մինչ յաջորդեաց զԱթոռ Հայրապետութեան ընտրութեամբ և հրաւիրմամբ հոգւոյն սրբոյ երջանկաշաւիղ և Սրբազան Կաթուղիկոսն Տ. Ղուկաս. (որում տացէ Տէր զերկարութիւնս կենաց՝ խաղաղութեամբ և անդորրութեամբ) խնդրեցի ի նորին աստուածարեալ սրբազնութենէն՝ շնորհել ինձ զգիրքս զայս։ Որ և լուաւ աղերսանացս և շնորհեաց ինձ, որում վարձահատոյց եղիցի Տէր՝ յերկակի կեանս իւր։ Զի յիրաւի լցոյց զերկոսին փափագս և զտենչանս սրտի իմոյ։ Որոց առաջինն էր այս, զի որովհետև գիրքս այս իմ լուսահոգի ծնողի և երախտաւորի շարադրեալն է, փափաքէի ունել, և զմխիթարութիւն նորին ի սմանէ առնուլ վայելելով զսա։ զի զիւր ձեռագիր հեղինակն ոչ կամեցայ ունել ընդ իս, այլ մնալ ի գրատանն Սրբոյ Աթոռոյս արձան։ զի անկորուստ կացցէ ընդ այլ ևս նորին ձեռագիր գրեանցն, այսինքն, Քարոզ գրքոյկն, Պրօկղին և Տօմարին։ Վասն որոյ, զայս՝ որ անմիջապէս ի ձեռագիր հեղինակէն էր օրինակեցեալ, բաղձանօք խնդրեցի և ստացայ։ Երկրորդ՝ զի գրող սորին լուսահոգի Յովհաննէս վարդապետն, ի մանկութենէ եղբայր իմ էր, հոգեկից և սիրակից, յետոյ եղև ընդ իս ծառայակից՝ ի ծառայութեան նոյն երջանիկ Հայրապետին Սիմէօնի, նաև աշակերտակից իմ և համշիրակ, զի ի միասին առնուաք զդասս արտաքին գրեանց, և սրբոյն Դիոնէսիոսի գրոցն և այլոց, ի նոյն սրբազան ծնողէն մերմէ։ Եւ զի նա առ Աստուած փոխեցաւ ցանկացայ ունիլ առ իս զվաստակս ձեռաց նորին զսոյն գիրքս իմաստալի, և միխիթարիլ սովաւ, իբրև նոյն հարազատ և սիրակից քաղցր եղբօր բան որ առ Տէր գնաց, և միշտ յիշել զնա։

Զոր ի դասս սրբոց վարդապետացն դասեսցէ Քրիստոս՝ յաւուր մեծի դալստեան իւրոյ, շնորհելով զթողութիւն մարդկօրէն սխալանացն։ Արդ՝ ուրեմն որք յետ մեր վայելիցէք զսա յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զհեղինակս սոցին՝ զհոգելոյս ծնողն մեր հոգևոր, զՏէր Սիմէօն երջանկափայլ Կաթուղիկոսն։ Ընդ նմին յիշեսջիք և զնորոգ Հայրապետն մեր Աստուածընտիր, զՏէր Ղուկաս Կաթուղիկոսն որ շնորհեաց ինձ զսոյն գիրքս։ Ապա յիշեսջիք զաշխատողն ի վերայ սորին և օրինակողն՝ զնոյն յիշեալ համշիրակ եղբայրն իմ, զհոգելոյս Յովհաննէս վարդապետն, հանդերձ երկակի ծնողօք իւրովք և ամենայն ննջեցելովք։ Հուսկ յետոյ՝ և զիս զյետնեալս յամենայնի ի ծնունդս լուսածին մօրս մերոյ Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, զնուաստ և զմեղսամած Խաչակ Եպիսկոպոս Գեղամացի, զաշակերտս հեղինակին գրոցս, և զեղբայրակիցս օրինակողի սորին, որ Եղէսմա ստացող, և ծաղկեցուցի, կազմել ետու, և սրբագրեցի, ի վայելս իմոյ նուաստութեան, և իմոյնոց հարազատից՝ որոց և դեպ լիցի զկնի անցման իմոյ։ Զոր վայելելով ուրեմն՝ անմոռանալի յիշմամբ յիշեսջիք զանարժանս բարւոյ յիշատակի, և զերկակի ծնողն իմ, և զամենայն ննջեցեալս և կենդանիս մեր։ Եւ զոք յիշեալ լինիջիք յանձառ ողորմութիւնս և ի-

գթութիւնս Տեառն Աստուծոյ յամենայն ժամ աստ և յանանց կեանսըն ամէն։

—

№ 1872 ձեռագրի յիշատակարանն է. Ամենազօր շնորհիւն և ողորմութեամբն Աստուծոյ յանկ եղեալ աւարտեցաւ գիրս Պրոկղի Պղատոնական իմաստասիրի յամի փրկութեան մերոյ՝ ՌՉԱԲ. և ի մերում թուականութեանս ՌՄԻԱ. ի Քրիստոսահիմն Աթոռս Ս. Էջմիածին։ ի գերիշխանական Հայրապետութեան Տեառն Սիմէոնի գերերջանիկ և սրբազան Կաթուղիկոսի ամենայն Հայոց Երևանցւոյ։ գթաշատ և բազմաբախտ Տեառն իմոյ և օրհնածին ծնողի ի վայելս նուաստ անձինս Յովսէփայ անարդիւն վարդապետի Սանահնեցւոյ՝ յազգէ Արղութեան։ Որ ի տղայութենես հասակէ՝ սպասաւորելով սրբազան վեհապետին՝ ընկալայ ի նմանէ զյոլով խնամս և զերախտիս և ըստ իմում չափու զշնորհս։ Որ և արժանացոյց ևս զանարժանութիւնս իմ շնորհաց քահանայութեան, վարդապետութեան և եպիսկոպոսութեան։ որում Տէր կեանս երկարս խաղաղութեամբ տացէ։ Որ յառաջին ամէ հայրապետութեան իւրոյ մինչև ցայժմ՝ որ ահա տասներորդ ամ է հայրապետութեան իւրոյ՝ ոչ դադարեցաւ ի շինութեանց և յօգտաւոր գործոց։ Զի պարսպեաց զՍուրբ Աթոռս, զտանին եկեղեցւոյն և զսեղանատունն նորոգեաց։ Զբաղանիսն, զքարվանսարայն, զմոմատունն, զնոր դպիրատունն, զգոմն անասնոց նորապէս շինեցոյց։ Հաստատեաց և զտպագրատուն ի Սուրբ Աթոռոջս։ Զգեօղն Հեռացուցեալ ի պարսպէն, եկեղեցեաւն հանդերձ նոր շինեցոյց։ Բազմացոյց վասն Սրբոյ Աթոռոյս զայգիս գիւղօրայս, զխոտահարս, զբրնձահանս մեծացոյց զվերի այգին։ ԶԵղվարդ, Աշտարակ, Մօղնի և Աղուանատուն գիւղորայսն՝ որք մուլք էին լեալ Սրբոյ Աթոռոյս ի վաղ ժամանակի, և տաճիկք յանիշտակեալ էին։ Զանն։ մեծաւ առեալ ի նոցունց յետս։ սերիհականեաց Սրբոյ Աթոռոյս։ Եւ զՑօշական գիւղն։ յորում տաճիկք բնակեալ զհայսն վարեալ էին ի բաց։ այժմ՝ հանեալ զնոսա անտի։ արար հայաբնակ։ Զհաշտարխան և զբոլոր երկիրն Ռուսաց՝ որք ի Գանձասարցիսն էին յարկեալ։ և զինքնագլուխ առաջնորդ հաստատեալ։ դարձոյց առ Ս. Աթոռս։ և տէրունի արար։ Արար և զԿարս տէրունի։ Եւ բազում աշխատութիւնս կրեաց յաղագս երկձղեցեալ կաթուղիկոսութեան տանն Աղուանից։ և մանաւանդ սակս աղթարմայից զորս և կրէ տակաւին։ Եւ զայլ բազում գործս արժանիս յիշատակի արար։ և առնէ տակաւին։ որում Տէր լիցի վարձահատոյց։

Ա՛րդ՝ էր ի սոյն ժամանակս պատերազմ մեծագոյն ի մէջ երկուց հզօր թագաւորութեանցն Օսմանցւոց և Ռուսաց։ որ է տակաւին յոյժ սաստկագոյն։ Զորոց պատճառէ վրդովեցեալ է աշխարհ ամենայն։ մանաւանդ խլըզճալի ազգն մեր յամենայն ուրեք են ի մէջ մեծաց վշտաց և նեղութեանց։ որք նեղին և կեղեքին ի նեղչաց։ ի բռնացելոց և ի սրիկայից։ յաւար առողաց և ի գերողաց և յայլ այսպիսեաց։ Եւ յաղագս այսոցիկ՝ սրբա-

զան Վեհափառն մեր և մեր ամենեքեան կամք ի մէջ մնծաց հողոց և տրամութեանց, ցաւելով վասն խղճալի աղգիս մերոյ՝ և օգնութեան Տեառն սպասելով։ Որ և նոյն ինքն ողորմածն Աստուած, այց արասցէ խղճալի ազգիս մերոյ, և ամենայն աշխարհաց պարգևեսցէ՝ զխաղաղութիւն իւր սուրբ։ Եւ արդ՝ ի զրաւ սակաւուկ պատմաբանութեանս, մեծաւ պաղատանօք հայցեմ ի սիրելի հարցդ և եղբարցդ իմոց, զի վայելեն ձեր զգիրս իմաստասիրական, ընթեռնլով՝ կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զբազմերախտ տէրն իմ և զշնորհածին ծնողն զՍիմէօն գերերջանիկ և սրբազան Կաթուղիկոսն։ Եւ զքոյս մարմնոյ ծնողսն իմ, զհանգուցեալսն ի Քրիստոս. զհայրն իմ Շիօշ բէկն, և զմայրն իմ Քէթէվան, և զեղբայրսն իմ զպարոն Մովսէսն, և զպ. Բէժանն, և զքորսն իմ Ռուսուդանն և զՄարիամն։ Եւ զբարեբաղբաղ որդիս և դստերս նոցին, և զայլ ամենայն արեանառու մերձաւորս և ազգայինս իմ. յիշեսջիք նաև զհամայն հոգևոր եղբարսն իմ, որք աշակերտակիցք են ինձ և համշիրակք և օրհնածին որդիք Սրբազան Վեհիս մերոյ, այսինքն զՄկրտիչ եպիսկոպոս քաղցրաբարոյ եղբայրն իմ, նաև զհամաշունչ և հոգեկից եղբայրն իմ Իսահակ շնորհաշնորհ վարդապետն, և զայլ ամենայն աշակերտակիցսն իմ, զհարազատ որդիսն Սրբազան Վեհին։ Յիշեսջիք ապա և զիմ անարժանութիւնս զՅովսէփ նուաստ Եպիսկոպոս, որ ստացայ զցանկալի գիրքս Պրոկղի իմաստնոյ՝ արդեամբք իմով, գրեցուցանելով զսա քաջավարժ քարտուղարին գահոյս սրբոյ և մեծի Մատթէոս խոհեմաշատ վարդապետին, եղբօրն իմոյ սիրեցելոյ։ Բայց աղաչեմ զսիրելի հարսդ և եղբարսդ իմ, զի մի օտարացուցանիցէք ի Սրբոյ Աթոռոյս Էջմիածնէ զգիրքս զայս, հանելով ի սմանէ արտաքս, քան զի յետ վճարման կենաց իմոց, անջնջելի յիշատակ ետու զսա ի դուռն սրբոյ և մեծի Աթոռոյս, հանդերձ ամենայն գրեամբք իմովք։ Զի զամենայնն շնորհօք և արդեամբք սորին եմ ստացեալ. ուստի չկամիմ զի օտարացին ի սմանէ։ Վասնորոյ աղաչեմ զհանդիպողդ ամենեսեան, լսել իմոյ աղերսանացս, որք եթէ լսելով յիրաւի կատարեսջիք զինդիրս իմ, Քրիստոս Աստուածն մեր լուիցէ խնդրուածաց ձերոց, և կատարեսցէ, և վարձուց բարեաց զձեզ զամենեսեան արժանացուսցէ՝ այժմ և յօրն յաւիտենից, ամէն։

Վերջին չորս յիշատակարանների մէջ յիշուած դառն քաղաքական հանգամանքները վերաբերում են Պարսկաստանի պատմութեան այն ժամանակին, երբ Նադր Շահի մահից յետոյ, Ծագեցան յընթացս 15 տարիների անընդհատ պատերազմների, թէ նորա յաջորդների և թէ օտար բռնաւորների մէջ և Պարսկաստանը տակն ու վրայ արին։ Արիւնհեղութեանց, աւարառութեանց, գերեվարութեանց վրայ աւելացաւ և սովն, որ ոչ պակաս վնաս պատճառեց երկրին քան պատերազմը։ Այս սա-

վը ժամանակակից պատմաբան Խաչատուր վարդապետը համեմատումէ պատմիչ Յովհաննէս Կաթողիկոսի նկարագրած սովի հետ և նրանից էլ աւելի սաստիկ է համարում, իսկ այս ժամանակի քաղաքական վիճակի մասին ասումէ. «այր զարամբ ելանէր, յոփշտակել զգահն Պարսից»։ Այս կարճ ժամանակամիջոցում, այն է 1747—1762, Պարսկաստանում իրանց շահ հրատարակում են Նադր Շահի թոռը Շահռուխ, նորա եղբօրորդիք Աւոէլ, Իբրահիմ, Շահ Սուլէյման երկրորդ, Ալիմերդէն խան, Հասան խան Ղաջար, Քերիմ խան և Ազատ խան, որոց բոլորի մահից յետոյ Քերիմ խանը 1762—1778 տիրանումէ Պարսկաստանին, ուստի և № 1382 ձեռագրի յիշատակարանն ասումէ, գրեցաւ գիրքս ի ՌՄԺԵ թ. (1766) ի թագաւորութեան Պարսից Քերիմ-խանի։

Յիշատակարանի միւս բովանդակութիւնք վերաբերում են երջանկայիշատակ Սիմէօն Կաթողիկոսի գործողութեանց յօգուտ բարեկարգութեան Սուրբ Աթոռոյս և նորա ջանից ընդարձակելու Ս. Էջմիածնի հայրապետի իշխանութիւնը զանազան վիճակների վերայ, բաղմացնելու Աթոռի կալուածները, նոյնպէս և նորա գրաւոր վաստակին ու աշխատանաց՝ Աթոռը գիտութեամբ ճոխացնելու։

№ 1872 ձեռագրի յիշատակարանը բացի Սիմէօն Կաթողիկոսի գործողութեանց բովանդակումէ տեղեկութիւնք և հանգուցեալ Արզուխեանց Յովսէփ Կաթողիկոսի մասին կենսագրական նկատողութիւնք, որոնցից երևումէ որ նա աշակերտած է Սիմէօն կաթողիկոսին և նրանից ստացել է ուսման հետ և վարդապետութիւն և եպիսկոպոսութիւն։ Յիշւում են յիշատակարանում և Յովսէփ կաթողիկոսի աղգականաց և աշակերտակից ընկերների անուններն, որոնք նշանաւոր եկեղեցականք եղան ապագայում։

ԼԳ *)

Շապինոս վանդի ճանապարհը և երևոյթները, վանդական այգի. Շապինոս-վանդը. նորա արյանագրոնները. եկեղեցոն նկարագրոնները. հոյակապ խցեր և սենյակներ. մի-ոն շինոնները. պապանապարքեր. գոմ, ջրաղաց. գեղեցկանկարոն. վանդի պարտեզոնները. մեքանոնական ընը. Շապինեանդ։

Բարձրացէք այժմ դէպի Հասանքեանդի վերայ կախուած ժայռերի արևելեան լանջը, անցէք այդ նեղ ելևէջներով երկու ահագին ժայռերի միջից և լերան արևելեան լանջում դուք կգտնէք վանքապատկան հոյակապ շինութիւններ։ Կամաց կամաց բարձրանումէք Հասանքեանդից դէպի արևելք։ Եթէ ոտով էք՝ շնչասպառ էք լինում, եթէ ձիով էք՝ ձին սառտիկ է հեթում։ Ահա բաւական բարձրացաք։ Հասանքեանդը իւր շրջապատ այգիներով, գետակով և բլուրներով դրած է ձեր ոտքի տակ։ Իսկ ձեր գլխի վերը՝ աջ և ձախ կախուած են դիմադիր ժայռերի գագաթները։ Դուք անցնումէք թէև նեղ կապարով, բայց զովանումէք խիտ անտառի ստուերում, լսում էք ձեր ոտքի տակ հոսող վճիտ առուակի խոխոջիւնը։ Ձեռք բարձրացրէք և այդ ծառից պոկեցէք կարմիր սալոր, միւսից ոև՝ և երրորդից դեղին սալոր։ Կամենաք խաղող, բայց նա մանրապտղուղ է, վայրենացել է, բարձրացել է ծառերի վերայ։ Այդ պտղատու ծառերի մէջ կան խնձոր և անպտուղ ծառեր։

Երկինքը պայծառ է, արեգակը սփռումէ իւր այրող ճառագայթները. օրը տաք է և ամեն մի կենդանի որոնումէ իւր համար աւելի զով տեղ։ Այս անտառի մէջ կարող են լինել զանազան վայրենի կենդանիք։ Ահա ձեր աջ կողմում խիտ մացառուտի մէջ սառտիկ ճայթիւններ է լսւում, իսկ դուք ոչինչ չէք նկատում։ Ճայթիւնը շարունակւումէ և սակաւ առ սակաւ հեռանում։ Ի՞նչ պէտք է լինի դա։ Մացառուտից փոքր ինչ այն կողմը, վարելահողի մէջ յանկարծ ձեր առաջ կանգ-

(*) Սկիզբն տես «Փորձ» ամսագիր. 1877 թ. Թ. Գ. գլ. Ա—Ե. Թ. Դ. գլ. Զ—Ժ. 18 $^{/}_{78}$ թ. Թ. Բ. գլ. ԺԱ—ԺԶ. Թ. Դ. գլ. ԺԷ—ԻԲ. 1879 թ. Թ. Ա. գլ. ԻԴ—ԻԵ. Թ. Ժ. գլ. ԻԶ—ԻԸ։ 1881 թ. Թ. Գ. գլ. ԻԹ—Լ. Թ. Դ. գլ. ԼԱ. Թ. Ե—Զ. գլ. ԼԲ և ԼԳ։

նում է սրտաճաք արջը: Խեղճ գազան, ինչի՞ պէտք է վախե-նաս՝ երբ քեզ ամենևին հալածող չկայ այս բոլէիս, կ՚ուզէինք տեսնենք քեզ, դուցէ մեզանից շատերը ամենևին արջ չեն տե-սած: Բայց վախկոտ գազանը իւր վերջին հայեացքը արձակեց մեզ վերայ և անհետացաւ միւս մացառների մէջ:

Դուք այնուամենայնիւ շարունակում էք ձեր ընթացքը նոյն նեղ ճանապարհով, ծառերի տակից, առուակի ափերով: Ձիան-ցը սանձաթող արած՝ դուք դեռ ևս մտածում էք արջի վերայ, որ յանկարծ ձեր ձին խրտնեց, արագ յետ շրջուեց, ձեր գլու-խը դիպաւ ծառի ճիւղերին. իզուր խրատում էք մտրակով ձիուն, ընտրում այդ օրուայ այդ տաք ժամանակ մերձակայ բոլոր ժայռերից ժողովւում են այդ անտառի մէջ, առուակի վերայ բազմաթիւ կաքաւներ: Չպէտք է մոռանալ որ այդ թըշ-ուառ թռչունները անթիւ թշնամիներ ունին. աղուէսը, բա-զէն, արծիւը, մարդը և այլն. ամենքը նորանց թշնամիներն են, ապա ի՞նչպէս չվախենան խեղճ թռչունները: Հեռուից լսելով որ և է ձայն, ճայթիւն, պայթիւն և այլն, բոլորը ժողովւում են մի թփի տակ և ծպտուն մնում, հէնց որ վտանգը մօտենում է, նոքա խմբովին յանկարծ թևերը իրար զարկելով թռչում են միասին այնպէս որ նորանց թևերի թրթփալուց ոչ միայն ձեր ձին այլ և դուք կզգաք բոլէական սարսուռ:

Արդեօք այս ի՞նչ անտառ է ընկած երկու սարի ձորակի մէջ, սառնորակ առուակի լայն ափերը զարդարող, որ բաղկացած է գոյն զգոյն սալորի, վայրենացած խնձորի և այլ պտղատու և անպտուղ ծառերից: Հարցը պարզ է և լուծելը դիւրին: Այս անտառը վայրենացած այգիներ են, որոնք երբեմն պատկանելիս են եղել Տատինու վանքին, որոնք մշակուած և փայփայուած են եղել նոյն վանքի այժմ անհետացած միաբանութեան ձեռ-քերով:

Հայոց ազգի այս տեղի երբեմն անապատական մրջիւնները կարել՝ անհետացել են առանց պատմութեան, յիշատակարանի, անուան և աւանդութեան, իսկ նոցա երկրագործական ար-դիւնքը մնացել՝ հասել են մինչև մեր օրերը և նոքա փոխանակ վանքին կամ մարդկանց ժառանգութիւն լինելու՝ դարձել են արջերի, կաքաւների և այլ վայրենի կենդանիների և թռչուն-ների բնակարան. . . . :

Դուրս գանք այս անուտուռից դէպի սարերի հարթավայրը։ Մեր առաջ ահա բացւում է մի լայնանիստ սարալանջ, որ արևմուտքից դէպի արևելք աստիճանաբար բարձրանում է դէպի Թաքեադոնդուրան երկնաճեմ լերան գագաթը։ Ցիշատակած լանջի վերայ, անտառի բերանում սփռուած են Շատինու վանքի տըխուր աւերակները։

Շատինու վանքը դրած է լեռնակաթսայի մէջ, ինչպէս ասում թ աքեադոնդուրանի արևմտեան լանջում։ Վանքի արևմտեան բնական պարիսպը կազմում են այն երկու ահագին ժայռերը, որոնք իջնում են դէպի Հասանի գիւղը, դէպի Ալագեսպ գետի ձախ ափերը։ Ժայռերից հարաւայինը շարունակուելով դէպի արևելք՝ միանում է Թաքեադոնդուրանի փեշերի հետ և կազմում է յիշեալ կաթսան, Շատինու վանքի այժմեան յատակավայրը։

Մուտքանք վանքի պարսպին։ Վերջինը քառակուսի է, լայնանիստ և քարաշէն։ Նորա հարաւային պատը, որի վերայ շինած են շատ խցեր, սրբատաշ է, իսկ մնացեալ երեք կողմերի պատերը հասարակ, անտաշ քարերից են, Պարիսպը ունի երկու դարբաս, մեծը արևմտեան կողմում, իսկ փոքրը—արևելեան։ Մեծ դարպասով մենք մտնենք պարսպի ներսը։ Ո՜հ, ինչ ահռելի քարակոյտեր են միմեանց վերայ թափուած ու վայրենի կանաչ ու չորացած խոտերով խճճուած։ Այդ քարերը թափուած են բազմաթիւ շինութիւններից։

Եկեղեցին կանգնած է պարսպի մէջ տեղ, մեծ է, ձևը սաղաշէն, ուրեմն առանց գմբեթի։ Շինուածքը կրաշաղախ է, մեծամեծ կտրոյտ քարերից, բայց ոչ սրբատաշ։ Տանիքը ամրոյջ է և մեծ սալաքարերով ծածկուած։ Տանիքի հարաւային մասի սալածածքը թափուած է բաւականին։

Եկեղեցին ունի երեք դուռն՝ հարաւային, հիւսիսային և ամենագլխաւորը՝ արևմտեան պատի մէջ։

Եկեղեցու հարաւային դրան վերը, արտաքին կողմից գրած է, «Ես Տէր Սարգիս տվի սուրբ Մարտիրոսի իւր մատաք ու Անգեղի ու Եղնիս Ժողովրդի սուրբս . . . . » Թէպէտ երևում է, որ այս արձանագրութիւնը բերուած է այլ տեղից, բայց ափսոս որ մի մասը եղծուած է։ Այստեղ յիշւում է Անգեղ և Եղնիս։ Առաջին բառի վերայ ես բաւականին խօսել եմ ԻԸ նամա-

կումն. իսկ երկրորդ բառի նշանակութեան վերայ կյիշեմ՝ երբ կհասնենք Ալագեազ գիւղը։ Սոյն այս հարաւային դռնից դէպի արևմուտ գրած է «Բարեպաշտ իշխանին Սմբատայ ես Վահրամ և ամուսնին իմ և որդիքն իմ Սմբատ, Ուքան տվաք Վաղցանոյ ուռոց տրան ի սուրբ Սիոնս։ Գ. ժամ, Բ. ինձ, Ա. ամուսնին իմոյ...։» Այս արձանագրութիւնը ևս եղծուած է և բերուած է այլ տեղից։

Արևմտեան դրան առաջ, արտաքին կողմից շինած է նախագաւիթ սրբատաշ կապոյտ քարից, կամարակապ, չորս հիւսիսային և չորս հարաւային, ընդ ամենը ութ սիւնի վերայ հաստատուած, որոնք արդէն խոնարհուած են։ Կանգնեցէք այս նախագաւթում և նայեցէք եկեղեցու դրան վերը, ուր կտեսնէք դրան վրայի մեծ սալաքարի ճակատի վերայ հազիւ նշմարելի՝ սև ներկով գրած «Շինեցաւ եկեղեցիս Թվին ՌՃԴ. (1104)։» Սորանից վեր, պատի մէջ հագուցած է միջին մեծութեամբ սպիտակ մարմարիոն խաչքար, իբրև յիշատակ Զուլայեցի մահտեսի Յակոբին՝ հայկական 1105 կամ փրկչական 1656 թուականին։ Քարը ներկայացնում է խաչ՝ իւր պատուանդանի մօտ ծնկաչոք ազօթող մի ծերունի, իսկ երկու կողմում սրաթափ քերոբէ և սերոբէ։ Խաչքարի վերայ արձանագրուած է «Սուրբ խաչս յիշատակ է մահտեսի Յակոբ Զուղայեցուն և ծնողաց Աւագին, Եղիսաբեթին, Թվին ՌՃԵ. (1105)։» Սորանից վեր նշմարելի է մի այլ խաչքար հասարակ քարից «ղՍտեփաննոս յիշեցէք ի Տէր։»

Յիշեալ Զուղայեցի Յակոբը եղել է վաճառական, ըստորում պարսպի հիւսիսային պատից դուրս գերեզմանատան մէջ կանգնեցրել է 1631 թուին մի խաչքար ևս, որի արձանագրութիւնը յիշում է նոյն մահտեսի Յակոբ Զուղայեցուն և անուանում է վաճառական։

Կանգնելով եկեղեցու շեմում՝ դուք տեսնում էք կախած փայտեայ դուռը, որ շինել է Հասանի գիւղի ժողովուրդը. սակայն շեմի վերի փայտը, որի մէջ հագուցած է դրան ոտը, անկասկած շինած է եկեղեցու կառուցման հետ։ Նոյն դրան պատի մէջ շինած է փայտէ նիգի տեղը, բայց նիգը չկայ։

Մի քայլ առաջ գնանք դէպի ներս։ Ահա մեր աչքի առաջ կանգնած է տխուր եկեղեցու տխուր բեմի վերայ վէմ քարը։

Նորա վերայ բաղմած չէ ոսկեզօծ սկիհը, զգեստաւորուած պատարագիչ քահանան չէ երևում և դողդոչիւն մատներով չէ արտայայտում «խաղաղութիւն ամենեցուն» բառերը։ Դպիրների ձայնի արձագանգը այլ ևս չէ լսւում այդ տխուր կամարների տակ։ Տաք ջրի գոլորշին չէ բարձրանում աւազանից և մկրտուող մանկան ճիչը յաւիտեան կտրուած է։ Այդ ամենի փոխարէն ձեր ականջին թնդաց աղաւնիների թևերի թնդիւնը, որոնք ձեր ներս մտնելուց վախեցան թև թևի զարկելով դուրս թռան լուսամուտներից։

Եկեղեցու երկարաձև և դեռ ևս ամբողջ կամարը ամրացած է չորս քառակուսի քարաշէն սիւների վերայ։ Ութ լուսամուտ լուսաւորում են նորա ներսը։ Առաստաղի փոքրիկ, նեղ անցքից կախւում էին երբեմն զանգակների պարանները։ Պատերի զանազան տեղերում կան մինչև հինգ խուլ պատուհաններ։ Այլ և այլ տեղերից և գերեզմանատներից բերած խաչ քարեր դրած են պատերի մէջ։ Կամարակապ աւազանը զետեղուած է հիւսիսային պատում։ Կրաշաղախ զանգուածով կոկած է եկեղեցու յատակը։ Նայեցէք դէպի առաստաղ. այն տեղ, կամարի տակ, դեռ ևս կախուած են չորս հատ երկաթեայ կարթեր, որոնք այլ ևս չեն ճնշւում լուսափայլ ջահերի ծանրութիւնից, բայց կամաց կամայ մաշւում են ժանգից։

Բեմի իւրաքանչիւր կողմում կայ մի մի կամարակապ աւանդատուն։ Հիւսիսային աւանդատնից մի փոքրիկ պատուհանի միջից բացւում է ծածուկ մուրթը ճանապարհ, իբրև պահարան, որ աստիճաններով բարձրանում է մինչև տանիքի տակը և այն տեղ միանալով նոյնպիսի պահարանի հետ, որ գալիս է բեմից, երկուսը մի ընդհանուր պահարան կազմած գնում են տանիքի տակով մինչև եկեղեցու արևմտեան կողմը։ Երևում է որ ահի և վտանգի ժամանակ այդ տեղ թագցնելիս են եղած եկեղեցու զարդ ու զարդարանքը։

Եկեղեցու բեմը բոլորովին ամբողջ և յատակը կրամածով կոկած է։ Նորա վերայ շարուած են կաւէ ճրագարաններ, խնկի, մոմերի և ածխի մնացորդք։ Նոքա մերձակայ հայ գիւղականների ջերմեռանդութեան նշաններն են։ Սեղանի երկու կողմից երեք երեք աստիճանով բարձրանում է դէպի բեմը, ուր անշարժ կանգնած է սեղանաձև վէմ քարը ամրացած միւս քարի վերայ։

Բեմի պատերը տակաւին կրում են իւրեանց վերայ ըստ մեծի մասին խանգարուած՝ Աւետարանից առած գոյն զգոյն իւղաներկ տեսարանների մնացորդք, որոնց իւրաքանչիւրի տակ հայկական սև տառերով դրոշմած է «Ոպնալոսայ» «Վէրնապոն» «Բաբրնկէց։»

Բեմի պատի մէջ շարուած են հինգ հատ պահարան, որոնցից մինը ունի փոքրիկ աւազան քարէ խողովակով դէպի վայր, երևի ժամարարի ձեռքերը լուանալու համար։ Իսկ միւսից բարձրանում է ծածուկ ճանապարհ դէպի տանիք, որի մասին վերը արդէն յիշեցի։ Ահա սոքա են այն բոլոր նիւթերը որ կարելի է գտնել եկեղեցու մէջ։ Այժմ դուրս գանք և նկատողութեան առնենք նորան շրջապատող շինութիւնները։

Ամենից հոյակապ, ամենից շքեղ, ամենից մեծածախս, հարաւային պարապատին կից երկայարկ շինութիւններն են։ Վերին յարկը շարեշար խցեր են, իսկ ստորինը՝ սեղանատներ։ Այս բոլոր շինութիւնները ամբողջովին, նոյն և հարաւային պարիսպը սրբատաշ կապոյտ քարից են կազմած, խուցերը ցիսաշաղախ, իսկ մնացեալը՝ կրամած։ Որովհետև վանքի տեղադրութիւնը բաւականին թեք է հիւսիսից հարաւ, հետևաբար հարաւային պարիսպը շատ բարձր է։ Վերջինը իւր արտաքին կողմում յենուած է ամրութեան համար երեք միմեանց հաւասար հեռաւորութեամբ կիսաբոլորակ բրգերի վերայ, մի մի արևելեան և արևմտեան ծայրերում, իսկ երրորդը նորանց մէջ տեղը։ Իւրաքանչիւր բուրգ բովանդակում է իւր մէջ սենեակներ։ Բոլոր խուցերի լուսամուտները բացւում են դէպի դուրս, դէպի հարաւ, իսկ դռները՝ դէպի հիւսիս, դէպի պարսպի ներսը։

Անցնենք պարսպի ներսը։ Բոլոր խցերի առաջ եղել է մի հատարակաց սրահ երկարութեամբ արևելքից արևմուտք, այժմ լիովին խոնարհուած։ Խցերի միջին տեղը իւր առանձին կամարաշէն սրահով կանգնած է մի սենեակ, որից աջ և ձախ, այսինքն դէպի արևելք և արևմուտք միաշար ձգւում են իւրաքանչիւր կողմում պատնէշներ միանման կամարաձաձք խցեր, մեծ մասի առաստաղները խոնարհուած։ Ուրեմն այդ կարգի բոլոր խցերի թիւն է ԽԱՆ և ՀԸՐ։ Իւրաքանչիւր խուց ունի մի հատ լուսամուտ որ նայում է դէպի հարաւ, ըստ որում հարաւային պարիսպը կազմում է այդ խցերի և սեղանատների յե-

տեւի պատը։ Արեւելեան շարքի արեւելեան ծայրի սենեակի դրան վերը փորագրած է «Տէր Յովհաննէս։»

Վերը յիշած առանձնակի սրահով շինած սենեակը միւս քսան եւ չորս սենեակներից աւելի արձակ է։ Շեմի ճակատին դրոշմած է «Տէր Աստուած Յիսուս Քրիստոս։» Այս սենեակի ընդարձակութիւնը, մէջ տեղ լինելը եւ այլ նշանները իրաւունք են տալի կարծելու թէ դա վանահօր կացարանն է եւ զետեղուած է միջին բուրգի մէջ։

Մտնենք ներս։ Արեւմտեան պատի մէջ երեւում է կամարակապ հնոց (բուխարի), լուսամուտը շատ բարձր է եւ նայում է դէպի հարաւ։ Սենեակի արեւմտեան պատի մէջ կայ փակ պատուհան՝ մի սալաքար յարմարութեամբ բերանին հագուցած։ Այս ի՞նչ բան է, գուցէ ստորերկրեայ ճանապարհ է։ Վերցնենք բերանի քարը. ո՛հ, որքա՜ն նեղ է բերանը եւ ներսը մութ։ Ես այնուամենայնիւ պէտք է մտնեմ, թող տանի ուր կուզէ։ Վառած մոմը ձեռքս, մարմնիս բոլոր մակերեւոյթը պատերին քսելով եւ, յայտնի բան է, հողաշաղախ լինելով, կամաց կամաց իջնում եմ դէպի վայր։

Մի քանի աստիճան իջնելով՝ ահա բաժանուեց մի փոքր անցք դէպի մի մութ սենեակ աշտարակի մէջ։ Ցիշեալ մութ անցքից կրկին իջնելով ես դուրս եմ գալիս երկու միմեանց կից մութ սենեակի մէջ, որոնք նոյն աշտարակում յիշեալ սենեակի տակն են։ Նայում եմ շուրջս, նայում եմ բոլոր անկիւնները եւ չեմ գտնում այլ ելս ոչ մուտք եւ ոչ անցք։ Ուրեմն այս գաղտնի սենեակները գաղտնի պահարաններ են թանկագին իրեղէններ թաղցնելու երկրի այն ժամանակի անապահով միջոցում։ Վատ չէր լինիլ եթէ համոզուենք որ սենեակը վանահօր կացարանն է։

Այժմ իջնենք ներքնայարկը։ Այս ի՞նչ հոյակապ կամարաշէն սրբատաշ սեղանատներ են։ Վանահօր կացարանը ներքին յարկում ելս բաժանում է սեղանատները երկուսի՝ արեւելեան եւ արեւմտեան։ Իւրաքանչիւր սեղանատան երկարութիւնը ուրեմն հաւասար է վերին յարկի տասներկու խուցերի երկարութեան։ Սեղանատան կամարակապ առաստաղը երկու կողմից ամրացած է տասներկու որմնասիւն սիւների վերայ։ Արեւելեան սեղանատան արեւելեան ծայրում պատի ճակատում շինած է

մի աւազան փոքր խողովակով դէպի դուրս՝ գուցէ կերակուրի մնացորդը կամ ամանների լուացքը դուրս ածելու համար։

Արևմտեան սեղանատան արևմտեան ծայրումը աշտարակի մէջ բացուում է մի սենեակ։ Սոյնպիսի մի սենեակ կայ արևելեան սեղանատան արևմտեան ծայրումը, որ ունի դէպի հարաւ փոքրիկ լուսամուտ, ծածկուած նոյնչափ սալաքարով, որի մէջ տեղ բացած են չորս հատ բոլորակ ծակ՝ հրացանի գնդակի մեծութեամբ։ Նորանց միջով հաղիւ թափանցում է սենեակի մէջ մի աղօտ լոյս։ Ի՞նչ նշանակութիւն պէտք է ունենար այս սենեակը իւր ժամանակ՝ ես բացադրել տկարանում եմ, բայց ուղեկիցներս կարծում էին որ նա պէտք է լինէր մեղու պահելու տեղ։

Արևելեան սեղանատան արևելեան ծայրում, աշտարակի մէջ բացուում են երկու կից ընդարձակ սենեակներ։ Կից այս սենեակներին կան այլ ևս չորս լայն սենեակներ՝ ծխից սևացած պատերով, որ ցոյց է տալի թէ նոքա եղել են բաղմաթիւ միաբանութեան խոհանոց։ Այս են ահա հարաւային պարսպին կից շինութիւնները։ Երկու լիովին ամբողջ մնացած սեղանատները մեղ կարծել են տալի, որ նոցանից մինը նշանակուած է եղել երևի միաբանութեան, իսկ միւսը հիւրերի կամ գուցէ միւս ստոր ծառայողների համար, որ անշուշտ եղել են ոչ սակաւաթիւ։

Անցնենք այժմ եկեղեցու արևելեան կողմը։ Այս տեղ մեղ ներկայանում է մի ընդարձակ կամարակապ շինութիւն, դուռը դէպի արևմուտք։ Սորա արևելեան պատի մէջ ներսում մի մարմարիոն խաչքար, վրան դրոշմած ՉԾԹ (959) հայկական թուականը։ Այս շինութեան հետ զուգահեռի և նորա երկարութեամբ ձգուում են երեք նոյնպէս կամարակապ շինութիւններ միայն նեղ դիրքով և իրար ու առաջինի հետ դռներով միացած։ Սոցանից մինը առաջին մեծ շինութեան հիւսիսային կողմումն է, իսկ երկու կիցը՝ հարաւային կողմումը։ Բոլոր շինութեանց կամարաձև առաստաղները բաւականաչափ խոնարհուած են։

Եկեղեցու արևմտեան կողմում կան մի քանի աննշան կամարակապ սենեակներ՝ մասամբ խոնարհուած։ Նոցա կարգում, գեանի մէջ շինած է մի ահագին կրապատ հոր ցորեան պահե-

լու համար։

Որպէս զի բոլորովին վերջացնենք պարսպի միջի զննելի նիւթերը՝ նկատի առնենք նաև մի քանի տապանաքարեր, որոնք կարող են տալ մեզ տեղեկութիւն սոյն վանքի պատմութեան մասին։ Եկեղեցու արևելեան կողմում մի տապանաքարի վերայ նկարած է գաւազանը բռնած ձեռք այս՝ անթուական արձանագրութեամբ «Դաւիթ վարդապետ»։ Սորա մօտ դրած մի այլ տապանաքար կրում է հետևեալը։

«Սոյն այս տապան Պետրոս դիտի,
«Գողով տեղեաւ Աստապատցի,
«Սորին ջանիւք ջուրս բերի,
«ՌՃԾԶ (1156) թվի
«Առ Տէր մահուամբ վերափոխի։»

Այս տապանաքարի վերայ նկարած է ինքը Պետրոս վարդապետը ունելով գաւազանը ձախ՝ և խաչը աջ ձեռքում։

Բազմաթիւ միաբանութիւնը անշուշտ պէտք է ունենար և շատ հանգուցեալներ իւրեանց տապանաքարերով, բայց վերջինները տարաբաղդաբար չեն երևում, որ գուցէ տային մեզ զանազան պատմական տեղեկութիւններ։ Երևի նոքա ծածկուած են աւերակ շինութիւնների քարակոյտի տակ։

Դուրս գանք այժմ պարսպից արտաքին առարկաները զննելու։ Մենք կանգնած ենք արևմտեան մեծ դարբասի առաջ երեսներս դէպի արևելք։ Դարբասի հիւսիսային պատի առաջ սրբատաշ քարէ կամարի տակ մի հատ խողովակից աղբիւրի ջուրը հոսելիս է եղել քարէ աւազանի մէջ։ Իսկ այժմ չկայ և մի կաթիլ ջուր։

Սոյն այս պարսպի մօտ՝ երեք զուգակից, միաչափ երկայն՝ կամարածածք քարէ շինութիւնները մի հասարակաց դռնով արդէն խոնարհուած են։ Դոքա գոմեր են, ուր բնակւում էին վանքապատկան անասունները։ Գոմերը նորոգել է 1739 թուականին նոյն վանքի առաջնորդ Անտոն վարդապետը, որ շինութեանց հարաւային պատի վերայ, արտաքին կողմից թողել է հետևեալ արձանագրութիւնը։

«Շնորհաւքն Քրիստոսի,
«Ի Հայկազեան թվի
«ՌՃՁԸ (1188) երրորդի,

«Ես առաջնորդ սուրբ ուխտիս
«Անտոն վարդապետս Նորոգեցի
«Զտեղիք անբանից, վայելումն միաբանաց։»

Այժմ գնանք արևելեան դարբասի կողմը։ Սորանից դուրս իսկոյն մեր առաջ կգայ գետնափոր՝ ծածկուած քարաշէն խողով, որով երբեմն ջուր հոսելիս է եղել դէպի պարսպի ներսը։

Մօտ յիսուն քայլ դէպի արևելք զետեղուած է վանքապատկան ջրաղացը։ Նա ամբողջովին քարաշէն է։ Ջրաղացատունը եղել է կամարակապ, այժմ իսնարհուած, և ունեցել է մի աչք, այսինքն մի քար։ Նշանաւոր է նորա նաւի շինութիւնը. նա մի ուղղահայեաց հոր է սրբատաշ քարերով պատած, ինքը կոնաձև, ստորին կողմը նեղ, իսկ վերին կողմը լայն, երեք քայլ կամ մի սաժէն տրամագծով։ Սա բոլորովին ամբողջ է և ջուրը վաղուց փոխելով իւր ընթացքը՝ հեռացել է դէպի հարաւ։

Այս ջուրը՝ շուրջը քարապատ կաւէ լայն խողովակներով բերած է Թաքեադոնդուրան լերան արևմտեան կրծքից։ Նորա հոսանքի բնական ուղղութիւնը եղել է դէպի հիւսիս արևմուտ, դէպի յիշեալ լերան ստորոտում ընթացող Ալագեազ գետը՝ հէնց այն ձորով, որ հայերը կոչում են Ղաղաբի Յոր, իսկ թուրքերը Ղաղաբ դարբասի, Հոստուն գիւղի արևմտեան կողմում, գետի ձախ ափի վերայ և Շատինու վանքից դէպի հիւսիս։ Աւանդութիւնը հաստատումէ որ ոմն Ղազար այգի է տնկել այդ ձորում, ուր այժմ արդէն վայրենացած է ունաբի, կեռասի, կծոխուրի ծառեր, խաղողի որթ և այլն։

Եկեղեցու արևելեան կողմում դրած տապանաքարի արձանագրութիւնը, ինչպէս վերը տեսանք, հաստատումէ թէ 1156 թուականին հանգուցեալ՝ Աստապատցի Պետրոս վարդապետը կամ ըստ արձանագրութեան՝ դէրդ՝ իւր ժամանակին մեծ ջանքով բերել է ջուրը։ Պետրոս դիտի բերած ջուրը պէտք է այս իսկ ջուրը լինի, որ բերած է Ղազարի ձորի վերին մասից։ Հոստուն գիւղից այժմ ևս երևում է առուի հետքը ուղղութեամբ արևելքից արևմուտք՝ դէպի Շատինու վանքը։

Ջրանցքը այժմ խանգարուած է և ջրի միայն մի մասն հասնում է Շատինու վանքը, այն ինչ մեծ մասը թափւում է կըրկին Ղազարի ձորը։ Ջրանցքի մեծ և լայն կաւէ խողովակները այժմ ևս երբեմն երևում են հողի տակից Շատինու վանքի

մօտ։ Հասան քեանդի հայերը չեն ընդունում որ խողովակները ջրանցքի համար լինէին, այլ բացադրում են նոքա թէ Շատինու վանքի ոչխարի հօտը այնքան մեծ է եղել և կաթը առատ, որ Թաքեանդոնդուրան լերան լանջում ոչխարները կթել են և կաթը այդ խողովակներով սարից հոսեցրել են դէպի Շատինու վանքը, ուր թափուել է այն նաւը և տունը (վերոյիշեալ ջրաղացը) և այս տեղ շինելիս են եղել նորանից պանիր։ Ինչ և լինի, այս աւանդութիւնը ցոյց է տալի Շատինու անապատի երբեմնակի հարստութիւնը։

Պարսպից դուրս, նորա հիւսիս—արևելեան կողմում բարձրաւանդակի վերայ մի գերեզմանատան մէջ կան տապանաքարեր և կանգուն խաչքարեր։ Վերջիններից առաջինի վերայ գրած է «Խաչս յիշատակ է Ջուղայեցի մահտեսի Յակոբ վաճառականին. թվին ՌԾԺ. (1110)։» Երկրորդի վերայ «Այս է տապան Բստեցի մահտեսի Պետրոսին։» Բիստ գիւղը Ագուլիսի մօտ է։ Մի օրօրօցաձև տապանաքարի վերայ գրած է «Այս է տապան Աստապատցի մահտեսի Պօղոսին։» Մնացած տապանաքարերը արձանագրութիւն չեն ներկայացնում։

Յիշեալ արձանագրութիւնները ցոյց են տալի թէ Շատինու վանքը իւր ծաղկեալ ժամանակ որպիսի նշանաւոր սրբավայր է համարուելիս եղել, որ հեռաւոր տեղերից անգամ պատուաւոր մարդկանց մարմինները բերուելիս են եղել այդ տեղ հողին յանձնուելու։ Եթէ այսպիսի օրինակներ եղած են Աստապատից, Ջուղայից, Բստից, անշուշտ կլինէին և այլ տեղերից։ Շատինու վանքից մինչև Աստապատ է առնուազն—150 վերստ, մինչև Ջուղայ—200 վերստ, մինչև Ագուլիս—250 վերստ։

Այսքան մանրամասնութիւնից յետոյ մի նշանաւոր հարց է յառաջ գալի, ո՞ւր է Շատինու վանք տանող բերող ճանապարհը։ Միթէ բազմաթիւ միաբանութիւնը, նոյն և բազմաթիւ այցելուք անց ու դարձ էին անում այն նեղ, ծուռ և խորթ ճանապարհով, որով մենք բարձրացանք Հասանի գիւղից։ Ապա ի՞նչ կարիք կար շինել Ալագեազ գետի վերայ միակամար կամուրջը. [illegible] կամուրջ անունով։

Արդարև բազմաթիւ շինութիւններ ունեցող և հարուստ Շատինու վանքը չէր կարող մնալ առանց կանոնաւոր ճանապարհի։ Սորան որոնելու համար շօշափենք անդերը և անտառ-

ները, որոնք ձգուում են վանքից դէպի հարաւ, դէպի տաճկաբնակ Բէ-լէ-լ օլան գիւղը։ Այդ ուղղութեամբ մենք կնկատենք լայն հարթ ճանապարհի հետքը, որ վանքից գալիս անցնում է Բէ-լէ-լ օլանի տակով դէպի Ալագեազի գետը, դէպի Ծատուրի կամուրջը։ Այս ճանապարհը այժմ բոլորովին ձգուած է, տեղ առ տեղ քանդուած, տեղ առ տեղ վարելահող է դարձած, կամ ծառերով, մացառներով և խոտերով ծածկուած է։ Սորանով վերջանում է Շատինու վանքի շինութեանց նկարագրութիւնը։ Այժմ անցնենք վանքի պատմութեանը։

Արդեօք ի՞նչ պատմական տեղեկութիւն ունինք այս վանքի վերաբերութեամբ։ Ես մինչև այժմ չեմ կարողացել գտնել որ և է գրական աղբիւր այս մասին և այն կցկտուր տեղեկութիւնները որ պէտք է հաւորդեմ այժմ, քաղուած են արձանագրութիւններից։ Ո՞վ է հիմնել այդ վանքը և ե՞րբ։ Առաջին հարցը լուծելու ես անկարող եմ, ըստ որում յիշեալ արձանագրութիւններից ոչինչ չէ երևում։ Գուցէ քարակոյտերի տակ կան արձանագրութիւններ կամ տապանաքարեր, որոնք գուցէ կարողանային բացատրել մեր պահանջը, սակայն քանի որ այդ ենթադրութիւն է՝ կթողնենք իբրև ենթադրութիւն։

Երկրորդ հարցը լուծելու մոտաբերենք եկեղեցու արևմտեան դրան ճակատի սեանների գրութիւնը, որ եկեղեցին շինուած է հայկական 1104 կամ փրկչական 1655 թուականին։ Սորա հետևեալ տարին, 1656 թուականին մահտեսի Յակոբ Զուղայեցի վաճառականը հագցնում է այդ դրան վերի պատի մէջ իւր մարմարիոն յիշատակարանը։ Միւս բազմաթիւ շինութիւնները հաւանական է որ ժամանակակից լինին եկեղեցու շինութեան կամ յառաջ են եկած փոքր ինչ յետոյ։ Եկեղեցու արևելեան կողմի կամարակապ մեծ սենեակի մարմարիոն քարի թուականը 959, եթէ բերովի չէ, եթէ պատահմամբ չէ հագուցած պատում, կատարելապէս հակառակում է իմ վերջին ենթադրութեանը։ Յիշեալ թուականը այն ժամանակ ցոյց կտայ որ սենեակի շինութիւնը կառուցած է ամբողջ 145 տարի եկեղեցուց առաջ։ Սակայն կարծում եմ որ՝ մարմարիոնը պատահական է։

Ծատուրի կամուրջը, որ նոյնպէս պատկանում է Շատինու վանքին, շինած 1666 թուին, կամ եկեղեցու շինութիւնից ու-

ալիզ պատան և Ջ տարի յետոյ։ Այն այս շինութիւնից յետոյ տարի յետոյ Նախիջևանի մօտի Աստապատ գիւղացի Պետրոս վարդապետը կամ Դէաը մեծ ջանքով բերում է ջուր և ինքը մեռնում է 1707 թուականին։ Ամենավերջին արձանագրութիւնը վերաբերում է 1739 թուականին և պատկանում է գոմերը շինողնոյն ուխտի առաջնորդ Անտոն վարդապետին։ Ուրեմն իմ տեղեկութիւններս 1655ից մինչև 1739 թիւ կազմում են միայն ութսուն և չորս տարու ժամանակամիջոց։

Ընթերցողը տեսնում է որ իմ աղբիւրները և հետևաբար նոյանից հանած տեղեկութիւնները շատ չնչին են, համարեա որոշակի գաղափար չեն տալի մեզ Շատինու անապատի պատմական կեանքի մասին։ Օրինակ՝ մենք չիմացանք վանքի հիմնարկութեան բուն պատճառը ով է։ Ներկայ եկեղեցին սկիզբն է թէ հին վանքի տեղ վերանորոգած։ ինչ է եկեղեցու անունը։ բացի յիշեալ Սարգիս, Պետրոս և Անտոն վարդապետները էլի ով են եղել այստեղ միաբանութեան առաջնորդներ։ որքան միաբանութիւն է եղել, ինչ անցեալ և վերջ է ունեցել նա։ և այլն և այլն։ Տարօրինակ երևոյթ։ եկեղեցու շինութիւնը մեզանից ընդամենը 222 տարի առաջ և վերջին արձանագրութիւնը ընդամենը 138 տարի առաջ (հաշուելով 1877 թուից), միով բանիւ մեր ժամանակներից այդքան մօտ գոյութիւն ունեցող նշանաւոր Շատինու վանքը այսօր չունի մեզ համար ոչ պատմութիւն, ոչ տեղեկութիւն և ոչ աւանդութիւն։

Միաբանութեան թիւը գոնէ մօտաւորապէս որոշելու համար բաւական է ուշադրութեան առնել վանքի շինութեանց բազմութիւնը։ Դարաչագեազի աւերակ և շէն բազմաթիւ վանքերից և ոչ մինը չունի այն շարեշար ամբարները, սեղանատները, խուցերը և այլն, որպիսիք այժմ ներկայացնում է մեզ Շատինու վանքը։ Սա ունեցել է երկու մեծ սեղանատուն, քսանևչորս խուց, տասնևհինգ մեծ և փոքր սենեակ, երեք գոմ, մի աղբիւր, մի ջրաղաց, մի լայն ցորենահոր, գուցէ և աւելի շատ բաներ։ Սոքա կենդանի ապացոյց են որ վանքը ունեցել է բազմաթիւ միաբանութիւն։ Եթէ Շապինու, Շապին, կամ ինչպէս այստեղ շատերը արտասանում են Շապանց բառերը արտադրենք ՀԱՊ բառից, այս նոյնպէս ապացոյց կարող է լինել միաբանութեան բազմութեան։ Սակաւաթիւ միաբանութիւնը

չէր ունենալ այդքան շատ կացարաններ։

Միաբանութեան թիւը առաւել որոշակի իմանալու համար ես ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրում եմ ԻԸ նամակումս նկարագրած Ծոփո—ցի կամրջի արձանագրութեան վերայ, որի մէջ Ցատինու անապատի առաջնորդ Սարգիս վարդապետը գրում է «Միաբանեցաք ձեռնտուութեամբ Ղ (90) միաբանիւ.. եայլն»։ Ուրեմն յիշեալ արձանագրութիւնը որոշակի հաստատում է որ միաբանութեան թիւը 1666 թուականին եղել է իննսուն։ Իննսուն անձինք կազմում էին միմիայն միաբանութիւնը. բայց որքա՞ն էին դորանից ծառաները, խոհարարները, երկրագործները, տաւարածները, հովիւները, ձիապանները, այգեպանները, ջրաղացպանները և այլ կողմնակի մարդիկ, որոնք կազմում էին միաբանութեան երկրորդ օղակը։ Սոքա ևս պէտք է կազմէին նշանաւոր թիւ։

Ցատինու անապատը իւր ժամանակ հաւանական է որ մշակելիս լինէր իւր շրջապատ լեռնավայրերը և գուցէ Հասանի գիւղի գետաձորը։ Սորան ապացոյց է վերը յիշած պտղատու ծառերի և խաղողի որթի վայրենացած այգիները, որոնք այժմ իբրև վայրենի անտառ պատկանում են պետական գանձարանին։ Շրջակայ վարելահողերը նոյնպէս գանձարանի սեփականութիւն են, այսինքն մասնաւոր անձանց սեփականութիւն չեն։ Նոքա մշակում են Հասանքեանդի, Բիւլբիւլ օղլանի և մասամբ Օրթաքեանդի բնակիչների ձեռքով։

Պարզ է ուրեմն որ գուցէ հարիւր տարուց ոչ աւելի միաբանից առաջ բազմահարուստ, բազմաշէն, բազմամարդ և շքեղ Ցատինու անապատը այսօր չունի ոչ մի կտոր հող, ոչ մի ծառ, ոչ մի կաթիլ ջուր, ոչ մի տէր, այլ անտէր, անտիրական, աւերակ դարձած շարունակում է անդադար իւր ինքնակործանումը մինչև կհաւասարուի գետնի հետ և այս տողերը գրելուց մի քանի տասնեակ տարիներից յետոյ որ և է հետաքրքիր ճանապարհորդ այցելելով յիշեալ վանքին, նորա այժմեան կիսաւեր շինութիւնների տեղ կգտնի և ոչ մինը իմ նկարագրածներից, այլ լոկ կոյտ կոյտ քարեր։ Այս է հայ ազգի հնութեանց ճակատագիրը։

Ցատինու վանքին վերջնական հրաժեշտ տալուց առաջ յիշեմ այստեղ մի հանգամանք, որ իւր ժամանակ գուցէ փոքր

ինչ լուսաբանի այս վանքի պատմութիւնը։ Հանգամանքը այս է։ Ինձ պատմում էին Հասանի գիւղում, որ մի քանի տարի առաջ Թիֆլիզից եկել էր այստեղ մի ոմն հայ Շատինու վանքի սահմաններում թաղուած գանձ որոնելու։ Հայը իւր հետախուզութեան մէջ առաջնորդւում էր այն ցուցմունքով, որ տուել էր նորան Թիֆլիզաբնակ Շաղինեանց ցեղի մի անդամ, հաւաստիացնելով որ իւրեանց Շաղինեանց նախնիքը եկած են Թիֆլիզ Դարալագեազի Շատինու անապատից, որից և ստացել են իւրեանց ազգանունը։ Կա՞յ արդեօք որ և է պատմական կապ Շատինու անապատի և Թիֆլիզի Շաղինեանց ցեղի ծագման մէջ, այդ շատ հետաքրքիր է՝ եթէ այդ հարցը հետազօտեն այդ ցեղի պատուելի անդամները։

Հրաժարական տալով Շատինու վանքին ես նորից իջնում եմ՝ վերը յիշած նեղ ճանապարհով դէպի Հասանի գիւղը և Ալագեազ գետի հակառակ ընթացքով գնում եմ դէպի Հոստուն գիւղը։

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ.

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԶԱՔԱՐԵԱՆՑ

Բեսսարաբիոյ Գրիգոր Եպիսկոպոսի Զաքարեանց խոստովանութեան գիրը, որ ստացած է խմբագրութիւնս, հարկ համարեց հրատարակել իբրև գրուածք, որ բաւական լոյս է ձգում ներկայ դարուս առաջին տարիներում տեղի ունեցած իրողութեանց վերայ, որոնք վերաբերում են մեր եկեղեցւոյ պատմութեան։

Առաջի ամենասուրբ Երրորդութեան, ստոյգ և անպատրուակ խոստովանութիւնս՝ որպէս յայտնի է Աստուծոյ, յայտնի լիցի և առաջի մարդկան։

Ի 1800 թուոյն մինչ համահաճութեամբ կայսերն Պօղոսի և Տէրութեան Օսմանեան, հոգևոր Հայրն իմ Յովսէփ Արքեպիսկոպոսն Ռուսաստանու ամենայն Հայոց իշխանազն Երկայնաբազուկ Արղութեանց, և կուսակէր սրբոյն Աննայի առաջնորդ աստիճանի, ընտրեցեալ եղև Կաթուղիկոս ամենայն Հայոց. ընտրեաց զիս ի միջոյ ձեց վարդապետաց իւրոց լինել փո-

խանակ իւր առաջնորդ Ռուսաստանու. ուստի և մատոյց կայսերն զինդիր վասն հաստատութեան և հրաման վասն արձակման զիս ընդ ինքեան ի Ս. Էջմիածին ուրթն ամիս ժամանակաւ որ ձեռնադրեալ զիս եպիսկոպոս դարձուցէ և Գրիգորիպոլու աւագ եկեղեցւոյ և վանքի շինութիւնն որ յանձնեցեալ էր ինձ կայսերական հրովարտակաւ, նաև զդրամն շինութեան արքունուստ քսան և հինգ հազար. զտասնհինգ հազարն վասն շինութեան աւագ եկեղեցւոյ և տասն հազար վասն վանքի։ Սակայն Սրբազան հոգևոր Տէրս մինչ ետես վասն աւագ եկեղեցւոյ շինութեան սակաւ գումարն (հրամայեաց) թողուլ վանքի շինութիւնն. այլ նախ աւագ եկեղեցին աւարտել. ուստի մինչ սկիզբն արարեալ էի պատրաստել զնիւթն հրաման ընկալայ ի տեառնէս գիմել առ ինքն ի Նախիջևան. ընդ նմին և կայսերական հրաման, որ զշինութեան պատրաստութիւնն յանձնել վէքիլայ մերոյ, ենթ ակնածութեամբ տեղւոյ մաղիստրաթին։ Ուստի յանձնեցաք վեց հազար ռուբլւոյ պատրաստեալ քարինս և քիրէջս, և մնացեալ տասն և ինն հազարին՝ թողաք հազար ոսկի հոլանդու. և գրեցաք ի ի Պոլիս վէքիլացն հանգուցեալ Տեառնս՝ որ ի վաճառել կէս մասին հնդու ապրանացն, առաքեսցեն Գրիգորիպոլու վէքիլացն զդրամն և կէս մասն ապրանաց թողի առ վէքիլն իմ՝ որ երբ կիսոյ գինն ընկալցին ի Պոլսոյ՝ առաքեսցեն և զայս մասնն. ընդ նմին և իմ սեպհական մէկ եաշչիկ 200 թօփ շիրին շաքարն որ ի Մոսկով Աւետ Գալուստիչ Գալուստեանովին առեալ էի հինգ հազար ռուբլով։

1800 և սեպտեմբերի 20ին ի Հաշտարխան էառ յինէն պարաք լուսահոգի տէրս հազար ոսկի հոլանդու ի ներկայութեան իւր եղբօրորդի քնեազ Բարսեղին և գերազնիւ Սիմոն Սէրգէիչ Իվանովին։ Երեք հազար հինգ հարիւր ռուբլի և։ Եւ 1801 և մարտի 9ին ծանր հիւանդացեալ փոխեցաւ ի Քրիստոս և ի հարցանել խոստովանահօրն Ս. Էջմիածնի ամենառակալ Սիմէօն արքեպիսկոպոսի ունի՞ արդեօք կտակ. ասացեալ էր լուսահոգին. ունիմ ի մէջ կարմիր գեւթերիս գրեալ. դարձեալ հարցեալ էր ըստ խնդրոց Աւետիս վարդապետի թէ ունի՞ ումեք պարտք. ասացեալ էր Աւետիսի 150 ոսկին թող հատուցէ Գրիգորն. թէպէտ և իւրն պարտեմ ես. բայց ապրանքն հնդու որ նմա յանձնեալ եմ թող ի վաճառելն առցէ. և յետ վախճանին

երբ կտակն գտաք, գրեալ էր այսպէս. «Եթէ ինձ մահ պատահեսցի Թադէոս և Գրիգոր վարդապետքն իմ, հոգածու լեալ, զինչս իմ Աթոռոյն պատկանեալն առաքեսցեն Աթոռն և եղբօրորդւոյս պատկանեալն տացեն նոցա: Մինչ Թադէոս վարդապետ վախճանեալ էր ի Հաշտարխան, ինձ մնաց բաժանորդութիւն. բայց և ես ոչ համարձակեցայ զայն իւրովի առնել ինչ. ըստորում չորս եպիսկոպոսունք հրաւիրակք եկեալքն առ լուսահոգին անդ էին և խնդրէին բոլոր ինչքն հանգուցելոյ տիրել չտալով մասն եղբօր որդւոց: Վասնորոյ գրեցի առ կայսրն և ծանուցի զզօրութիւն կտակին և խնդրեցի առ այն զվճիռ և ընկալայ զհրաման առնել ըստ զօրութեան կտակին: Յայնժամ սուրբ Աթոռոյն պատկանեալ որպէս զգեստքն, նոյնգունակ և անուն յԱթոռոյ առեալ ապրանքն աւելի քան զյիսուն հազար ռուբլւոյ, ընդ կայսերապարգև մեծագին պնակէի որ ի հայրապետութեան ընծայեալ էր կայսրն. նաև զմեծագին մատանին հանգուցեալ Թադէոս վարդապետի, իսկ արծաթեղէն ոսկեղէն և ճէվահիրեղէն զարդքն յանձնեցաք եղբօր որդւոցն. ըստ որում լուսահոգին ասացեալ էր իւր խոստովանահօրն, թէ ասասցես Գրիգորին իմ փոքր սնդուկն ճևահիրեղինօք այնպէս յանձնեսցէ եղբօրորդւոցս, որ վրացիքն չիմասցին: Վերջ բաժանման Աթոռու պատկանելիքն ընդ սուրբ մարմնոյն տարաք ի Սուրբ Աթոռն ընդ Սողոմոն եղբօրորդւոյ հանգուցելոյն: Իսկ եղբօրորդիքն ի մասնէ իւրեանց ետուն ինձ հանգուցելոյ ծոցի սահաթն. մէկ թուլում սամուր և մէկ շալ ֆէսի թաս: Բաց յայսցանէ ես արգելի առ յիս հասարակ պնակէն փրկչական պատկերօք, որ պատրաստեալ էր Դաւիթ գործակալին իւրոյ. մինչ նա կաթողիկոս եղև փոխանակ այս չնչին խաչի, ընկալաւ զհայրապետական մեծագինն: Վախճան հանգուցելոյն դիպեցաւ ի տօնի սուրբ Լուսաւորչի մուտն ի վիրապի երեկոյեան ութն ժամոյն. որ հանդիսիւ տարեալ յեկեղեցին Մողնու, եդաք ի պահեստ ի ներքոյ առաջնորդական աթոռոյն ամփոփեալ և ելն ի վիրապի աւուրն տարաք ի սուրբ Աթոռն և գիշերի նշխարաց օրն մտեալ յԱթոռն յանձնեցաք յաւիտենական հողւոյ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի: 1801, յունիսի 8 ի դերեզմանս հայրապետաց հանգուցաւ: Եւ ես ի նոյն ամի ընկալայ զաստիճան եպիսկոպոսութեան ի Դաւ-

թայ նորածն կաթողիկոսէ, ունելով ծայրագոյն վարդապետութեան գաւազան ի տեառնէս եղէ արքեպիսկոպոս ի վերայ համայն Ռուսաստանու վիճակին. և ի նոյն ամի օգոստոսի վերջն եկեալ ի Սուրբ Աթոռոյ և անտի ի Թիֆլիզ և ի Մոզդոք սահմանն Ռուսաց. այլ ի ճանապարհին Զիմեն անուանեալ գիւղոյ իշխան, որ Ախմէտի որդի Տուտարուխոյ կոչիւր, յափշտակեալ զերկոսին սնդուկս իմ, եթող զիս մերկ և աղքատ. և ապա ի առաքել առ նա ղազախս հրամանաւ կայսեր՝ դարձոյց թէպէտ զսնդուկս, սակայն մերկացեալ ի ազնիւ ընչից, այլ քանի մի շորեղինօք: Ընդ համայն թանկագնոյ իրացն կորեաւ և ժամացոյցն յաւասհոգւոյ. այլ մնաց առ յիս յիշատակ ի հոգելոյս ծնողէս պնակէն և գաւաթն զայֆէի պատկերանկար, որ կայ մինչև ցայսօր և պահի առ յիս զգուշութեամբ: Եւ ի մերձիլն իմ ի գիւղն Թերեք, որոյ վերայ է քաղաքն Մոզդոք, յորդորմամբ Եփրեմ արքեպիսկոպոսի, որ էր յայնժամ նուիրակ Ռուսաստանու և հրաւիրեալ էր զնա Մինաս Եղիազարեանն ի Մոսկով, որ ի դիմաց ամենայն ազգին յանդիման արարեալ զնա կայսերն և խնդրեցեալ առաջնորդ: Քահանայք ամբոխ արարեալ դիմեցին ընդ առաջ իմ, թէ ոչ թողումք զքեզ մտանել ի Ռուսաստան, զի մեզ առաջնորդ չէ պիտոյ. զի ունիմք մեզ զԵփրեմն. և իմ տեսեալ անսահման զանդգնութիւնս նոցին, առաքեցի առ գոմենդանտն զերկու օրինակս հրովարտակացն. մէկն ի Պօղոսէ կայսերէ, որ ութն ամիս ժամանակաւ առաքեցեալ իմ ընդ Յովսէփայ սրբազան Կաթուղիկոսի. երկրորդն Աղէքսանդրու կայսեր, որ յաւելեալ է վեց ամիս ևս. զի ի մէջ այն ամսոց առեալ զաստիճան եպիսկոպոսութեան դարձայց առաջնորդ Ռուսաստանու. քանզի յերկարէր ընտրութիւն Դաւթայ, որ զկնի նորին օծութեան, առեալ իմ զմարմին տեառնս և Աթոռոյ պատկանեալ ծանրագին ինչս, դիմեցի ի սուրբ Աթոռն: Իսկ գոմենդանտին տեսեալ զօրինակս հրովարտակացն, առաքեալ էր իսկոյն զերեսուն ղազախս ցրուել զամբոխն խաժամուժից. և զմեզ ընկալեալ յարգանօք եւ զընակութիւն և պահապան սալդաթս կալ ի դրան մերում. և իմ անդ շաբաթ մի մնացեալ չունելով և յոյս ի սնդուկացս, դիմեցի ի Նախիջևան: Եւ անդ ընկալեալ զմեզ յարգանօք, առաջնորդական շքով, աղաչեցին իշխանքն, զի անձամբ դիմեսցուք ի Մոսկով, ուր յայնժամ ամէ

և սեպտեմ. 15 անդ օծումն ընկալելոյ էր (կայսրն). ունելին-դիր լեալ նոցա դիմեցաք ի Մոսկով. անդ էր և Եփրեմն. գնացի երկիցս առ նա, այլ նա ոչ ընկալաւ զիս. և յաւուր կիւրակէի մինչ գնացի յեկեղեցին, Եփրեմն առաքեաց ընդ յառաջ իմ զՄովսէս վարդապետն որ արգելցէ զմտանիլն ինձ յեկեղեցին. այլ ես ոչ անսացեալ նմին մտի և կացի ի ձախակողմեան դասին. իսկ Եփրեմն մտեալ ի զգեստատունն բազումս բարբանջեաց. այլ ոչ ինչ զօրեաց առնել, զի գաւազանս ի ձեռին յուսահատեալ կային, որ եթէ մերձեսցի ի վանել զիս, գաւազանակոծ առնել զնա՝ և զկնիքանի աւուրց գնացի առ տեղւոյ որբազան մետրապոլիտն Պլատոնն որ վաղեմի ծանօթ էր ինձ. ընկալեալ զիս սիրով՝ բազում մեղադրական բանս ասաց, և յորդոր լինէր անարգել զյիմար հայս և անցանել առ նոսա. ասելով, ոչ նոր ի նորոյ ձեռնադրելոց եմք զքեզ և ոչ միրտելոց ըստ սովորութեան նախնի ռամկաց, այլ միմիայն վերարդ փոխելոց ես, և ներկայացուցեալ զքեզ կայսեր, առից վասն քո զայն փիճակ առաջնորդութեան և կամ Հաշտարխան իսկ. այլ ես արտասուօք պատասխանեցի նմա. բարւոք է զոր ցանկաս վասն ծառայիս քոյ, սակայն եթէ զայդ արարից ես այժմ, յաւիտենականապէս արտաւորելոց եմ զիս, որք ասելոց են թըշնամիք թէ գողացայ ինչքն հանգուցեալ հայրապետի, որպէս ասեն, և վասն ապրելոյ ի դատաստանէ ռուս եղէ. և ի ձէնջ ևս զայս ամենայն լսելով, խեթիւ հայելոց են ինձ դասելով զիս ի շարս գողոց։ Յայնժամ լուսահոգին պատասխանեալ ասաց. իրաւի ասես և բարւոք խորհիս. թող նախ վերջասցի խռովութիւնքն, և յայտնեսցի արդարութիւնդ. և զկնիք աւուրց ինչ հրամայեալ էր կայսրն եներալ վրօկուռոր Պեքլեշովին հարցանել զժողովուրդն Հայոց, թէ զմրն ի եպիսկոպոսաց կամին յինքեանց առաջնորդ. և նա յանձնեաց եներալ Բնօրինպին, որ էր Վրաստանու և Հաշտարխանու եներալ զուբեռնատոր։ Մինչ նա յայտնեալ էր Յովակիմ Եղիազարեանին բերել առինքն զՀայս, նա ժողովեալ իւր ծառայս ի Հայոց, երբեր կացոյց առաջի Բնօրինպին՝ թէ սոքա տեղւոյս իշխանքն են որ ունին յայտնել քումդ բարձր գերազանցութեան թէ զմրն կամի ազգն Հայոց ի յերկուց եպիսկոպոսաց ասսի. երբ ել գենարալն արտաքս ի զալն և սկիզբն արար հարցանել, ես անդէն յառաջ կացեալ

ասացի. ինչ հարկ է զծառայս հարցանել, բարեաք է զտէրն հարցէք զի սոքա որն աշչի է Լազրովի և որն լաքէյ. իսկ եներալն առ ի հաճել զմիտս Յովակիմայ, և եղբօրն Մինասայ ելհարց նոցա, և նոքա ասացին որպէս ուսեալն էին ի տեառնէ իւրեանց։ Եւ ես դարձեալ առ Յովակիմ Եղիազարեանն ասացի. խնդրեմ ասել և վասն իմ թէ որոյ պատճառաւ զիս ոչ կամիք. միթէ վասն տգիտութեանս կամ վասն թուլութեան հաւատոյս, և կամ այլ ինչ օրինաւոր պատճառի. իսկ նա պատասխանեաց ինձ թէ, ահա ստոյգ պատճառն այս է։ Մինչ Յովսէփն առաջնորդ էր՝ հեծեալ էր մեր վերայ, այժմ եթէ դու լինիցիս, առաւել քան զնա հեծանելոց ես, վասն որոյ մեք այժմ այնպիսին կամիմք, որ մեք հեծցուք. ասացի, մեծապէս գոհ եմ, զի դուք չի դասէք զիս ընդ իշոյ, զի որպէս երևի դուք զէշ կամիք և ոչ զառաջնորդ, վասնորոյ շնորհաւոր լիցի ձեզ և բարեաւ վայելեցէք. և այնպէս հրաժարեալ իրերաց գնացաք ի ընակութիւնս մեր։ Ուստի եներալն յայտնեալ Պէքլեշովին, և Պէքլեշովն թագաւորին հաստատեցին զնփրեմն առաջնորդ ի վերայ Ռուսաստանու Հայոց։ Իսկ կայսերական ատենագրին ենեալ Սպերանսկին գոլով իմ նախածանօթ, խրատ ետ ինձ երթալ ի Պետերբուրգ գուցէ կարասցէ ի յերկուս բաժանել զվիճակն կէս Եփրեմայ՝ և կէսն ինձ. այսինքն Հաշտարխան, Ղզլար Մոզդոքիւ, Մոսկով Պետերբուրգիւ նմայ. իսկ Նախիջևան Ղրիմիւ և Գրիգորիապոլիւ ինձ։ Վասնորոյ զկնի գնալոյ կայսերն, գնաց և Եփրեմն, նաև Մինաս Լազրովն, մեծ եղբայրն Յովակիմայ, գնացի և ես. սակայն որպէս Աստուծոյ սրտագիտին յայտնի է չունէի առիս աւելի քանզ եօթանասուն հինգ ռուբլի ասիգնացի. այսպիսի աղքատութեան ցուցանէի զիս կարի հարուստ և ուրախ. զի Աստուծոյ միայնոյ ապաստան էի. վասնորոյ թշնամիքս Եղիազարեանի տեսեալ և լուեալ զիւահարեալ կատաղէին և ասէին ահա յայտնի երևինորին հաղարաւոր գողութիւն, որ չխոնարհի մեզ. քանզի յառաջադրէին ինձ երկու հաղար ռուբլի ռոճիկ որ վերթկացու կամ վերատեսուչ լինիմ նոցին ի Մոսկով սկզբնաւորեալ դպրատան. այլ ես ծիծաղելով ասէի նոցին հրեշտակացն թէ զարմանամ ես ընդ իմաստութիւնս նոցա, որ ես չկամիմ նոցին բարեհաճութեամբ առաջնորդ լինիլ, իսկ նոքա կամին զիս զլխովին ծառայ անել ին-

քեանց, որով առաւել զպարոնայքն և կրճտէրն զատամունս խուրեանց ի վերայ իմ։ Իսկ մեծ ատենադպիրն առեալ զխնդիր իմ ձեռամբ Պէքլեշովի կայսեր մատուցանել եւ, խնդրելով զկէս վիճակի, բայց Լազրովանցն լուեալ դիմեցին առ ենէրալն և կաշառեալ զգրագիրն նորա, զպիզարն, յամեցուցանել զխնդիր իմ մատուցանելոյ կայսեր, մինչև ընկալցին նոքա ի Նախիջևանու զգիր ձեռամբ Աբրահամովի, թէ մեք չկամիմք հաշտարխանու առաջնորդութենէ զատիլ. զի ոչ կարեմք առանձին առաջնորդ պահել։ Երբ զայս գիր ընկալան եառուն ի դիմաց Նախիջևանցւոց զխնդիր։ Յայնժամ մատոյց Պեքլեշովն և վասն իմ. կայսրն հրամայեալ էր առաջնորդական ռոճիկն միայն բաժանել, իսկ վիճակն ոչ. վասնորոյ 1802 կարգեցին ինձ հազար ռուբլի և մէկ հազար Նփրեմայ, որով արդիւնաւորիմ ես մինչև ցայսօր։ Եւ վախճանապէս առ ի ազատել զիս ի խռովութեանց ատի, խնդրեցի ի կայսերէ արձակել զիս Ռուսաստանու ի սուրբ Երուսաղէմ, շնորհելով ինձ երեք տարւոյ ռոճիկս. և կայսրն ողորմածաբար հրամայեաց ի ձեռն տակլատչիկ Նիգոլայ Նիգոլայեվիչ Նովոսելցովին, մինչ եհաս լուրս Եղիազարեանց փութացին ի դիմաց Գրիգորապօլսոյ խնդիր մատուցանել, որ եթէ քաղաքի հաշուին պարտական եմ ես նոցա աւելի քան զհարիւր հազար րուբլի, վասնորոյ կամիմ փախչել. զայս խնդիր մատուցին ձեռամբ Քուչուպէի, վասնորոյ կայսրն արգելեալ զիմ երկրէ ելն, հրամայեաց երթալ ի Նախիջևան և կամ Գրիգորիպօլ բնակել, և տալ հաշիւս քաղաքին Գրիգորիպօլու և մինչ դանդաղէի ես ելանել ի Պետերբուրխու, Եղիազարեանք կաշառօք հրաման հանին ի կայսերէ ձեռամբ Քուչուպէյի ներքնային մինիստրի, որ հանցեն զիս ի կայսերանիստ քաղաքէ, որ կրկին անգամ չհամարձակեցայց մտանել երկուալքայանիստ քաղաքս. և յորժամ հարկ եղև ինձ ելանել ի քաղաքէ անտի, եկն առիս ատենատէր իմ Զիլինքով անուն, որ դերձակն էր կայսեր և վաճառական մի Ռուսաց Քոսցով անուն. սոքա երկոքեանքն հին հաւատի որ ռասքոլնիկ ասի, խնդրեցին ինձ երթալ յերեկային ի տունն Քոսցովի և ես ծանուցի նոցա զամենայն ձախորդութիւնս իմ և հալածանքս, և չունիլ բնաւ պաշար ճանապարհի. նոքա յուսադրեալ զիս պատուիրեցին երթալ առ նոսա. և յորժամ գնացի ի տունն գտի անդ բազ-

մութիւն հին հաւատի վաճառականաց արանց և կանանց. սոքա սկիզբն արարին յինէն հարցանել զհաւատոյ մասունս, և վասն մկրտութեան և հանդերձելոյ դատաստանին հաստատումն տրդարոց և մեղաւորաց, և ես կարդաւ պատասխանի նոցա, մինչև ասել նոցա ամենեցուն միաձայն թէ ճշմարիտ է հաւատն Հայոց, զոր մեք մինչև ցարդ ոչ գիտելով մեղանչէաք. և ապա սեղան եդեալ կերին զընթրիսն և յետ ընթրեացն հարցեալ յինէն հաշուեցին զպարտս և թէ որչափ պիտոյ է ինձ. նախ տան տէրն շնորհեաց զիւր առնելիք, որ պարտ էինմ վասն երկու և կէս տարւոյ, տարին չորս հարիւր ութսուն ռուբլի հաշուեալ, ի վերայ այնմ հազար ևս ընծայեաց։ Քոսցոյն հազար հինգ հարիւր ռուբլի և ապա անդ եղեալքն ամենեքեան մասնակցեցան, որ եղև գումարն դրամոց հինգ հազար ութն հարիւր ռուբլի. և զոհացեալ ի նոցանէ ելի անտի. և երկրորդ. դում օրն վճարեալ զմնար պարտս որոց ունէի տալ, հատուցեալ ելի ի քաղաքէ և եկի ի Մոսկով. և յորժամ Մոսկվայիք լուան Ռոսքօլնիկաց օգնելն ինձ, և ինքեանք ի նոյն յորդորեալ ձեռամբ Զախար Իվանիչ Միրզախանովի երկու հազար ռուբլի առաքեցին ինձ, և անտի խաղաղութեամբ ի Գրիգորիպոլն 1805, որ և մնացաք անդ. և Գրիգորիպոլու իշխանք և ռամիկք բազմութեամբ գիմեցին առ յիս շնորհաւորել դարձն իմ. և ես առաջի բազմութեան հարցի զիշխանս. ուստի ունիք իմ վերայ առնելիք աւելի քան զհարիւր հազար ռուբլի և զիմոնդ ոչ երկեաք Աստուծոյ, այնպիսի սուտ հնարել ի հաճոյս Եղիազարեանց որ վասն իմ որոգայթս լարէին, նոքա ամենեքեան միաբարբառ ազաղակեցին՝ մեղաք առաջի քո հայր սուրբ. իսկ Աղքիրմանցի տէր Յովհաննէս աւագ քահանայն յառաջ մատուցեալ ի բերանոյ ամենիցն ասաց, մեղաք տէր մինչև ցյերկինս. զի ոչ գիտէաք թէ դուք իբրև Ղազարոս յարութիւն առեալ ողջամբ դարձջիք. վասնորոյ ըստ յորդորանաց Ղազարեանց գրեցաք, և բազմութիւն որ անդ կայր զայս բարբառ քահանայի լուեալ ասացին, ուրեմն ան մեզն արդարացուցէք. դարձեալ գրով զնոյն և ես յառաջադրեցի. իշխանքն ոչ առին յանձն, այլ հասարակ ժողովուրդն մաղիստրաթիւ և տումիւ եռուն ինձ զգիր արդարութեան, թէ ի մէկ դիմանէ մինչ ցհազարն, և ի հազարէ մինչև ցմէկն ի Գրիգոր եպիսկոպոսէ պա-

հանջելիք չունիմք, նաև աւագ եկեղեցւոյ կայսերապարգև 25 հազար ռուբլին մեր մաղիստրաթն ընկալեալ է ի վէքիլացն անթերի և անպակաս, որք էին վէքիլքն քաղաքական գոլովայ Մարտիրոս Լոխանովն, Մեսրովբ Թիւանովն, պատպօռուտչիկ Անդրէաս Զախարեանովն և տէր Աւետիք աւագ քահանայ Բարխուդարովն։ Եւ յետ քանի ամսոց եկն անդ քոմիսն կարգեցեալ ի Թագաւորէ, որ հաշիւ խնդրեսցեն յինէն ըստ բողոքման Եփրեմայ. գոմիսի առաջին անդամն կարգեալ էր Պօրիս Պօրիսիչ Լաբաթինսկին որ էր գոլովնի պալատի բրեզիտենթ, երկու եկեղեցիք ի Նախիջևան. երկու վաճառական ի Գրիգորիոպօլու։ Եւ իմ մատուցեալ նոցա նախ Սուրբ Էջմիածնի միաբանից տուեալ վկայութիւնն, և ապա լուսահոգի Ծնօղիս եղբօրորդւոց տուեալն որ անթերի և անպակաս ստացեալ են տեւթերով զամենայն ինքեան պատկանեալ ժառանգութիւնն, նաև քաղաքացւոց տուեալ վկայականն քաղաքական փոլիցիայի ամրացուցմամբ, զայն ամենայն առեալ յինէն դարձան ի տեղիս իւրեանց և ես մնացի ի խաղաղութեան։

Բայց Եփրեմն և աթոռակործան Դանիէլն ընդ Եղիազարեանց ոչ հաճեցան ընդ լռիկ կացութիւն իմ, այլ հնարեցին նորանոր չարիս, հնարեցին գիր մի յինէն որպէս թէ գրեալ ի նախատինս կայսեր. և զայն մատուցեալ տէրութեան խնդրեցին արտաքսել զիս ի Ռուսաստանու որպէս և արարին 1806 մայիսի ամսեան հրաման հանին ի դրանէ կայսեր արտաքսել զիս ի Տաճկաստան և կուսակալն նովոռոսիու Տիւք դէ Ռիշէլի առեալ զայս հրամանս կարի զայրացաւ զի յոյժ սիրէր զիս. եկն առ յիս և մխիթարեալ յուսադրեաց զիս անհոգս լինել, զի ունի գրել առ կայսրն զանմեղութիւնն իմ. նաև պատուիրեաց ժամանակ մի չի հեռանալ ի քիշնովու մինչև դարձն գրոյն առցէ ի կայսերէս և զտուն իմ յանձնեաց փոլիցմէյստրին ի պահպանութիւն. և իմ առեալ զծերունի ութսունամեայ մայրս [1] ելի յերկրէ անտի և իջևանեցայ ի Քիշնով [2] ի տան տէր Անտոն քահանայի. ուր և ձեռնադրեցի ըստ խնդրոյ ժողովրդեանն զտէր Աստուածատուրն ի քահանայ, և զկնի քառասուն և չորս աւուր ընկալայ ի տիւքէն հրաման դառնալոյ, բայց մինչ ունէի գրեալ ի Պօլիս առ Յովհաննէս պատրիարգն յայտնելով զամենայն անցս իմ և խնդրեալ էի կարգել զիս առաջնորդ Ու-

ռումելու[3] և նա առաջին փոշտով առաքեալ էր զկոնդակ, վասնորոյ երկուացաւ խորհուրդս դառնալ արդեօք և թէ մընալ ի կողմանս այս, բայց վերջապէս բարւոք վարկայ դառնալն քան արտաքսեալ անուամբ այսրէն մնալն. և եկեալ ի Գրիգորիպոլ գտի զԵփրեմն անդէն. եկն և Տիւքն պատուիրեաց նմա չվստահիլ ի պաշտպանութիւն Եղիազարեանց, այլ սիրով լինիլ ընդ յիս. բայց ի հալածելն զիս պատուէր արձակեալ էր Լաղրով Մինասն Եփրեմայ որ փութասցի ի Գրիգորիպոլն կողոպտել զիս և այնպէս արտաքսել. բայց ոչ յաջողեցաւ նմա. թէև ժամանեալ իցէր աւուրն իմոյ արտաքսման, զի Տիւքն տէր կացեալ էր ինձ գիտելով զանմեղութիւն իմ. և յորժամ տեսին թէ ամենայն հնարք չարութեան նոցա խափանեցաւ, խորհեցան պատրուակեալ սիրով հաճել զիս. գիր մի մատուցին ինձ իբր հաշտութեան. նախ թէ ընդունիմ ինձ հայրապետ զԴանիէլն, երկրորդ թէպէտ պարտ էի բաղում հաշոյ, այլ որբաղան առաջնորդն Եփրեմ հայրաբար խնայեալ ի մեզ շնորհեաց. և զկնի այսմ գրոյ ստորագրութեան երթիցուք բնակել յաջորդութեամբ ի Նախիջևան. այլ իմ ոչ հաճեալ այն նենգաւոր դաշանց յետս կացաք ի նոցին բարեկամութենէ, զի ունէր ընդ իւրն զերկուս աբեղայս զՄանուէլն[4]) և զՆերսէսն[5]) Դանիէլեան, մին քան զմիւսն լի նենգութեամբ։ Եւ այնպէս կացաք մնացաք ի Գրիգորիպոլ հեռացեալ յամենայն եկեղեցական պաշտամանց, իբր աշխարհական մի մոռանէաք ի սուրբ եկեղեցին ի մէջ ժողովրդեան կալով։

Ի 1807 թուոյն յորժամ անցին զօրքն ռուսաց ի Մօլտով և ի Ուլահ ընդ քաջին զօրապետի Իվան Իվանիչ Միխելզոնի, գոլով իմ նորին վաղածանօթ սիրելի, գնացի և ես մինչև ցՈւքարեստ։ Եփրեմն տեսեալ զայն երկեաւ զի մի հաստատեցից անդէն զառաջնորդութիւնս. մատոյց զկնդիր առ դիւանն Մոլդովու և առ Միխելսոնն և առ Լաշքարոյն, որ մինիստրական ունէր այդ զպաշտօն, որ ես ի մեծագումար հաշուէ փախուցեալ շրջիմ անդէն, վասնորոյ դարձուսցեն զիս անդէն ի Գրիգորիպոլ և առաքեալ էր զՆերսէս աբեղայն, որ ամենայն տեղիս լցուսցէ խաբէական բանիւք մինչև գրել և ասել ամենայն տեղիս թէ կաւալերն զոր կրեմք, խաբէութիւն է և չէ մեզ կայսերապարգև։ Միխելսոնն բարեկամաբար խրատեաց զիս դառ-

նալ և սպասել պատեհաւոր ժամու՝ որ գրեալ խնդրեսցէ զիս առաջնորդ կողմանցս։ Եւ դարձայ ի Գրիգորիպոլ և յետ սակաւուց մեռաւ Միխելսոն զօրապետն և կարգեցաւ ֆեթմարշալ քնեազ Փրոզորովսկին այր լցեալ աւուրքք։ Եւ ապա առաքէ Եփրեմն զյաջորդ իւր զՄանուէլ աբեղայն՝ որ հովուեսցէ զՄոլդովն. և նորա եկեալ ի Քիշնով՝ նախ տէր Անտուանծատուրն արտաքսէ ի յեկեղեցւոյ թէ դու չես քահանայ՝ զի ձեռնադրողն քո չէ եպիսկոպոս՝ այլ այր խաբեբայ. և ապա երեցփոխս հաճի Վարշաւէն խնդրէ զհաշիւս եկեղեցւոյ՝ զտէր Անտոնի՝ տէր Մարկոսին ի Եաշ և տէր Առաքելին ի Փոթուշան առնու զփիլոնն առելով՝ դուք զսուտ եպիսկոպոսն Գրիգոր զիաՀրդ ընդունեցիք և ընկալաք։ Վարշաւն բողոք բարձեալ դիմէ առ Գաբրիէլ սրբազան մետրապոլիտն [6] և նա կոչեալ զտէր Մարկոս աւագ քահանայն Եաշու հարցանէ՝ կամիք ու նել ձեզ առաջնորդ զԳրիգորն. նոքա միաձայն ասացեալ էին՝ ոչ թէ կամիմք՝ այլ մեծ բարեբաղդութիւն համարեմք մեզ զայն։ Ուստի սրբազան մետրապոլիտն ծանուցեալ էր զօրապետ Փրոզորովսկու զամենայն խռովութիւնս Մանուէլի՝ և թէ ժողովուրդն խնդրեն զառաջնորդ զԳրիգորն որ բնակէ ի լռութեան ի Գրիգորիպոլն. և թէ զիարդ հաւատարիմ է նա տէրութեանն և կարի հարկաւոր նորա լինելն այսմ պատերազմական ժամանակի. և զօրապետն խնդրեալ էր ի Կայսերէ կարգել զիս առաջնորդ վասն օգտի տէրութեան պաշտօնի՝ քանզի յոյժ հարկաւոր է ինձ ասէ նա և լաւ ծանօթ նորին հարազատութեան՝ բայց խնդրեմ զի լիցի նա անկախ ի պատրիարգացն Պոլսոյ և Էջմիածնի։ Կայսրն ընկալեալ զայս յառաջադրութիւն իւր ֆէրթմարշալի խսկոյն հրամայէ քնեազ Ղոլիցինին պատրաստել զհրովարտակ՝ լինել ինձ առաջնորդ Մոլդովու՝ Ուլահու և Պեզարապիու անկախ ի Պատրիարգացն Պոլսոյ և Էջմիածնի. ուստի ստորագրէ կայսրն 1809 և մայիսի 15. և առաքի առ ֆէլթմարշալն յայտնել և յանձնել ինձ զլիճակն։ Լսեն զայս Լազարեանքն և Եփրեմն գոլով ի Պետրբուրխ. խսկոյն մատուցանեն զխնդիր կայսերն ի դիմաց Դանիէլի որ առաքեսցեն զիս ի Հաղբաթ տարի մի ճգնել։ Քնեազ Ղոլիցինն պատասխանէ նոցա թէ անհնար է այսուհետև այդմ լինել՝ զի կայսրն կարգեաց զնա առաջնորդ Մոլդաւու՝ Ուլահու և Պեզարապիու՝ նաև ան-

կախ ի պատրիարգացն։ Ուստի մտանեն ի մեծ հոգս, մանաւանդ յամօթոյ առաջի ամենայն ազգաց որ հանին զիս ի ձեռաց իւրեանց. և իմ մնացեալ ի Մոլդաւիայ ի վսիթարութիւն բոլոր ժողովրդեան Հայոց որ փառս վերառաքեն ազատ լինելոյ ի Եփրեմեան աբեղայից. և զկնի քանի ամսոյ ծանուցանէ ինձ սենաթոռ Քուշնիքովն, որ էր կառավար երկուց դիւանաց, թէ կայսրն ողորմածաբար հաստատեալ է կաթուղիկոս զԵփրեմ արքեպիսկոպոսն փոխանակ վախճանելոյն Դանիէլի, գոլով ստակաւին Դաւիթն անդ կենդանի. այլ իմ առեալ կայսերական հրովարտակն պատուիրեցի յիշատակել զանուն նորա Հայրապետական շքով և գրեցի երկիցս շնորհաւորութիւն, աղաչելով իբրև տէր խնամք ունիլ ի վերայ իմ և հօտիս. իսկ նա կոնդակ գրեալ առ ամենայն վիճակս իմ, ոչ յիշատակէ ուրեք զանուն իմ և մանաւանդ մատուցանէ բազում զրպարտութեամբ զինդիր կայսերն թէ ես ոչ ընդունեմ զնա կաթուղիկոս, և ոչ թողում յիշատակել զանուն նորա յեկեղեցիս, ուստի գրէ առ յիս և մետրապոլիտն թէ իրաւի անկախ կացուցաւ Գրիգոր արքեպիսկոպոսն ի պատրիարգաց, սակայն վասն պահելոյ զեկեղեցական բարեկարգութիւնս, պարտի ըստ ծիսի իւրեանց յիշատակել զանուն Հայրապետի. յայնժամ հարկեցայ ես թարգմանել զերկոսին գրութիւնս առ նա և առեալ պատուէրս առ ամենայն եկեղեցիս իմ, որում վկայեցին մետրապոլիտն և սենաթոռ Քուշնիկովն հարցեալ զքահանայս և զժողովուրդս Եաշու- և յորժամ առնու քնեազն և հասու լինի նոցին նենգաւորութեանցն գրէ առ նոսա զբազում բանս մեղադրանաց և թէ որ հաստատեացն զքեզ ի հայրապետութիւն, հաստատեաց և զնա ի յառաջնորդութիւն. վասնորոյ վայելուչ կարգիւ կոչմանն հաշտեալ ընդ նմա, պատասխանեսցես նորին առ ձեղ գրութեանցն, յայնժամ կորագլուխ լեալ սկիզբն արարին գրութիւն առնել ընդ իս և դադարիլ ի հալածելոյ։

ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ [1]

Ծանօթութիւն արտագրողիս.

1) Գրիգոր եպիսկոպոսի մայրը՝ Եաղութ տիկինը, վախճանած է 1817 թ. նոյեմբեր ամսին և թաղուած է Քիշնևի եկեղեցւոյ բակում,

2) Քիշնևը այն ժամանակ դեռ ևս Տաճկաստանի մասն էր համարում։

3) Ուռումելու (румелія) ասելով պէտք է հասկանալ Բեսսարաբիա և Մոլդաւիա։

4) Մանուէլ վարդապետ Շահինեան Կիւմիւշխանեցի։

5) Ներսէս վարդապետ Աշտարակեցի, յետոյ Ներսէս Ե. Կաթողիկոս ամենայն Հայոց։

6) Գաբրիէլ էր էգզարխ ռուսաց և Մոլդովանաց. սրա հետ շատ մտերիմ բարեկամ է եղած Գրիգոր եպիսկոպոսը. այդ միջոցներին էգզարխը, ինչպէս պատմում են ականատեսք և ծերերը, համարեա բռնութեամբ ստորագրել է տալիս Հայ ժողովրդոց Քիշնովու, Օրհէի և այլոց քաղաքաց, որ իբր ուզում են նրանք իրանց առաջնորդ Գրիգորին. շատերին փող ընծայում է և շատերին զինովացնում յետոյ ստորագրել տալիս. ինքը Գրիգոր եպիսկոպոսն ևս Օրհէյ քաղաքում մեծ հացկերոյթ է անում և բոլոր բազմականներին լաւ խմացնում է, յետոյ առաջարկում է ստորագրել թղթոյն, որը յետոյ առաջարկում է էգզարխը Պրոզորովսկի զօրապետին և սա էլ ուղարկում է կայսեր և յետոյ ստանում են հրովարտակ հաստատութեան։ Ժողովուրդը, իմանալով Գրիգոր եպիսկոպոսի բռնակալութիւնքը և անսանձ խստութիւնքը և կեղեքմունքը, ստրջանում են սաստիկ. բայց ոչինչ չեն կարողանում անել, թէև Ներսէս, Մանուէլ վարդապետները, Եփրեմի հովանաւորութեամբ և Լազարեանց օգնութեամբ, շատ աշխատում են այդ մասին։ Գրիգոր եպիսկոպոս մնում է առաջնորդ Մոլտաւիոյ և Բեսսարաբիոյ, անկախ Էջմիածնայ կաթողիկոսից և Պոլսոյ պատրիարքից և մինչև 1827 թուականի վերջերը մնալով այդ պաշտօնում, ոչ միայն Հայոց այլ և բոլոր միւս ազգերի վերայ սարսափ է ձգում իւր անսահման իշխանութեամբ։

(7) Գրիգոր Արքեպիսկոպոսի մականունն էր Զախարեանց. նորա եղբորորդիքը մինչև ցայժմ կենդանի են և կան Քիշնեւում և կազմում են Քիշնեւի Հայերի մէջ մի մեծ և բազմաթիւ գերդաստան. բոլորն էլ ազնուականք են շնորհիւ եպիսկոպոսին և ամէնքն էլ հասակաւոր մարդիկ են, պարթև կազմուածքով և հարուստ։ Հաստատուելով Քիշնեւում Գրիգոր եպիսկոպոսը շատ ծանօթացել է Բահմէտեվ կուսակալին, որ փոխարքայի իշխանութիւն ունեցել է նոր տիրապետած Բեսարաբիոյ վերայ և Գաբրիէլ մետրապօլտին։ Մեծամեծ խնջոյքներ, հացկերոյթներ անպակաս են եղել։ Ռուսերէն լաւ իմացել է Գրիգոր եպիսկոպոսը, լաւ հարստութիւն ունեցել է. հացկերոյթի ժամանակ մեր Հայոց առաջնորդարանի առաջ երեք կամ չորս թնդանօթ միշտ կանգնած՝ ամեն մի բաժակ խմելուս միանգամայն կարձակուին եղած խուռն բազմութեան ներկայութեան և միշտ ամենաերևելի անձինք եղած են նրան ճաշակից։ Այդ առաջնորդարանում, որն ինքը Գրիգոր եպիսկոպոսը շինած է Տէրութիւնից ստացած 4000 ռուբ. ասեգնացիով, նստել է 16 տարի Երջ. Ներսէս կաթողիկոսը և բոլոր Բես. վիճակի առաջնորդները։ Այդ տունը, որ բոլորովին խախտուած էր և անյարմար առաջնոր-

դի բնակութեան համար, ի հիմանց Նորոգեց ներկայ Հայրապետն ամենայն Հայոց Տէր Մակար, իւր առաջնորդութեան ժամանակ Բիսսարաբիայում։ Գրիգոր եպիսկոպոսի յիշատակը շատ թարմ մնում է ամեն մի հայի սրտում. աղգականները նրան մինչև երկինք են բարձրացնում, իսկ միւս հայերը, այլ և օտարազգիք, զարմանալով պատմում են շատ անեկդոտներ և անցքեր նրա ժամանակներից և նրա գործքերից։ Քիշնեի ժողովուրդը բոլորովին ճնշուած է եղել այդ յիշեալ 3 անձերից։ Նոքա ինչ որ ուզեցել են արել են, եթէ մէկը գանգատ ունի եղած Գրիգոր եպիսկոպոսից և գիմում է Բախմէտեվին, նա ուղարկումէ նրան էգզարխին. եթէ էգզարխից գանգատ ունի, ուղարկում է Գրիգորին և այսպէս իրարու գատաստանն իրանք են տեսել։ Շատ բաներ են պատմում, որոց մի քանիսը աւելորդ չեմ համարում յիշել։ Մի գիւղի մոլդովանները շինել են նոր եկեղեցի. եկել են էգզարխին և հրաւիրել որ գնայ օծէ եկեղեցին. նա իմանալով այդ, մի քանի օր առաջ խօսում է Գրիգոր եպիսկոպոսին հետ և ասում է թէ՝ «երբ կգան հրաւիրելու, ես կուղարկեմ նրանց քեզ, դու խօսիր նրանց հետ և պահանջիր օծելոյ համար 300 ոսկի, եթէ չը յօժարին, ես չեմ գնար օծելոյ և նրանք կգան դարձեալ քեզ կինդրեն, դու այն ժամանակ պահանջիր 500 ոսկի»։ Այդպէս էլ լինում է. մոլդովանները չեն ուզում որ Հայ եպիսկոպոս օծէ իրենց եկեղեցին. էգզարխն էլ չի ուզում գնալ. ի՞նչ անեն, որի՞ն դիմեն. գալիս են կրկին խնդրում են. էգզարխը ասում է գնացէք դարձեալ Գրիգորին և որովհետև նա այժմ նեղացած է ձեր վերայ, աշխատեցէք նրա սիրտը առնել։ Գալիս են խեղճերը Գրիգորին. նա էլ վերջապէս յօժարում է, 500 ոսկի առնում և գնում է օծում Մոլդովանաց եկեղեցին Ռուսերէն պատարագ անելով, ռուս տիրացուներով և նոցա ծիսով. մինչև ցայժմ այդ եկեղեցւոյ ճակատին գրուած կայ, թէ օծեցաւ այս եկեղեցին ձեռամբ Գրիգոր եպիսկոպոսին Հայոց։ Իսկ 500 ոսկին բաժանում են երեքով։ Քահանայք նրանից այնպէս վախենալիս են եղած, որ նրանցից մինը, միմիայն եպիսկոպոսի բարկութիւնից, յանդիմանութիւնից սարսափած և վախեցած, հիւանդանում և մեռնում է։ Մի անգամ եպիսկոպոսը հրամայել է որ մինչև ինքը եկեղեցի չըգայ, ժամասացութիւն չսկսեն։ Տէր Մարկոս ծերունի աւագ քահանայն փիլոնը առած եկեղեցւոյ դասում առաւօտ վաղ ժամանակից սպասում է նորա գալստեանը, ժամկոչին հրամայել է որ զդոյշ լինի, երբ տեսնէ հեռուից եպիսկոպոսի կառէթը, իսկոյն զանգակները հնչեցնէ. նոյն օրը եպիսկոպոսը ոտքով է գալիս եկեղեցի, ոչ ոք չէ իմանում, ինչպէս նա սուսիկ փուսիկ մտնում է եկեղեցի գիտութեամբ. տեսնում է որ տէր Մարկոսը կամիլաւկան գլխին դասում քնած է, գաւազանով մի հարուած է տալիս գլխին, կամիլաւկան իջնում է աչքերի վերայ, խեղճ տէրտէրը, սարսափում վայր է ընկնում և մի քանի ամիս սաստիկ հիւանդանում է։ Ժողովրդին հրամայել է որ կիրակի օրեր մինչև եկեղեցուց դուրս չըգան, իրաւունք չունենան գինետուն կամ զայֆէտուն երթալ, այլ անպատճառ եկեղեցի գան։

Նոյնը ապսպարել է և Նրանց տէրերին, և ով չի գալիս եղած եկեղեցի, ծեծով տնից զօռով կբերեն եղած Նրան։ Մի անգամ Գէորգ անունով մի մարդի զայֆէտնում նստած՝ հայերը կիրակի առաւօտ իմում են եղած, ո՛րը զայֆէ, ո՛րը արաղ ևն։ Նրանք դռները և պատուհանները փակած մարդ են դրել դրան, որ տեսնէ և երբ եպիսկոպոսը անցնելու լինի իրանց իմաց տայ որ պահուին։ Եպիսկոպոսը իմացել է այդ։ եպիսկոպոսը իրա կառէթի պատուհանները ծածկել տուել և հրամայել է որ կամաց կամաց, ըստ սովորութեան գնայ դէպի եկեղեցի և զայֆէտնից անցնելից ետքը, նշանակեալ տեղում սպասէ իրան։ Հայերը երբ իմանում են թէ գալիս է կառէթը և հաւաստի լինելով թէ անշուշտ եպիսկոպոսն էլ մէջը կլինի, պահուում են, և երբ կառէթը անց է կենում՝ հանգիստ սրտով դուրս են գալիս պահուած տեղերից և սկսում են քէֆ անել։ մէկ էլ տեսնես մեր եպիսկոպոսը վեղարը ցցում է դռնից խարազանը ձեռքին, Միխալ կառավարն էլ քամակից։ խեղճ հայերը լեղապատառ փախչող փախչողի են լինում և որոնք չեն կարողանում փախչել, նրանց նոյնպէս և խեղճ Գէորգին լաւ հարուածում է։ հրամայում է դռները փակել և իւրեան հետ միասին գնալ եկեղեցի։ Դեռ շատ այսպիսի բաներ են պատմում։ Գրիգոր եպիսկոպոսի իշխանութեան և զօրութեան չափը Նրանից էլ յայտնի է, որ երբ 1813 թ. Տէրութիւնից Բահմէտևին հրաման է գալիս, որ Քիշնևի շուրջը եղած դատարկ և անշէն տեղերը ձրի բաժանէ ցանկացողաց քաղաքը մեծացնելոյ նպատակաւ, Գրիգոր եպիսկոպոսին էլ տալիս են 13000 քառ. սաժէն դատարկ տեղ, նոյնքան և ինչքան ռուսաց էդզարխին։ Գրիգոր եպիսկոպոսը բաւական չլինելով այդ նշանակութեամբ, ինքնագլուխ տիրապետում է մի այլ 11000 քառ. սաժէն առաջին տեղւոյ կից, ասում են իբր իրա ազգականների համար։ Եւ ահա այդ տեղւոյ համար, Նորա մահուանից ետքը Նորա ազգականներն, երբ երկար տարիներ վիճում են Ներսէս Կաթողիկոսի հետ և ուզում են տիրել այդ տեղւոյն, բայց չեն կարողանում, վասն զի այդ երկու տեղերն ևս հանդերձ առաջնորդական տնով, Ներսէսին յաջողում է առնել իւր տիրապետութեան ներքոյ 1841 թ. Նախարարաց յանձնաժողովի հաստատած վճռոյ զօրութեամբ, յորում ի մէջ այլոց գրած է թէ. «այն ամենայն ինչ որ տրուում է Տէրութիւնից Գրիգոր եպիսկոպոսին կամ արքունի փողով շինուած է կամ պիտի շինուի, տալիս է Նրան Տէրութիւնը, ոչ թէ իրաւամբ մշտնջենաւոր սեպհականութեան, այլ միայն ի կենսական տիրապետութիւն, այն պայմանաւ, որ նրա մահուանից ետքը այն ամենայն մնայ յօգուտ Հայոց առաջնորդաց Բեսսարաբիոյ վիճակի», և որովհետև Գրիգոր եպիսկոպոսի առաջնորդարանն էլ շինուած էր արքունի փողով. վանորոյ և Ներսէսը առաւ զայն հանդերձ բոլոր դատարկ տեղերովը. և ահա այդ այն տեղն է, որոյ վերայ Ներսէսը փողերով կանգնեց տներ և որն այժմ համարուում են կալուածք Սրբոյ Ա-թոռոյն Էջմիածնի և բերում են տարին 12000ի չափ արդիւնք. ոչ վիճակը Նրանից մնան ունի և ոչ առաջնորդը։ Նախարարաց ժողովի վերոյիշեալ

վճռով Գրիգոր եպիսկոպոսին տուել է Տէրութիւնը ի վայելումն և ի պահպանութիւն առաջնորդական տան 1372 ռուբ. ռոճիկ արքունի գանձարանից, 4 կրպակք Իզմայիլ քաղաքում, 2 մեծ այգիք Ագքիրման քաղաքում, մի պարտէզ Գրիգորու Պոլում, 2000 դեսեատին հող Ագքիրմանի գաւառում Դնեստր գետի ափերում, հանդերձ իրաւամբ ձուկ որսալոյ գետումը։ Ներսէս կաթողիկոսը այդ բոլորը ստանում է, երբ 1828 թ. գալիս է Փիշնև, բայց յետոյ, յայտնի չէ թէ ինչ պատճառաւ Ներսէսը յիշեալ 2000 դ. հողը դարձնում է Տէրութեան այն պայմանաւ որ իւրաքանչիւր տարի այդ տեղւոյ փոխարէն Տէրութիւնը տայ իւրեան փող այնքան օրքան ստացւում էր այդ հողից վարձ Նրա ժամանակին այսինքն 712 ռուբ. որը գումարելով 1372 ռ. ռոճկի հետ անում է 2084 ռուբ. որը և ստանում են այժմ առաջնորդները Բեսսարաբիոյ վիճակի։ Դեռ մինչև ցայժմ յայտնի չէ թէ ի՞նչ ստիպողական պատճառներ յառաջ են եկել Ներսիսին մի այդպիսի մեծ սխալ և անհեռատես գործք տեսնել և 2000 դեսեատին հողից ձեռք վերցնել, բաւականանալով մի աննշան փոխարինութեամբ, մինչդեռ այժմ նոյն հողը հազարներ է բերում տարեկան վարձ. և թէ ունէր արդեօք Ներսէսը իրաւունք օտարացնելոյ այդ հողը, մինչդեռ տրուած էր այն ի կենսական տիրապետութիւն (пожизненное владѣніе). Նոյնպէս յայտնի չէ թէ ի՞նչ պատճառաւ Իզմայիլ քաղաքի կրպակների արդիւնքը չէ ստանում վիճակի առաջնորդը։ Գրիգոր եպիսկոպոսը մեռած է 1827 թ. Աւստրիոյ Սուչաւայ քաղաքում և այնտեղ ևս թաղուած Ս. Հաճկատար Աստուածածին Հայոց վանքի բակում։

ԱԶԳԱՅԻՆ

Ամսոյս 3ին Ս. Վարդանանց օրը երեկոյեան ժամը 5ից մինչև 7ը փառաւոր հանդէս կատարուեցաւ Ճեմարանի դահլիճում, ներկայութեամբ Նորին Վեհափառութեան և բոլոր Միաբանութեան Սրբոյ Էջմիածնի։ Աշակերտները և ուսանողներն ասացին և կարդացին ճառեր, արտասանեցին բանաստեղծութիւններ, երգեցին առանձին (solo) և խմբով։

Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց յայտնել իւր գոհունակութիւնը թէ աշակերտների և թէ վարժապետների արած ջանից և ցոյց տուած յառաջադիմութեան համար, և մասնաւորապէս շեշտեց այն կէտի վերայ, որ իսկապէս Ճեմարանի կէտ նպատակին է, այն է՝ բացատրեց որ ուսումն և զարգացումն, որ ստանում են՞նոքա, արդասաւոր և արդիւնաշատ կլինին այն ժամանակ, երբ Ճեմարանը ծառայելով իւր բուն նպատակին, տայ ազգին և եկեղեցւոյն բարեկիրթ և անձնուէր հոգևորականներ։ Հանդէսը վերջացաւ Նորին Վեհափառութեան օրհնութիւնով։

ՅՈՎՍԷՓ ՇԻՇՄԱՆԵԱՆ (ԾԵՐԵՆՑ).

Լրագիրներն հաղորդում են, որ այս մարտ ամսի 17ին Թիֆլիզում վախճանեց նշանաւոր մատենագիր բժշկապետ Յովսէփ Շիշմանեան, որ մատենագրութեան մէջ յայտնի էր Ծերենց մականունով։

Նա ծնուեց Կ. Պոլսում 1822ի սեպտեմ. 16ին, ուրեմն ապրեց մօտ 66 տարի։ Ինն տարեկան հասակում նորան իւր հայ-կաթոլիկ ծնողներն ուղարկեցին Վենետիկ՝ Մխիթարեան վանքը, ուր և մնաց միայն 5 տարի, մինչև 14 տարեկան հասակը, և չզգալով կրօնաւորութեան փափագ, հաւանօրէն և չտանելով այնտեղի փակուած կեանքը, վերադարձաւ Պոլիս։ Այստեղ 5 տարի էլ աշակերտեցաւ դեղագործութեան։ 21 տարեկան հասակում կատարեց իւր Հայաստանի ճանապարհորդութիւնը, որ գերակշռող ազդեցութիւն պիտի ունենար նորա բոլոր ապագայ գործունէութեան վերայ։ 1843ի օգոստոս 23ին մեկնում է նա Պոլսից և անցնում է Ցրապիզոն, Գիւմիւշխանէ, Բաբերդ, Էրզրում, Ղարս, Ալեքսանդրապոլ, Թիֆլիս և ապրիլ 3ի 1844ին նորից մտնում է Պոլիս.

Հանգուցեալ Շիշմանեան, դորանից յետոյ, ուսումը կատարելագործեց Փարիզում, ուր և ստացաւ բժշկութեան դոկտորութեան աստիճան և վերադառնալով հայրենիք աւելի յայտնի եղաւ ազգային և գրական ասպարիզում։

Հասունեան և հակհասունեան կռիւների ժամանակ հակհասունեանների պարագլուխն էր և նոցա ժողովների նախագահը, ուր և մեծ արդիւնք տուեց նա իւր ազդեցութեամբ և ճարտարութեամբ, հոգեշունչ և համոզիչ լեզուովը։ Ի վերջոյ տեսնելով որ ի զուր է օտարների դուռը բաղխելը յանուն ճշմարտութեան և հասունացած ու զարգացած խելքովն ըմբռնելով որ երբէք ուշ չէ ուղղութեան ճանապարհը վերադառնալ — անցաւ Հայկական Ս. Եկեղեցու գիրկը, ոչ իբրև դասալիք, այլ իբրև կատարեալ մարդ և ազգային պատմութեան հմուտ անձն, որ գիտէ թէ մեր վնասակար թշնամիքն եղած են միշտ կրօնական երկար բարակ վիճաբանութիւնները, յարուցուած մեր Ս. Եկեղեցու ոխերիմ ոսոխներից։

Հանգուցեալը հայ գրականութեան մէջ անմահ անուն ժառանգեց իւր 3 ազգային-պատմական վէպերով, որ են՝ «Թորոս Լեռնի», «Թէոդորոս Ռշտունի» և «Երկունք իններորդ դարու»։ Բացի այս գրում էր նաև բազմաթիւ հայ թերթերում, զանազան մականուններով։ Շիշմանեանցի գաղափարներին և ոգուն ծանօթանալ ցանկացողը կարող է իւր նպատակին հասնել նորա վէպերը կարդալով։

Մենք ի բոլոր սրտէ բարեմաղթումենք Նորան այն երկնային հանգիստը, որ վիճակել է Աստուած իւր ընտրեալներին։

Մ.

«Արեւելքում» կարդում ենք.

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն շնորհակալեաց ուղերձ մը ղրկած է կայսերական Պալատան քարտուղարութեան Վեհ. Սուլթանին մատուցանելու համար, որով երախտագիտական ջերմ զգացումներ կարտայայտէ առ Նորին Վեհափառութիւն, որ բարեհաճած է իւր կայսերական բարձր հովանաւորութիւնը շնորհել Միացեալ Ընկերութեանց ձեռամբ խնամեալ վարժարանաց ի Նպաստ տրուելիք պարահանդէսին։

—Ամեն. Ս. Պատրիարք Հայրն փետրուար 26 ին Կայսերական պալատ գնաց և նախ առաջ ընդունուեցաւ երկրորդ Սենեկապետ Հաճի Ալի Պէյի կողմանէ։ Նորին Ամենապատուութիւնը յետոյ պատիւ ունեցաւ ներկայանալու Վեհ. Սուլթանին, որ յոյժ սիրալիր կերպիւ ընդունեց զնա։

—Վեհափառ Կաթողիկոսն օրհնութեան կոնդակ մը ուղղած է Նորընտիր Քաղաքական Ժողովոյ անդամց։ Հայրապետական կոնդակն փետրուար 18 ին ի պատրիարքարան հասած լինելով, յաջորդ աւուր նստին մեջ հանդիսիւ կարդացուեցաւ։ Ամեն. նախագահն և բոլոր ժողովականք յոտընկայս լսեցին Հայրապետական կոնդակի ընթերցումը։

—Երուսաղէմէն կըգրեն փետրուար 10 թուականաւ թէ Ս. Յակոբայ վանուց սեփականութիւն եղող գետնէն 12000 կանգուն տեղ Միաբանութեան կողմէն վաճառուեցաւ Գերմանացի սեղանաւորի մը։ Այս գումարով գետնին միւս կողման վրայ տներ պիտի շինուին։

Մեծ. Պ. Բժիշկ Արամեանը խնդրումէ հրատարակել ի գիտութիւն հայ հասարակութեանց, որ ինքն հաւաքած ունի զանազան գրուածքներ և վկայաթղթեր, որոնք վերաբերում են Հնդկահայ գաղթականութեան։ Նա մտադիր է տետր առ տետր հրատարակել երբեմն նշանաւոր եղած այդ հայ գաղթականութեան պատմութիւնը, քաղելով իւր ունեցած նիւթերից։ Այդ երկասիրութիւնը կկրէ «Պարսկա-Հնդկական Հնագարան» վերնագիրը։ Պ. Արամեանը մօտաւորապէս հաշուումէ, որ իւր ունեցած նիւթերը կըկազմեն 30—40 տետր, իւրաքանչիւրը 3—5 տպագրական թերթից բաղկացած։ Բայց որպէս զի այս գործը, որքան հնար է կատարեալ լինի, պատուելի բժիշկը խնդրումէ նոցա, որոնք ունին որև է գրաւոր վկայութուղթ վերաբերութեամբ Հնդկահայ գաղթականութեան, բարեհաճեն ուղարկել այն իրան։ Նա իւր ունեցած նիւթերը ստացել է Մեծ. Պ. Գ. Շիրմազանեանցից, որին յայտնում է իւր խորին շնորհակալութիւնը հրապարակաւ։ Ով կցանկայ արտասահմանից, Հնդկաստանից, Պարսկաստանից,

Տաճկաստանից և կամ որև է այլ տեղից ուղարկել Գ. Բժ. Արամեանին որ և է կարևոր թէ տպագրեալ և թէ անտիպ նիւթ, վերյիշեալ առարկայի մասին. թո՛ղ բարեհաճի ուղարկել հետևեալ հասցէով.

Caucas (via Batum) Saliani, Aramiantz

Մեծ. պ. Մ. Բարխուդարեանցը խնդրումէ հրատարակել հետևեալը.

Ներկայ 1888 թուին լոյս կըտեսնէ Մոսկուայում

»Հանդէս« գրական և պատմական«

երկհատոր ժողովածուն. Այս հրատարակութիւնը, որին մասնակցելու են մեր գրականութեան մէջ անուն ժառանգած հեղինակներ, ինչպէս Գամառ-Քաթիպա և ուրիշները, նոյնպէս և շատ նոր ուժեր, պիտի բովանդակէ. վէպեր, պատկերներ, զրոյցներ, բանաստեղծութիւններ,—թէ ինքնուրոյն և թէ թարգմանական,—պատմական, քննադատական, մատենախօսական յօդուածներ, գիտութեան այս կամ այն ճիւղից մատչելի լեզուով քաղուածներ և այլն.

Առաջին գիրքը բաղկացած կը լինի 300 երեսից և լոյս կըտեսնէ յունիս ամսին. Բացուած է ստորագրութիւն միայն առաջին հատորի համար, որի բաժանորդագինն է Ռուսաստանում մէկ րուբլի յիսուն կոպէկ. իսկ արտասահմանի համար-4 ֆրանկ. Երկրորդ հատորի մասին առանձին յայտարարութիւն կը լինի, որովհետև մտադիր ենք ծաւալը ընդլայնելու.

Հրատարակչի հասցէն. Москва. Большая Дмитровка. меб. Ком. «Версаль», № 27.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

3 Փետրուարի. Սինօդից Գերապ. Գրիգորիս Եպիսկոպոս Աղուանեանցի տեղը Սարսի փոխանորդ նշանակուեց Բարեշնորհ Յուսիկ Վարդապետ Մովսիսեան.

---

5. Փետրուարի. Ճեմարանը, իւր ննջարանովն և հիւանդանոցով ապահովել տրուեցաւ հրդեհի դէմ Ս. Պետերբուրգի ընկերութեանը 75000 րուբլով, իսկ Ճեմար. մատենադարանն և կահկարասին—25000 րուբ. Տարեկան պէտք կլինի վճարել ապահովող ընկերութեան 313 ր. 5 կոպ.

---

8 Փետր. Դուշէթի Աղեքսանդր քահ. տէր Յովհաննէսեանց, յետ

կրկին քննութեան, ենթարկուումէ վեց ամեայ եկեղեցական ապաշխարանաց, իւր անզգոյշ վարուց համար։

—

10 Փետր. Կողբի գործակալ Յովսէփ քահ. տէր Յարութիւնեանց իւր կանոնաղանց արարմունքների համար ենթարկուում է եկեղեցական ապաշխարութեան անսահման ժամանակով ուղարկուելով Խոր Վիրապու վանքը և նորա կատարած չհաս պսակը՝ Աբաս—գեօլցի Մովսիսի Թորոսեան ընդ Եղիսաբէթի, համարուումէ անվաւեր։ Յօգուտ Ս. Աթոռոյս պահանջուումէ յիշեալ գործակալից 50 ր. տուգանք, ի տեղի վնասուց աթոռահաս արդեանց։

—

15 Փետր. Յովսէփ քահ. Անգեղակոթցի կատարած չհաս պսակի համար ենթարկուումէ եկեղեցական ապաշխարութեան 3 տարով Յամեւի վանքում, պարտաւորուելով կանգնել տաճարի դռանը, առանց փիլոնի և սաղմոս ի ձեռին, պահօք և աղօթիւք քաւելով իւր յանցանքը։ Նորա ժողովրդեան համար ժամանակաւորապէս նշանակուում է այլ քահանայ, բոլոր արդեանց կէսը տալով պատժուած քահանայի ընտանեացը անունդ, իսկ միւս կէսը հովուող քահանային։

—

22 Փետր. Մոզդոքի հայոց Ս. Նունեան օրիորդական դպրոցի պատուաւոր հոգաբարձու և խնամակալ Պ. Պետրոս Ս. Գեանջումեանց իւր հանգուցեալ կնոջ կտակի համաձայն, Կիսլավոդսկում ունեցած սեպհական տան տարեկան վարձը—600 ռուբլի, տասը տարի ժամանակով նուիրում է յիշեալ դպրոցին, այն պայմանով որ այդ փողերը աւելանան ուսումնարանի անշարժ դրամագլխին և նոցա տոկոսիքը միայն ծախսուի։ Տէր Աստուած ի հաճոյս իւր ընկալցի։

—

24 Փետր. Թիֆլիսաբնակ Ալէքսէյ Ճանջուղազեանց կտակել է 500 ր. Սեւանայ վանքին, 500 ր. Ս. Էջմիածնի Գէորգեան հոգևոր ճեմարանին, 500 ր. Թիֆլիզի Ներսիսեան Հոգ. դպրանոցին, 500 ր. Թիֆլիսի Գայիանեան օրիորդ. դպրոցին, որ գտնուումէ Մուղնու Ս. Գէորգ եկեղեցու մօտ։ Տէր Աստուած ի հաճոյս իւր ընկալցի։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ի ՎԱՐԺՈՒԹԵՆԷ ՃԵՄԱՐԱՆԻ

—

1. Քննութիւնք ընդունելութեան յաշակերտութիւն Ճեմարանի Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի կատարին մի անգամ և եթ ի տարւոջ և այն աւուրբք ինչ յառաջ քան զսկիզբն ուսումնական տարւոյ։

2. Ցանկացողք մտանել յաշակերտութիւն Ճեմարանիս մատուսցեն խնդիր յանուն Վեհափառ Կաթուղիկոսին, ոչ անագան քան զմին յուլիս ամսոյ։

3. Ընդ խնդրագրին պարտ է առաջի առնել զվկայագիրս ուսման, բարի վարուց, ծննդեան և մկրտութեան և պատուաստման ծաղկի։

4. Նորեկ աշակերտք և ուսանողք զննին ի բժշկէ Ճեմարանիս, որ և տայ Տեսչին զգրաւոր տեղեկութիւն զառողջութենէ նոցա։

5. Ի դպրոցական դասարանս ընկալեալ լինին առհասարակ ուսեալքն ի վարժարանս և կամ հրահանգեալքն առտնին կրթութեամբ, իսկ յառաջին լսարան Ճեմարանիս՝ նոքա միայն, որք ունին վկայագիր աւարտման դպրոցական դասընթացից։

6. Ըստ կանոնաւոր հարցաքննութեան ընկալցին յաշակերտութիւն յամենայն դասարանս Ճեմարանիս. իսկ վասն մտանելոյ յԱռաջին լսարան՝ ենթարկեսցին հարցաքննութեան յայն յամենայն առարկայս՝ զորս կարևոր համարիցի Ուսումնական Խորհուրդն։

Ծանօթութիւն. Վասն մտանելոյ յԳ. դասարան պահանջի անթերի գիտութիւն դասընթացից երկդասեան եկեղեցական ծխական ուսումնարանաց. իսկ վասն մտանելոյ ի միւս դասարանս աշակերտք պարտին քննիլ ըստ ծրագրի հաստատելոյ ի Վեհափառ Կաթուղիկոսէն, ի պէտս ծխական դպրոցաց։

7. Ցանկացողք մտանել յԱռաջին լսարան

Ղեմարանիս վկայագրով աւարտման դպրոցական դասընթացից, վերստին ունին ենթարկիլ հարցաքննութեան յամենայն առարկայս, եթէ վնէ ա-ապրոմանն անցեալ նչէ ի վերայ ա-ա-եալ դան ղամ մէ։

8· Յետ հարցաքննութեան ընկալեալ լեցին ի շարս աշակերտաց՝ որք արժանաւոր դատիցին յՈՒսումնական խորհրդոյն։

Ծանօթ-ութ-ն· Պահանջի՝ զի ընկալեալքն յաշակերտութիւն լեցին ուշիմք, երկարոգիք, փափկաձայնք, բարեկազմք և բարեբարոյք։

9· յԳ· դասարան Ղեմարանին ընկալեալ լեցին պատանիք 14—16 ամեայ, և ըստ այսմ համեմատութեան ի յաջորդ դասարանս։

10· Աշակերտք Ղեմարանի գիշերօթիկք են ամենեքեան, թէ ձրիավարժքն և թէ թոշակատուքն, որք ստանան զուսումն, սնունդ, հագուստ և զամենայն առողջապահական խնամս։

11· Թիւ ձրիավարժից, որ ի հաշիւ Մայր Աթոռոյս, որոշի ամ ըստ ամէ, ըստ բարեհաճ կարգադրութեան Վեհափառ Կաթուղիկոսի։

12· Աշակերտեալքն պարտին կանխաւ մատուցանել ի գրաւ՝ յայսկոյս կովկասեանք 50 ռուբլիս, իսկ եկեալքն յայլոց վիճակաց Ռուսաստանի կամ ի տար աշխարհաց՝ ռուբլիս 75, որպէս զի հատուսցի այդ ի ծախս վերադարձի նոցա ի հայրենիս, ևս և ի դին կորուսեալ և վատնեալ գրենոյ, հանդերձեղինաց և այլոց իրեղինաց։

13· Ուրբանչիւր թոշակատու վճարեսցէ ի տարին ռուբլիս 200, ի կրկին նուագս· ի Սեպտեմբեր և ի յունուար ամիսս։

14· Եթէ թոշակատու ոք ելցէ կամ արձակիցի մինչչև բոլորեալ ուսումնական կիսամեկին, գրաւական նորա ոչ դարձուսցի յետս։

15· Յամառնային արձակուրդս, եթէ ծնողք կամ բարերարք կամիցին տանել զորդիս իւրեանց ի հայրենիս, ծախք երթևեկութեանց նոցա լեցին ի ծնողաց կամ ի բարերարաց։

Համաձայն Կանոնադրութեան Հոգևոր Ն՛եմարանի Մայր Աթոռոյս, ուսմնաւարտք ի Թեմական Հոգևոր Դպրոցս ի կամին մտանել յառաջին Լսարան Ն՛եմարանիս, պարտաւորեալ գոլով ենթարկիլ քննութեան՝ յառարկայս կարևոր դատեալս ի կողմանէ Ուսումնական Խորհրդոյ Ն՛եմարանի, Խորհուրդն որոշեաց ծանուցանել ի գիտութիւն Տեսչութեանց և աւարտողաց ի Թեմական Հոգևոր Դպրոցս թէ՝ կարևոր առարկայք յորս ունին քննիլ ցանկացողք ի մտանել յառաջին Լսարան Ն՛եմարանիս, հետևեալքն են.

Կրօն
1, Եկեղեցական Պատմութիւն Հայոց, ընդարձակ:
2, Քրիստոնէական Վարդապետութիւն Հայ Եկեղեցւոյ, ընդարձակ:
3, Սրբազան պատմութիւն Հին և Նոր Կտակարանի, ընդարձակ:
4, Ծանօթութիւն Աւետարանացն Ղուկասու, Յովհաննու և Գործոց Առաքելոց:

Լեզուք
1, Հայոց լեզու, գրաբար շարադրութիւն.
2, Ռուսաց լեզու, շարադրութիւն.
3, Ֆռանսերէն լեզու, թարգմանութիւն:

Նիւթք ըստ դրպրոցական ծրագրի:

Այդքիկ առարկայք նշանակեալ են վասն այնոցիկ, որք ստացեալ գոլով զվկայական աւարտման դպրոցական ընթացից՝ ցանկան մտանել ի Ն՛եմարան՝ մինչչև անցեալ իցէ առաւել քան զամ մի ի թուականէ ստացմանն վկայականի. իսկ եթէ առաւել քան զամ մի անցեալ իցէ ի վերայ, յայնժամ ունին քննիլ յամենայն առարկայս դպրոցական ընթացից, համաձայն 7րդ յօդուածոյ ծանուցման Վարչութեանս:

ՏԵՍՈՒՉ ՀԵՄԱՐԱՆԻ Ա. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Ա. Զ. Դ.

Բաժանորդագրութիւն Արարատայ յօրէ հրատարակութեան (1868 մայիս) պարտաւորիչ գոլով բոլոր եկեղեցականաց Հայոց, ոմանք գործակալք ծածկումէին բաժանորդաց անուններն և ոմանք իսկ մինչև տարւոյն վերջը յետաձգում էին բաժանորդաց ցուցակն, որի համար Տպար. Ժողովս դիմեց Սինոդին և Թեմական Խորհուրդներին խնդրել վիճակների համայն եկեղեցականաց և գործակալաց ցուցակներն, նոյնպէս և գործակալներից առանձին առանձին ցուցակներ, զորս ստանալով ուղարկեց Յունուար և Փետրուար ամսոց Արարատները իւրաքանչիւր գործակալներին համաձայն ցուցակի Թեմական Խորհուրդների, որոց կուղարկուի ժապաւինեալ ընկալագիր, որպէս զի բաժանորդագներն ստանան և ներկայացնեն Թեմական Խորհուրդներին ընկալագրոց արմատի հետ:

Տպար. Ժողովը խնդրում է Արժ. գործակալներից և եկեղեցականներից, որ բաժանորդագինն ուղղակի Թեմական Խորհուրդներին ուղարկեն և ոչ թէ Տպար. Ժողովին կամ Սինոդին:

Ուսաստանից և արտասահմանից բաժանորդ գրուելու ցանկացողները թող բարեհաճեն դիմել Տպար. Ժողովին կանխիկ վճարելով բաժանորդագինն: